

ԷՋՄԻԱԾՆ

1971

ՄԲ



ԻԸ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

ԴԵԿՏԵՄԲԵՐ

1971



ՀՍՍՌ ԳԱ Հասարակական Գիտությունների Բաժանմունք
Отделение Общественных Наук Арм. ССР
Գրադարան
Библиотека
ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱՐՄԵՆԻԱ

ՀՐԱՄԱՆԱՐ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԲԵՌԱՅՆ ՀԱՅՈՑ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ԼԻՈՆ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ ՏԻԱՐ ԼՈՒԻ ՊՐԱԴԵԼԻՆ

ՆՈՐԻՆ ՎԱԵՄՈՒԹԻՒՆ ՏԻԱՐ ԼՈՒԻ ՊՐԱԴԵԼԻՆ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ ԼԻՈՆ ՔԱՂԱՔԻ, ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ, ՍԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԷՆ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԷՆ

Լիոն

Աստուծոյ ողորմութեամբ Մեզի համար հոգեկան վայելք մը եղաւ ճանչնալ Ձեզ իբրեւ քաղաքագլուխ պատմական Լիոն քաղաքին, փառքերու երկիր Ֆրանսայի փառահեղ ոստաններէն մէկուն, որուն զարգացման և գեղեցկացման համար մեծ եղած է Ձեր վաստակը վերջին տասնամեակներուն, իբրեւ փայլուն աշխատակիցը եւ ապա յաջորդը եւ շարունակողը մեծանուն Եդուարդ Էրիոյի գործին:

«Կամենալը կարենալ է» նշանաբանով ոգեշնչուած, Դուք անհահանջ եռանդով ու սիրով դէպի ձեր ժողովուրդը, Ձեր ամբողջ կեանքը զարդարեցիք յիշատակութեան արժանի իրագործումներով, իրագործումներ, որոնք ոսկի տառերով արձանագրուած պիտի մնան Լիոն քաղաքի պատմութեան գրքին մէջ:

Ձեր այս լուսաւոր առաքելութեան ճամփուն վրայ, ինչպէս Ձեր երջանկայիշատակ նախորդը, Դուք եւս Ձեր բարձր ուշադրութեան եւ բարի հոգածութեան առարկան դարձուցիք Լիոն քաղաքի հայ եկեղեցին ու անոր հաւատացեալ զաւակները, որոնք գրկաբաց ընդունուեցան մարդասէր Ֆրանսայի հողին վրայ առաջին համաշխարհային պատերազմէն յետոյ, երբ անոնք կարողացած էին փրկուիլ Արեւմտեան Հայաստանի մէջ, Օսմանեան կայսրութեան կողմէ կազմակերպուած ցեղասպանութենէն, որուն զոհ գացին մօտ երկու միլիոն հայ քրիստոնեաներ: Ահաւոր այդ արհաւիրքէն ազատած հայ գաղթականներ, ֆրանսական պանծալի եռագոյնի հովանիին ներքեւ գտան՝ կեանքի ապահովութիւն, եղբայրական վերաբերմունք եւ ամէն հնարաւորու-

թիւն աշխատելու եւ յառաջդիմելու: Գտան նաեւ ազատութիւնը ապրելու իրենց նախնեաց քրիստոնէական հաւատքով, իրենց բազմադարեան առաքելական եկեղեցւոյ սուրբ աւանդութիւններով:

Մենք, մեր ամբողջ եկեղեցիով, երախտապարտ ենք ապստամական Ֆրանսային:

Երախտապարտ ենք նաեւ Ձեզի որ իբրեւ քաղաքապետ, այնքան շատ օգնած էք եւ կը շարունակէք օգնել Լիոնի հայ եկեղեցական համայնքին եւ անոր կրօնական, կրթական ու մշակութային հաստատութիւններուն եւ ձեռնարկներուն:

Ձեր այս բարեկամական ջերմ զգացումներուն արտայայտութիւնը հանդիսացաւ նաեւ այն շքեղ ընդունելութիւնը զոր Դուք կազմակերպեցիք ձեր քաղաքապետարանի մեծ դահլիճին մէջ, անցեալ տարի մայիսի 25-ին Մեր Լիոն այցելութեան առթիւ:

Սոյն Մեր կոնդակով պարտք կը համարենք Ձեզի բերել Մեր երախտագէտ զգացումներու հաւաստին, Մեր յարգանքը եւ Մեր բարի մաղթանքները անձամբ Ձեզի եւ Ձեր ազնիւ տիկնոջը:

Մեր աղօթքը նաեւ որ Աստուած միշտ փառքի ու խաղաղութեան մէջ բարգաւաճ պահէ, պահպանէ ֆրանսական մեծ հայրենիքը և Ձեր անմման Լիոն քաղաքը:

Եւ իբրեւ արտայայտութիւն Մեր այս զգացումներուն եւ մաղթանքներուն, Ձեզի կը ներկայացնենք սուրբ Գրիգոր Լուսաւորչի Ա կարգի շքանշանը, զոր կը խնդրենք ընդունիլ եւ կրել Ձեր կուրծքին վրայ իբրեւ օրհնութիւն, քրիստոնէական հաւատքի հնագոյն կնդրոն սուրբ Էջմիածնէն:

Այսու, սիրով կը լիազօրենք Մեր հայրապետական պատուիրակ եւ Ֆրանսայի հայոց հոգեւոր պետ՝ գերաշնորհ տ. Սերովբէ արքեպիսկոպոս Մանուկեանը, որ հանձի Ձեզի յանձնել Մեր սոյն կոնդակը եւ շքանշանը:

«Աստուած յուսոյ լի արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ եւ խաղաղութեամբ, առաւելուլ ձեզ յուսով՝ զօրութեամբ Հոգւոյն սրբոյ» (Հռոմ. ԺԵ 13): Ամէն:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 30-ը նոյեմբերի
1971 փրկչական ամի,
եւ ի տումարիս հայոց ՌՆԻ,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 716



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ Տ. ՆԱՐԵԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՇԱՔԱՐՅԱՆԻՆ՝ ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԱՌԻԹՈՎ

ՎԱՋԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՋԳԻՍ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՋԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՏԻՐԱԽՆԱՄ ՇԻՐԱԿԱՅ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԵԱՅ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍՈՒՆ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ, ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՄԵՐՈՒՄ, ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ի ԳԱՀԷՆ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ

Գոհութիւն Ամենակալին Աստուծոյ, որ Իր ամենազօր սուրբ Աջով, շէն ու անսասան է պահպանում Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցին եւ համայն ժողովուրդը հայոց, ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի:

Մենք անչափ մխիթարուած ենք որ, անցեալ դարերի կործանարար արհաւիրքներից յետոյ, այսօր վերստին շէն եւ կանգուն են նաեւ պատմական Շիրակի սուրբ տաճարները, իբրեւ աղօթքի եւ ուխտի նուիրական վայրեր, իբրեւ պանծալի ճարտարապետական կոթողներ:

Սիրելիներ Մեր, այսօր Մեր սիրտը առաւել ուրախ է, որովհետեւ սոյն կոնդակաւ ձեզ բոլորիդ ի գիտութիւն յայտնում ենք որ Տիրոջ ողորմութեամբ, նշանակել ենք ձեր թեմի հաւատարիմ նոր հոգեւոր առաջնորդ յանձին Մայր Աթոռս միաբան հոգեշնորհ տ. Նարեկ վարդապետ Շաքարյանի, որ սկսեալ սոյն ամսի հինգից ստանձնելու է թեմիդ եկեղեցիների եւ եկեղեցական համայնք-

տարվեց հոգեհանգստյան մասնավոր արարողություն՝ ի հիշատակ Մարդասիրական ճեմարանի հիմնադիրների, բարերարների և կրթական մշակների:

Դեկտեմբերի 8-ին, չորեքշաբթի օրը, Մայր Աթոռում, հոգևոր ճեմարանի հարկի տակ, նշվեց նույնպես Մարդասիրական ճեմարանի 150-ամյակը:

Հայ դպրոցի և մանկավարժության պատմության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանը, որը հիմնադրվել է 1821 թվականի ապրիլի 2-ին մայր հայրենիքից հեռու, Հնդկաստանի հյուրընկալ հողի վրա, Գանգեսի ափերին, հայոց հավատի լույսով, հայ մշակույթի և մեր հոգևոր արժեքների ոգով և հայոց պատմության շնչով դաստիարակելու համար օտար երկինքների տակ ծնված հայ նոր սերնդի զավակներին:

Մարդասիրական ճեմարանի հիմնադրումը ու նրա 150-ամյա գործունեությունը խոսուն վկայություն են մեր ժողովրդի՝ դեպի ուսումն ու առաջադիմությունն ունեցած սիրո և պատասխանատվության զգացմունքներին:

Չնայած շատ հաճախ մեր երկրում տիրող տնտեսական ու քաղաքական ծանր պայմաններին, մեր ժողովուրդը հնագույն ժամանակներից սկսած և՛ մայր հայրենիքում, և՛ նրա սահմաններից դուրս՝ գաղթօջախներում, հիմնել է տարբեր աստիճանի և տիպի բազմաթիվ դպրոցներ:

Մեր այսօրվա սերնդի և մեր օրերի հայ ժողովրդի պատմության համար չափազանց թանկ է հայ դպրոցի պատմության մեջ Կալկաթայի Մարդասիրական ճեմարանի հիմնադրությունը և նրա 150-ամյա բեղուն գործունեությունը, որպես հայ մանկավարժության հնագույն և կարևորագույն օջախներից մեկի:

Հնդկահայ գաղութը միշտ մտահոգվել է նոր սերնդի քրիստոնեական ու հայեցի, հայրենասիրական դաստիարակության, հայ մշակույթի, մեր հոգևոր արժեքների պահպանման ու զարգացման շնորհակալ գործով:

Հնդկահայ գաղութի շուրջ 300-ամյա գործունեության ընթացքում եկեղեցական-հոգևոր, մշակութային, կրթական, հայրենասիրական, հրատարակչական, գաղափարախոսական ձեռնարկներն ու աշխատանքները միշտ գաղութի ուշադրության կենտրոնում են եղել, և հնդկահայն այդ կարևոր ձեռնարկների հաջողության համար չի զլացել երբեք իր նյութական ու բարոյական աջակցությունը՝ առաջնորդված ազգային հառաջդիմության և դաստիարակության մտորումներով:

Կալկաթայի առաջին հայագիր դպրոցի բացումը կապվում է կալկաթաբնակ Հարությունն Գալստյանի անվան հետ: 1821 թվականի ապրիլի 2-ին Աստվածատուր Մուրադիանցյանի իշխանական նվիրատվությամբ, Հարությունն Գալստյանի, Մնացական Վարդանյանի օգնությամբ և Կալկաթայի համայնքային խորհրդի որոշումով ու ցանկությամբ բացվում է Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանը, հայոց եկեղեցու անմիջական հարևանությամբ:

Ճեմարանն իր բացված օրից ունեցել է հմուտ և անձնվեր տեսչական-մանկավարժական կազմ, որի մեջ աչքի են ընկել Հարությունն Գալստյանը, Հովհաննես Հարությունյանը, Հովհաննես Ավդալյանը, Իսահակ Ազնավուրյանը, Մարտիրոս Դավթյանը, Մեսրոպ Թաղիադյանը, Թադեոս Տեր-Ստեփանյանը, Հովսեփ քահանա Ստեփանյանը, Գևորգ վրդ. Թուրյանը, Թադեոս Խաչիկ Ավետումը, Արաթուն Թադեոս Օուենը, Մեսրոպ Սեթը և ուրիշ պայծառ անուններ:

1921 թվականի ապրիլին նշվում է ճեմարանի հիմնադրության 100-ամյակը:

1963 թվականի նոյեմբերին երբ Հայոց Հայրապետը պաշտոնական այցով գտնվում էր Հնդկաստանում, դեկտեմբերի 3—17 օրերին այցելում էր Կալկաթա և Իր օրհնաբեր ներկայությամբ միսիթարում և ոգեշնչում հայ համայնքը:

Հայոց Հայրապետը այցելում էր այս առիթով Մարդասիրական ճեմարանն ու Դավթյան օրիորդաց վարժարանը, ծանոթանում կրթական զույգ օջախների ուսումնական ծրագրին, հանդիպում ունենում դասախոսական կազմի և ուսանողության հետ ու նշում, որ **«սուրբ Էջմիածնեն Մեր տարած օրհնությունը և վերածնած մայր հայրենիքի կենդանի իրականությունն և ծաղկումը, հոգեկան ամուր պատվանդաններ և կյանքի աղբյուրներ կհանդիսանան հնդկահայ պատվական ժողովուրդի համար»:**

Արդարև, ազգիս Վեհափառ Հայրապետը ամեն ինչ անում է՝ Կալկաթայում բարձր մակարդակի վրա պահելու համար եկեղեցական-կրթական գործը, հայրապետական պատվիրակների նշանակումով, կոնդակներով, եկեղեցական վարչության հետ թղթակցություններով:

Կալկաթայի հայությունը այսօր արժանավոր ժառանգն է իր նախնիների ավանդությունների, հավատի, էջմիածնասիրության և հայրենասիրության:

Թվով փոքր, բայց անցյալով ու սրտով մեծ այս համայնքը հերոսական ու սքր-

տագին ջանքեր է թափում՝ ապրելու համար u. Էջմիածնի օրհնության ներքո, վերածնած հայոց աշխարհի պայծառ իրականությամբ և տեսլականով:

«Սրբո հորն մերո Գրիգորի Լուսավորչի գահից,—գրում է Հայոց Հայրապետը Իր կոնդակում,—**և վերածնված Մայր Հայաստանից Մենք՝ կաթողիկոս Ամենայն Հայոց, ողջունում ենք և օրհնում հարյուր հիսուն տարիների պատմությունն ու վաստակը Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանի, սրտաբուխ մաղթանքներով, որ նաև մեր օրերում նա շարունակի իր կրթական-մշակութային հայաշունչ առաքելությունը ի փառս հայ անվան»:**

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, հանուն իր ընթերցողների, ջերմորեն շնորհավորում է Կալկաթայի հայ համայնքը, Մարդասիրական ճեմարանի տեսչությանը, դասախոսական կազմին և ուսանողությանը մեծ հոբելյանի առիթով սրտագին բարեմաղթություններով, որ հեռավոր Գանգեսի ափերի վրա միշտ վառ մնան ջահը Լուսավորչի հավատի, պաշտամունքը՝ հայոց լեզվի և մշակույթի, ոգին՝ հայոց պատմության, շունչը՝ վերածնած հայոց աշխարհի:



ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռում ստացվեց Անթիլիասի կիլիկյան Աթոռի գահակալի 20 նոյեմբեր 1971 թվակիր «Թուղթ շրջաբերական»-ը, որը մի անգամ ևս գալիս է հաստատելու վերջին տասնհինգ տարիների ընթացքում այդ Աթոռի որդեգրած ոգին ու գործելակերպը հայ եկեղեցու միության և հայ ժողովրդի միասնության սկզբունքների դեմ:

Մնում է ցավ հայտնել, որ Անթիլիասի Աթոռը մի կողմից ձևացնում է իրեն իբր համերաշխասեր, սակայն փաստորեն գործում է բաժանարար ոգով և միշտ փորձում է հակադրվել ու մրցակից դառնալ Հայաստանյայց եկեղեցու գլուխ Մայր Աթոռ ս. Էջմիածնին:

Մի անգամ ևս հրապարակավ բացահայտվում է, թե ոչինչ չի փոխվել Անթիլիասի ափերին. անգամ նրա չորս ներկայացուցիչների վերջերս ս. Էջմիածին այցելությունից հետո:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

16-ը դեկտեմբերի 1971 թ.,
Ս. Էջմիածին

ՂՊՏԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ Ն. Ս. ՇՆՈՒՏԱ Գ. ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ

1971 թվականի նոյեմբերի 14-ին Կահիրեում, ղպտիների ս. Մարկոս Մայր տաճարում, տեղի է ունենում ղպտի քույր եկեղեցու նորընտիր Պատրիարք Ն. Ս. Շնուտա Գ-ի գահակալության հանդիսությունը:

Նույն հանդիսությանը մասնակցելու համար Հայոց Հայրապետը ևս ընդունում էր սիրալիր հրավեր և նշանակում հայրապետական մասնավոր պատվիրակություն՝ հա եկեղեցու և Իր անունից մասնակցելու նորընտիր Պատրիարքի գահակալության հանդիսությանը:

Պատվիրակության կազմում էին՝ Եգիպտահայոց առաջնորդական տեղապահ տ. Զավեն եպս. Չինչինյանը, տ. Ներսես ծ. վրդ. Փապուճյանը, Կահիրեի և Ալեքսանդրիայի թեմական ժողովների ատենապետներ տիար Հովհաննես Քեհյայանը և Հարություն Ամատունին:

Նոյեմբերի 14-ին, կիրակի օրը, Կահիրեի ս. Մարկոս Մայր տաճարում տեղի է ունենում նորընտիր Պատրիարքի գահակալության պաշտոնական հանդիսությունը, որին մասնակցում է տ. Զավեն սրբազանը՝ եկեղեցական լրիվ զգեստավորման մեջ, ի շարս քույր եկեղեցիների այլ ներկայացուցիչների:

Գահակալության հանդիսության որոշ մի պահի և ըստ ծրագրի ս. խորանի վրա տ. Զավեն սրբազանը, տ. Ներսես ծ. վարդապետի առընթերակայությամբ, կատարում է Հայրապետական մաղթանքի աղոթքն ու ապա միասին երգում «Ուրախ լեր ս. եկեղեցի» շարականը և Տերունական աղոթքը:

Հավարտ ս. պատարագի նորընտիր Պատրիարքին շնորհավորում են հանդիսությանը ներկա քույր եկեղեցիների հոգևոր պետեր և եկեղեցական ներկայացուցիչներ, այդ թվում՝ Եթովպիայի Տ. Թեոփիլոս Պատրիարքը, Տ. Խորեն Ա կաթողիկոսը, Տանն Կիլիկիո, Անտիոքի ասորի եկեղեցու Տ. Իգնատիոս Եագուպ Պատրիարքը, Ռումինիայի Տ. Ժուստինիան Պատրիարքը, Պողոս Զ Պապի ներկայացուցիչ կարդինալ Վիլլեբրանդը, ռուս պրավոսլավ եկեղեցու Տ. Պիմեն Պատրիարքի ներկայացուցիչ Երմոգինես եպիսկոպոսը, ղպտի-կաթոլիկ եկեղեցու Տ. Ստեփանոս Սիտարաս կարդինալ-Պատրիարքը, Կ. Պոլսի տիեզերական Պատրիարք Աթանագորասի ներկայացուցիչ Յագոպոս միտրոպոլիտը, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Է. Կ. Բլեյկը և այլ պաշտոնական անձինք:

Հանուն Հայոց Հայրապետի նորընտիր Պատրիարքին ջերմորեն շնորհավորում է հայ եկեղեցու և Մայր Աթոռի ներկայացուցիչ տ. Զավեն եպս. Չինչինյանը:

Վերջում շնորհակալության ջերմ խոսք է ասում նորընտիր Տ. Շնուտա Գ Պատրիարքը:

Այնուհետև հայ եկեղեցու ներկայացուցիչները մասնակցում են գահակալության առթիվ կազմակերպված պաշտոնական ընդունելություններին և տեսակցություններին:

Նոյեմբերի 14-ին, կիրակի օրը, երեկոյան ժամը 18-ին, մեր հայրապետական պատվիրակությունը այցելում է նորընտիր Պատրիարքին՝ հանուն Ամենայն Հայոց Հայրապետի՝ Նրան ողջունելու և շնորհավորելու.

Տ. Շնուտա Գ Պատրիարքը, շրջապատ-

Նորին Սրբություն Տ. Շնուտա Գ. Սրբազան Պատրիարքը հայ եկեղեցու պատվիրակության հետ

ված Սինոդի բարձրաստիճան անդամներով, ջերմորեն ընդունում է Հայոց Հայրապետի և հայ եկեղեցու ներկայացուցիչներին:

Տ. Զավեն եպիսկոպոսը անձամբ նորընտիր Պատրիարքին է ներկայացնում Հայոց Հայրապետի եղբայրական, սրտագին շնորհավորություններն ու բարեմաղթությունները՝ նշելով նաև Մայր Աթոռի, Նրա Գահակալի և ողջ հայ եկեղեցու ուրախությունը այս արժանավոր ընտրության առթիվ և այն քրիստոնեական եղբայրական սերը, որ ողջ հայ հավատացյալ ժողովուրդը տածում է դեպի դավանակից քույր եկեղեցին, որը «իր անապատական հայրերով, իր բազմաթիվ մարտիրոսներով, իր պատմության ընթացքին փառավոր էջեր արձանագրած է և շատ նմանություններ ունի Հայաստանյայց եկեղեցվո»:

Այս առթիվ, հանուն Հայոց Հայրապետի, տ. Զավեն սրբազանը Շնուտա Պատրիարքին է հանձնում հայրապետական թանկագին նվեր՝ ձույլ ոսկուց, հայկական ոճով Մայր Աթոռում պատրաստված ս. Կույսի արտաքանդակ սրբապատկերը և «Հայկական եկեղեցիներ» ալբոմը:

Ջերմ զրույցի ժամանակ Տ. Շնուտա Գ. Սրբազան Պատրիարքը խնդրում է տ. Զավեն եպիսկոպոսին Իր զգացված և խորին շնորհակալությունն ու երախտագիտությունը հայտնել Ամենայն Հայոց Հայրապետին, որ բարեհաճել է անձամբ էլ հեռագրով շնորհավորել Իրեն և՛ Իր անունից, և հանո՛ւն հայ եկեղեցու մասնավոր պատվիրակություն ուղարկել գահակալության սույն հանդիսությանը՝ բաժանելով քույր եկեղեցու հոգևոր ուրախությունը:

Նույն օրը, երեկոյան ժամը 20-ին, հայրապետական պատվիրակությունը մասնակցում է Կահիրեում «Ալ Թահիրիր» սրահում գահակալության առթիվ տրված պաշտոնական ընդունելությանը: Տ. Զավեն սրբազանն ընդունելության միջոցին, հանուն Հայոց Հայրապետի, խոսք առնելով ասում է: «Ամենքս ալ լեցված ենք հոգևոր ուրախու-

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. ՇՆՈՒՏԱ Գ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔԸ

թյամբ, երբ Ձերդ Ամենապատվության գահակալությամբ ս. Մարկոսի պատմական Աթոռին վրա կբարձրանաք իբրև 117-րդ Պատրիարք ու ղպտի ուղղափառ քույր եկեղեցին անգամ մըն ալ կփառավորվի: Հանուն Հայաստանյայց ուղղափառ քույր եկեղեցվո և անոր Պետին՝ Ն. Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետին կներկայացնենք Ձերդ Ամենապատվության ջերմ շնորհավորություններ, աղոթելով Բարձրյալն Աստուծո, որ ղպտի ուղղափառ եկեղեցին միշտ պայծառ ու բարգավաճ ըլլա, անսասան մնալով իր հավատքի վեմին վրա»:

Հայրապետական պատվիրակությունը մինչև նոյեմբերի 16-ը մասնակցում է գահակալության առթիվ կազմակերպված այլ հանդիսություններին:

Ամենապատիվ Տ. Շենուտա Գ նորընտիր Պատրիարքը ծնվել է 1923 թվականին, վերին Եգիպտոսում և, Կահիրեի համալսարանի գրականության ֆակուլտետն ավարտելուց հետո, երկար ժամանակ զբաղվել է ուսուցչությամբ: 1954 թվականին ձեռնադրվել է կուսակրոն քահանա և ստացել է աստվածաբանության վկայական:

1962 թվականին եպիսկոպոս է ձեռնադրվել:

Տ. Շենուտա Պատրիարքը բազմակողմանիորեն պատրաստված, հավատավոր հոգևորական է: Նա հեղինակն է մի շարք կրոնական, եկեղեցագիտական լուրջ ուսումնասիրությունների:

Քույր եկեղեցու նորընտիր Պատրիարքը միաժամանակ հայ եկեղեցու և հայ ժողովրդի անկեղծ ու ազնիվ բարեկամներից մեկն է:

Հայ և ղպտի ժողովուրդներն ու եկեղեցիները միմյանց հետ կապված են սուրբ Ավետարանի լույսի ներքո ի Քրիստոս՝ դարավոր եկեղեցական ու մշակութային անխախտ եղբայրական կապերով:

Այդ բարեկամությունն ու համագործակցությունը կշարունակվեն նաև մե՛ր օրերին, էկումենիկ շարժման այս ժամանակաշրջանում՝ ի փառս Քրիստոսի և Նրա եկեղեցու:

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Դեկտեմբերի 3-ին, ուրբաթ.—Այսօր, ժամը 14-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի հերթական նիստը, որին ներկա են լինում հանձնաժողովի անդամներ՝ ճարտարապետներ պրոֆ. **Վարազդատ Հարությունյանը**, պրոֆ. **Կարո Ղաֆադարյանը**, **Ռաֆայել Իսրայելյանը**, պրոֆ. **Կոնստանտին Հովհաննիսյանը**, ժողովրդական նկարիչ **Գրիգոր Խանջյանը**, **Բաղդիկ Արզումանյանը**, **Արծրուն Գալիկյանը**:

Նիստին ներկա են լինում նաև Մայր Աթոռի ինժեներ-շինարար Ծիլվան Խաչատրյանը, նրա օգնական Մարտին Կարապետյանը և ճարտարապետ Վաչե Խաչատրյանը:

Նիստից առաջ Վեհափառ Հայրապետը ողբակոչում է հիշատակը ճարտարապետական հանձնաժողովի նախագահ ողբացյալ **Միքայել Մազմանյանի** և «Հոգոց» է արտասանում: Ճարտարապետ Միք. Մազմանյանը 1957 թվականից սկսած գլխավորում էր ճարտարապետական հանձնաժողովը:

Սույն նիստում ճարտարապետական հանձնաժողովի նախագահ է հաստատվում պրոֆ. Վարազդատ Հարությունյանը և քարտուղար՝ ճարտարապետ Արծրուն Գալիկյանը:

Վեհափառ Հայրապետը ջերմորեն շնորհավորում է նորընտիր նախագահին և քարտուղարին՝ մաղթելով նորանոր հաջողություններ Մայր Աթոռի շինարարական ձեռնարկների Է՛լ ավելի արդյունավետ կենսագործման համար:

Ճարտարապետական հանձնաժողովի հարգելի մյուս անդամները ևս սրտանց շնորհավորում են Վ. Հարությունյանին և Ա. Գալիկյանին և խոստանում շարունակել ճարտարապետ Մ. Մազմանյանի գլխավորած Մայր Աթոռի շինարարական ձեռնարկները՝ ի պայծառություն ս. Էջմիածնի և ի մխիթարություն Հայոց Հայրապետի:

*
* *

Դեկտեմբերի 4-ին, շաբաթ.—Այսօր Վեհափառ Հայրապետից հրաժեշտ է առնում ուխտավորաբար ս. Էջմիածնում գտնվող Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակի փոխանորդ տ. Գյուտ ծ. վրդ. Նագաշյանը և մեկնում, Բեյրութի վրայով, Փարիզ՝ իր պաշտոնատեղին:

*
* *

Դեկտեմբերի 5-ին, կիրակի.—Այսօր, ժամը 14-ին, Վեհարանում Հայոց Հայրապետը բարեհաճում է ընդունել այցելությունը Հունգարիայի Կենտրոնական թանգարանի տը-

նորեն Յանոս Դոմոյոր Տոռնայի և նկարիչ Հեժե Ֆերենցի, որոնց ուղեկցում էին պրոֆ. Ռուբեն Պարոնյանը և իր տիկինը, նկարիչների միության նախագահի տեղակալ Հռիփսիմե Սիմոնյանը:

Հայոց Հայրապետի և հարգելի հյուրերի միջև տեղի է ունենում ջերմ զրույց:

*
* *

Դեկտեմբերի 8-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 20-ին, Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով ներկա է լինում Երևանում, օպերայի և բալետի ակադեմիական թատրոնում, երգահան Ալեքսանդր Սպենդիարյանի ծննդյան 100-ամյակին նվիրված սիմֆոնիկ համերգին:

Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին Մայր Աթոռի միաբաններ, հոգևոր ճեմարանի դասախոսներ և ուսանողներ:

*
* *

Այսօր, կեսօրվա ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետին է այցելում ուխտավորաբար մայր հայրենիքում գտնվող ամերիկահայ ֆիզիկոս Զավեն Կիրակոսյանը, որին ուղեկցում էր Երևանի «ԱրՈւս»-ի տնօրեն Արտյոմ Ալիխանյանը:

Հայոց Հայրապետի և անվանի հայ գիտնականների միջև տեղի է ունենում ջերմ ու հետաքրքիր զրույց՝ արտագին մթնոլորտում:

*
* *

Այսօր Վեհափառ Հայրապետից հրաժեշտ է առնում Ռումինիայի և Բուլղարիայի թեմի առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը և մեկնում Բուխարեստ՝ իր պաշտոնատեղին:

*
* *

Դեկտեմբերի 9-ին, հինգշաբթի.—Այսօր, ժամը 13-ին, Վեհափառ Հայրապետը, տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի և տ. Մուշեղ վրդ. Պետիկյանի ուղեկցությամբ, այցելում է Երևանի Նկարիչների տուն՝ նկարիչ Մարիամ Աղամազյանի անհատական ցուցահանդես:

Հարգելի արվեստագիտուհին այս ուրախ առիթով մի նկար է նվիրում Վեհափառ Հայրապետին իր ստեղծագործություններից:

*
* *

Դեկտեմբերի 12-ին, կիրակի.—Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Աղան վրդ. Բալիոզյանը և քարոզում «Օրինեալ ես դու ի կանայս և օրհնեալ է պտուղ որովայնի քոյ» բնաբանով:

*
* *

Դեկտեմբերի 16-ին, հինգշաբթի.—Այսօր, ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետին է այցելում Հայաստանում հյուրընկալվող իրանական պատվիրակությունը, որը գլխավորում էր Իրանի լեզվի ակադեմիայի իսկական անդամ, գիտության և բարձրագույն ուսումնական հաստատությունների մինիստրի նախկին տեղակալ, Թեհրանի համալսարանի պրոֆեսոր Մոհամեդ Մուկադամը իր տիկնոջ հետ:

Հայոց Հայրապետի և հարգարժան հյուրերի միջև տեղի է ունենում բարեկամական զրույց:

*
* *

Այսօր, երեկոյան ժամը 18-ին, Վեհափառ Հայրապետի նախագահության ներքո, հոգևոր ճեմարանի դահլիճում տեղի է ունենում նիստ՝ նվիրված Մայր Աթոռի և Անթիլիասի կիլիկյան Աթոռի հարաբերությունների հարցին:

Նիստին ներկա են լինում Մայր Աթոռի ու Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, թեմական առաջնորդները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու լսարանական բաժնի ուսանողները, վանքի պաշտոնեությունը, Երևանի, Լենինականի եկեղեցիների քահանայից դասը, թեմական և եկեղեցական խորհուրդների անդամները և այլ հրավիրյալներ:

Նիստը ներածական խոսքով բացում է տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանը:

Այնուհետև Մայր Աթոռի և կիլիկյան Աթոռի հարաբերությունների հարցին նվիրված ընդարձակ և ամբողջական զեկույցով հանդես է գալիս «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը:

Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի քարտուղար Պ. Շահբազյանը զեկուցման ժամանակ ընթերցում է Մայր Աթոռի և Անթիլիասի միջև փոխանակված մի շարք փաստաթղթեր:

Ապա Գերագույն հոգևոր խորհրդի անդամ պրոֆ. Ս. Մելիքսեթյանը, որը որպես ներկայացուցիչ մասնակցել էր Մայր Աթոռում նոյեմբերի 9—16 օրերին Անթիլիասի ներկայացուցիչների հետ կայացած հանդիպմանը, խոսում է այդ հանդիպումից ստացած իր տպավորությունների մասին:

Նիստը եզրափակում է Վեհափառ Հայրապետը՝ օրհնության խոսքով:

*
* *

Դեկտեմբերի 17-ին, ուրբաթ.—Այսօր, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը, տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանի, տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի, տ. Նարեկ վրդ. Շաքարյանի, տ. Աղան վրդ. Բալիոզյանի ընկերակցությամբ, Երևանում, օպերայի և բալետի ակադեմիական թատրոնում, ներկա է լինում երգահան Ալեքսանդր Սպենդիարյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հանդիսավոր նիստին և երեկոյան համերգին:

*
* *

Դեկտեմբերի 19-ին, կիրակի.—Այսօր, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել այցելությունը Հալեպի Հ. Բ. Ը. միության երիտասարդաց ընկերության «Սպենդիարյան» երգչախմբի, որը հյուրաբար գտնվում է մայր հայրենիքում մեծ երգահան Ալեքսանդր Սպենդիարյանի ծննդյան 100-ամյակի ուրախ առիթով:

Երգչախմբի երկսեռ անդամները հոտընկայս, խանդավառ ծափերով ողջունում են Հայոց Հայրապետի ներկայությունը Վեհարանում և աջահամբույրով իրենց որդիական երախտագիտությունն ու հոգեկան բերկրանքն արտահայտում:

Հանուն Հալեպի Հ. Բ. Ը. միության տեղական մասնաճյուղի երիտասարդաց կազմակերպության և երգչախմբի անդամների, Հայոց Հայրապետի շնորհաբաշխ ներկայությունը ողջունում են խմբի ղեկավար Ժիրայր Իսկենյանն ու երգչախմբի վարչության ատենապետ Կարպիս Վարդանյանը՝ ջերմ, էջմիածնասիրական ու հայրենաշունչ խանդավառ ճառով:

Խորապես հուզված Իր հոգևոր զավակների այս ինքնաբուխ ու անկեղծ արտահայտություններից, Հայոց Հայրապետը ողջունում է երգչախմբի անդամ-անդամուհիներին, օրհնում բոլորին և տալիս հայրապետական Իր հայրենաշունչ պատգամը՝ ապրելու համար սիրուքի պայմաններում ս. Էջմիածնի օրհնության ներքո և հայոց վերածնած աշխարհի վերազարթոնքի ճշմարիտ զգացմունքով:

Երգչախումբը կատարում է խանդավառ ու տպավորիչ կերպով Հայրապետական մաղթերգը:

Այնուհետև երգչախմբի անդամները, Հայոց Հայրապետի հետ միասին, թափորով ուղղվում են Մայր տաճար՝ ներկա լինելու սուրբ պատարագին:

Օրվա ս. պատարագը մատուցում է տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

Երգչախմբի անդամները Մայր տաճարում իրենց աղոթքն ու ուխտը կատարելուց հետո, երկյուղած բարեպաշտությամբ ս. հաղորդություն են ստանում և, հավարտ ս. պատարագի, անմոռանալի տպավորություններով հրաժեշտ առնում Հայոց Հայրապետից և Մայր Աթոռից:

*
* *

Այսօր, ժամը 15-ին, Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունում է այցելությունը մեծանուն երգահան Արամ Խաչատրյանի և նրա հարգելի կնոջ:

Հայոց Հայրապետի և տաղանդավոր երգահանի միջև տեղի է ունենում ջերմ ու սրտագին զրույց:

*
* *

Դեկտեմբերի 26-ին, կիրակի.—Այսօր՝ Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Այսօր, ժամը 14-ին, Վեհափառ Հայրապետին է այցելում ամերիկահայ երաժշտագետ Համբարձում Բերբերյանը, իր տիկնոջ հետ, որը մեծ երգահան Ալեքսանդր Սպենդիարյանի ծննդյան 100-ամյակի հոբելյանական առիթով հրավիրված էր մայր հայրենիք:

Վեհափառ Հայրապետի և հայրենասեր երգահանի միջև տեղի է ունենում սրտագին զրույց՝ ջերմ մթնոլորտում:

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ԿԱԼԿԱԹԱՅԻ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅԱՆ 150-ԱՄՅԱԿԻՆ

Ս. ՊԱՏԱՐԱԳ, ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ,
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ԵՎ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Այս տարի լրացավ հնդկահայ գաղութի Կալկաթա քաղաքի հայոց Մարդասիրական ճեմարանի հիմնադրման 150-ամյակը:

Ազգիս Վեհափառ Հայրապետը 1971 թվականի հունիսի 14-ին սույն երջանիկ առիթով գրել էր Իր սրբատառ կոնդակը՝ գնահատանքի և օրհնության արժանացնելով մեկ ու կես դար շարունակ մեր ազգի մանուկներին գիտություն, լույս, քրիստոնեական ու հայեցի դաստիարակություն ջամբող ազգային-կրթական այս հաստատությանը:

Դեկտեմբերի 5-ին, կիրակի: Հավատացյալների խուռներամ բազմությունը լցրել է Մայր տաճարը, որտեղ պաշտվում է ս. պատարագ, որին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը: Պատարագում է տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը:

«Հայր մեր»-ից առաջ տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը Մայր տաճարի Ավագ սեղանից մեծ հանդիսավորությամբ ընթերցում է Կալկաթայի Մարդասիրական ճեմարանի 150-ամյակին նվիրված Վեհափառ Հայրապետի կոնդակը:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ կատարվում է հոգեհանգիստ՝ ի հիշատակ այդ կրթական հաստատության բարերարների և մշակների:

Դեկտեմբերի 8-ին, չորեքշաբթի: Ցերեկվա ժամը 15.30-ին հոգևոր ճեմարանի դահլիճում տեղի է ունենում հանդիսություն՝ նվիրված Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանի գործունեության 150-ամյակին:

Վեհափառ Հայրապետը որոշյալ ժամին, շրջապատված Մայր Աթոռի բարձրաստիճան միաբաններով, մուտք է գործում դահլիճ:

Հանդիսությանը ներկա են լինում Մայր Աթոռի միաբանները, ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի առաջնորդ տ. Տիրայր եպս. Սարտիկյանը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, Մայր Աթոռի պաշտոնեությունը և բազմաթիվ հրավիրյալներ:

Բոլոր ներկաները հոտնկայս ունկնդրում են Հայաստանի պետական հիմնի նվագը: Հոգևոր ճեմարանի երգչախումբը, եվրոպական երաժշտության դասատու Խորեն Մելիքանեջյանի ղեկավարությամբ, կատարում է «Որք զարդարեցին» շարականը:

Հանդեսը ներածական խոսքով բացում է Մայր տաճարի լուսարարապետ, Հնդկաստանի և Հեռավոր Արևելքի հայրապետա-

կան պատվիրակ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը: Սրբազանը նշում է, որ Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանը մասնավորաբար իր հոգուն շատ մոտ է, որովհետև ինքը մեկ ու կես տարի պաշտոնավարել է այնտեղ և մոտիկից շփվել ազգային այդ հաստատության հետ:

Օրվա հիմնական բանախոսությամբ հանդես է գալիս Գերագույն հոգևոր խորհրդի անդամ Հովհաննես Թոփուզյանը, որն իր զեկուցման մեջ վեր է հանում Կալկաթայի Մարդասիրական ճեմարանի, ինչպես նաև հնդկահայ գաղութի կատարած մեծ դերն ու նշանակությունը հայ ժողովրդի հոգևոր, մշակութային և քաղաքական ասպարեզներում:

Այնուհետև հոգևոր ճեմարանի ուսանողներն իրենց սրտառուչ արտասանություններով և երգերով ջերմացնում են ներկաների հոգիները:

Ա լսարանի ուսանող Գևորգ Առաքելյանը դաշնամուրի վրա կատարում է Գ. Սարաջյանի մշակած ժողովրդական մեղեդիներից մեկը, Գ դասարանի ուսանող Կիրակոս Հովնանյանը՝ Կոմիտասի «Կռունկ»-ը, Բ լսարանի ուսանող Ավետիք Արաբաջյանը արտասանում է Հ. Սահյանի «Հայաստանը երգերի մեջ» բանաստեղծությունը, իսկ նույն լսարանի ուսանող Հակոբ Խաչատրյանը՝ Գ. Էմինի «Երգ կռունկի մասին» ոտանավորը:

Ապա հոգևոր ճեմարանի երգչախումբը կատարում է հետևյալ խմբերգերը. «Հայրենիքիս հետ» (խոսք՝ Հովհ. Թումանյանի, երաժշտությունը՝ Ալ. Հարությունյանի), «Ազգ փառապանծ» (խոսք՝ Ա. Գրաշու, երաժշտությունը՝ Ա. Բաբաջանյանի) և «Էրեբունի» (Խոսք՝ Գ. Սևակի, երաժշտությունը՝ Էդ. Հովհաննիսյանի):

Այնուհետև օրհնության խոսքով հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը և ասում, որ գաղթականությունը հայ ժողովրդի դարերի ուղեկիցն է եղել մինչև 1920 թվականը: Սակայն հայ ժողովուրդն իր դժբախտությունը, տանջանքը գաղութներում վերածել է հաղթանակի՝ իր դպրոցներով, եկեղեցիներով, հայեցի կյանքով և մշակույթով: Այս առումով Վեհափառ Հայրապետը չափազանց բարձր է գնահատում հնդկահայ գաղութի դերն ու նշանակությունը հայապահպանման մեծ ու շնորհակալ գործում:

Վեհափառ Հայրապետը մասնավորաբար շեշտում է այն միտքը, թե հնդկահայ գաղութը ոչ միայն ձգտել է գաղութում վառ պահել հայկական ոգին, այլև բազմիցս աջակցել է Հայաստանի ազատագրական շարժումներին:

Իր խոսքի վերջում ազգիս Վեհափառ Հայրապետը նշում է, որ հնդկահայ գաղութում կան բազմաթիվ շնորհալի ազգայիններ, որոնց ջանքերով գաղութում գոյատևում է հայկական ոգին, և որոնք սերտ կապ են պահպանում ս. Էջմիածնի, մայր հայրենիքի հետ, առանց որոնց հնարավոր չէ հայ ապրել:

Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանի 150-ամյակին նվիրված հանդիսությունն ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով:



ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ ՇԻՐԱԿԻ ԹԵՄՈՒՄ

Ազգիս Վեհափառ Հայրապետի նախագահությամբ գումարված Գերագույն հոգևոր խորհրդի նիստը, որը տեղի ունեցավ սույն թվականի նոյեմբերի 15-ին, նկատի առնելով Շիրակի թեմի առաջնորդ տ. Մաշտոց եպս. Թաջիրյանի խնդրանքը իրեն ազատ արձակելու առաջնորդական պաշտոնից, առողջական վիճակի և առաջացած տարիքի հետևանքով, որոշեց ընդառաջել դիմումին և կանչել նրան հանգստի ս. Էջմիածին և նրա փոխարեն առաջնորդական տեղապահ նշանակել Մայր Աթոռի միաբան տ. Նարեկ վրդ. Շաքարյանին:

Տ. Մաշտոց եպս. Թաջիրյանը 12 տարիներ հավատարիմ գործունեությամբ ղեկավարել է Շիրակի թեմը՝ արժանանալով Հայոց Հայրապետի գնահատության և թեմի հավատացյալ ժողովրդի սիրույն և հարգանքին:

Վեհափառ Հայրապետը այս առթիվ գրում է մասնավոր կոնդակ, որը տպագրված է «Էջմիածին» ամսագրի սույն համարում (էջ 5)՝ ուղղված Շիրակի թեմի հոգևոր դասին, եկեղեցական և թեմական խորհուրդներին. **«Մենք անչափ մխիթարված ենք, որ անցյալ դարերի կործանարար արհավիրքներից հետո այսօր վերստին շեն ու կանգուն են նաև պատմական Շիրակի սուրբ տաճարները, իբրև աղոթքի և ուխտի նվիրական վայրեր, իբրև պանծալի ճարտարապետական կոթողներ»:**

Նոր նշանակված առաջնորդական տեղապահին թեմի եկեղեցական-ֆինանսական գործերը պաշտոնապես հանձնելու համար դեկտեմբերի 4-ին, շաբաթ օրը, Մայր Աթոռ ս. Էջմիածնից Լենինական են մեկնում Գերագույն հոգևոր խորհրդի անդամ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը, դիվանապետ Հայկ Առաքելյանը և ֆինանսական բաժնի վարիչ Գառնիկ Քեհյայանը:

Նույն օրը, երեկոյան, Լենինականի ս. Աստվածածին եկեղեցում պաշտվում է կիրակամտի ժամերգություն, որին ներկա են լինում նաև Մայր Աթոռի ներկայացուցիչները:

Դեկտեմբերի 5-ին, կիրակի, առավոտյան ժամը 11-ին, սկսվում է ս. պատարագը: Պատարագում է տ. Նարեկ վրդ. Շաքարյանը:

«Հայր մեր»-ից առաջ տ. Նորայր ավագ քհն. Սարգսյանը եկեղեցու ս. Սեղանից հանդիսավորապես ընթերցում է Վեհափառ Հայրապետի կոնդակը՝ ի լուր բարեպաշտ ժողովրդյան:

Տաճարը լիքն է հավատացյալ բազմությամբ: Հանդիսավոր ս. պատարագին ներկա են նաև Շիրակի թեմի թեմական և եկեղեցական խորհուրդների անդամները, ողջ քահանայական դասը:

Այնուհետև օրվա խորհրդի համապատասխան քարոզ է խոսում տ. Հուսիկ եպս.

Սանթուրյանը և հավատացյալներին հաղորդում ազգիս Վեհափառ Հայրապետի օրհնությունները: Սրբազանը իր քարոզի մեջ ըստ արժանվույն գնահատում է տ. Մաշտոց եպս. Թաջիրյանի 12-ամյա նվիրված գործունեությունը Շիրակի թեմում: Ապա հավատացյալ ժողովրդին է ներկայացնում թեմի առաջնորդական նոր տեղապահ տ. Նարեկ վրդ. Շաքարյանին՝ մաղթելով նրան եկեղեցանվեր բեղուն գործունեություն, ի պայծառություն Շիրակի թեմին:

Հրաժեշտի հուզիչ քարոզով հանդես է գալիս տ. Մաշտոց եպս. Թաջիրյանը և իր խորին շնորհակալությունն է հայտնում Շիրակի թեմի հավատացյալ ժողովրդին, եկեղեցական և թեմական խորհուրդների անդամներին, որոնք իր գործունեության շրջանում բազմիցս զորավիգ են եղել իրեն հոգևոր գործունեության ճանապարհին:

Այնուհետև իր առաջին քարոզն է խոսում տ. Նարեկ վրդ. Շաքարյանը. «Տէր հովուեցէ զիս և ինձ ինչ ոչ պակասեսցի» բնաբանով: Իր քարոզում տ. Նարեկ վարդապետը խոստանում է նաև, որ ինքը ճիգ ու ջանք չի խնայի արդարացնելու համար Վեհափառ Հայրապետի բարձր վստահությունը, ի պայծառություն Շիրակի թեմի հոգևոր կյանքի:

Նույն օրը, ժամը 15-ին, Շիրակի թեմական և եկեղեցական խորհուրդները, տ. Մաշտոց եպս. Թաջիրյանի և տ. Նարեկ վրդ. Շաքարյանի պատվին, Լենինականի հյուրանոցի ճաշարանում կազմակերպում են ընդունելություն, որին ներկա են լինում Լենինականի քաղաքային խորհրդի ներկայացուցիչներ, ինչպես նաև այլ հրավիրյալներ:

Ընդունելությունն անցնում է ջերմ ու խանդավառ մթնոլորտում:

Հաջորդ օրը, դեկտեմբերի 6-ին, երկուշաբթի, ժամը 11-ին, Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ տ. Նարեկ վրդ. Շաքարյանը, ընկերակցությամբ Մայր Աթոռի ներկայացուցիչների, քահանայից դասի և թեմական-եկեղեցական խորհուրդների մի շարք անդամների, քաղաքավարական այցելություն է տալիս Լենինականի քաղաքային խորհրդի նախագահ Սուրեն Մատնիշյանին:

Այնուհետև Շիրակի թեմի առաջնորդական նոր տեղապահը և Մայր Աթոռի ներկայացուցիչները այցելում են Լենինական քաղաքի տեսարժան վայրերը և մի շարք ֆաբրիկաներ:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ տ. Նարեկ վրդ. Շաքարյանին և բարեմաղթում նրան եկեղեցաշեն գործունեություն՝ ի շենություն Շիրակի թեմի հոգևոր-եկեղեցական կյանքի:



ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԵՍ ԺԱՌԱՆԳԱՎՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՎ ԸՆԾԱՅԱՐԱՆԻ ԵՎ ՋԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՎԵՑ ԿՈՒՍԱԿՐՈՆ ԱԲԵՂԱՆԵՐՈՒ

Երուսաղեմի սրբոց Հակոբյանց միաբանությունը և հայ համայնքը հրճվանքի ու հոգեկան գոհացումի պահեր ապրեցան 24 և 25 հուլիս, շաբաթ և կիրակի օրերուն, երբ տեղի ունեցան ս. Աթոռույս Ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի ամավերջի հանդեսն ու վեց շրջանավարտ սարկավագներու կուսակրոն աբեղա ձեռնադրությունը:

Հայ եկեղեցիի և հայ ժողովուրդի անսակարկ ծառայության նվիրվող վեց այս նորընծաներուն ձեռնադրությունը անգամի մը համար դարձյալ կու գա ամբողջ հայության ուշադրությունն ու ակնկալությունը սևեռել Երուսաղեմի հայ պատրիարքության դըպրեվանքին վրա, որ մոտ մեկուկես դարու իր հարուստ կյանքին ընթացքին ազգին տված է բազմահարյուր կրոնականներ, ըլլան ա-նոնք իշխանավորները մեր եկեղեցիին, կամ պարզ աշխատողները այդ հաստատության:

Ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի այդ անգնահատելի դերին խոր գիտակցությամբ է որ ս. Աթոռույս պատրիարք Ն. Ամեն. տ. Եղիշե ս. արքեպս. Տերտերյանի հոգածությամբ և հետամուտ հսկողությամբ կկառուցվի Ալեքս և Մարի Մանուկյան դպրեվանքի նոր շենքը, որ, Հայկական բարեգործական ընդհանուր միության վսեմ. նախագահին հոյակապ նվիրատվության շնորհիվ պիտի ընձեռե արդիական լավագույն պայմաններ, ուսման և դաստիարակության:

Ամավերջի հանդես

Ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի ամավերջի հանդեսը տեղի ունեցավ ս. Աթոռույս Գալուստ Կյուլպենկյան Մատենադարանի սրահին մեջ, շաբաթ, 24 հուլիս 1971, երեկոյան ժամը 5.30-ին, ամենապատիվ պատրիարք ս. հոր նախագահությամբ և ի ներկայության ս. Հակոբյանց միաբանության գերաշնորհ ու հոգեշնորհ հայրերու, Ժառանգավորաց և Տատուրյան սաներու, ինչպես նաև խուռն բազմության մը:

Հոտնկայս երգված «Սիրտ ի սիրտ» Ժառանգավորաց վարժարանի քայլերգեն ետք, հանդիսությունը բացավ պրն. Արա Գալայճյան, որ շեշտեց Երուսաղեմի դպրեվանքին կարևորությունն ու ցարդ ունեցած դերը մեր եկեղեցիի և ժողովուրդի կյանքին մեջ:

Կրոնական լուրջ ու խորհրդավոր մթնոլորտ մը ստեղծեց Ժառանգավոր սաներու կողմե երգված «Ուրախ լեր» շարականը, ղեկավարությամբ պրն. Սահակ Գալայճյանի, որմե ետք բեմ բարձրացավ շրջանավարտ Պողոս սարկավագ Մանուկյան, Երանաշնորհ Գարեգին կաթողիկոս Հովսեփյանցի մասին բանախոսություն մը ընելու: Մոտ տասը վայրկյան, բարեշնորհ սարկավագը կտրուկ գիծերով ներկայացուց մեծ կրոնականին և սքանչելի հայրենասերին կյանքն ու գործունեությունը, ծանրանալով մանավանդ Հովսեփյանց կաթողիկոսի ձգած գիտական-բանասիրական ժառանգության վրա:

Շրվան խորհուրդին համապատասխան և կարծեք շրջանավարտ սարկավագներուն համար հատկապես գրված Ի. Քիփլինկր «Եթե...» քերթվածը հաջակացողությամբ արտասանեց Ժառանգավորաց սան Համբարձում Պալյան, որմե ետք Քեթըլպիի «Պարսկական շուկա» սիրուն կտորը դաշնակի վրա հաջողությամբ նվագեց տիրացու Եհովք Ազիզյան:

Շրջանավարտ Սարգիս սարկավագ Պարսամյան պատրաստած էր բանախոսությունը «Հայ եկեղեցին և հայ եկեղեցականը» պատեհ նյութին շուրջ, ուր, ընելե ետք ամփոփ գնահատականը տասնհինգ դարերու ընթացքին անոնց կատարած դերին, կհավատիացներ ներկաները թե իրենց ձեռնադրությամբ, իրենք վեց եղբայրներ, պիտի ջանային ընթանալ օրհնյալ նախնիքներու ուղիղ ճամփեն, ի պարծանս Հայաստանյայց ս. եկեղեցիին և հայ ժողովուրդին:

Դանիել Վարուժանի «Ցան» քերթվածը արտասանեց Ժառանգավոր սան Գրիգոր Աֆարյան, և «Օրհնեցէք զՏէր» ս. Աթոռույս շարականի երգեցողութենեն ետք, վերատեսուչ տ. Շահե եպս. Անեմյան բեմ հրավիրեց ամենապատիվ պատրիարք ս. հայրը, և ներկայացուց 1970—71 ուսումնական շրջանի Ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի տարեկան տեղեկագիրը:

Պատրիարք ս. հայրը շրջանավարտության վկայականները հանձնեց, ծափահարություններու ընդմեջեն, ընծայարանի երրորդ կարգը ավարտած վեց սաներուն, որոնք են.

Բարեշնորհ Վարդան սարկավագ Տատուրյան, բարեշնորհ Պողոս սարկավագ Մանուկյան, բարեշնորհ Մանուկ սարկավագ Մուրատյան, Բարեշնորհ Օնինիկ սարկավագ Այբազյան, բարեշնորհ Սարգիս սարկավագ Պարսամյան, բարեշնորհ Գաբրիել սարկավագ Թաշճյան:

Տեղեկագրի ավարտին, պատրիարք ս. հայրը բաժնեց ուսմանց մեջ առաջնություն շահող աշակերտներու մրցանակները, և շատ տպավորիչ այս հանդիսությունը ավարտեցավ ամենապատիվ նախագահին օրհնությամբ:

Ձեռնադրություն վեց կուսակրոն աբեղաներու

24 և 25 հուլիս 1971, շաբաթ և կիրակի օրերուն, ցնծության մեջ էր սրբոց Հակոբյանց ամբողջ միաբանությունը, որովհետև վեց երիտասարդ ու պատրաստված շրջանավարտները ընծայարանին կու գային միանալու սրբատեղյաց պահապան միաբաններու շարքին, ուխտած ըլլալով նվիրվիլ կուսակրոն քահանայության, ի պայծառություն Երուսաղեմի դարավոր հայ պատրիարքության և ի շինություն Հայաստանյայց սուրբ եկեղեցիին:

Կոչում նորընծաներու.—Շաբաթ երեկո, ս. Հակոբի տաճարին մեջ կատարվեցավ կոչման կարգը նորընծաներուն, նախագահությամբ ամենապատիվ պատրիարք ս. հոր:

Ամենապատիվ պատրիարքին կոչեցյալներուն ուղղված «Օրհնեցէք զՏէր ի Սիոնէ, այն որ բնակեալն է յԵրուսաղէմ» օրհնութենեն ետք, խարտավիլակ ս. Աթոռույս լուսարարապետ տ. Հայրիկ արքեպս. Ասլանյան վկայեց ընծայալներու հոգեկան և մտավոր բարեսասությանց ու հատկությանց մասին, զանոնք արժանի նկատելով քահանայական ձեռնադրության:

Աղաղողության ավարտին, վեց երիտասարդ ուխտադիրները արտասանեցին ս. Գրիգոր Տաթևացիի կողմե սահմանված Հայաստանյայց ս. եկեղեցիի դավանանքը:

Ձեռնադրություն նորընծաներու.—Վեց նորընծաներու ձեռնադրությունը կատարվեցավ 25 հուլիս 1971, Վարդավառի կիրակին, ձեռամբ ամենս. պատրիարք ս. հոր, որ մատույց նաև օրվան հանդիսավոր ս. պատարագը: Խարտավիլակն էր լուսարարապետ տ. Հայրիկ արքեպս. Ասլանյան, իսկ առընթերակա էին տ. Սեան և տ. Աղան աբեղաները:

Առաջնորդվելե ետք ս. խորանին առջև, վեց նորընծաները ծնրադիր և առաջնորդությամբ առընթերակա հոգեշնորհ հայրերուն բարձրացան ս. խորան և, հավատացյալ խումբ բազմության դառնալով ու իրենց ձեռքերը բարձրացուցած, հրաժարեցան աշխարհեն, կոչվելու համար «ի քահանայութիւն սուրբ եկեղեցւոյ»:

Ապա, երբ բոլորված էին իրենց հոգևոր ծնողին, ամենս. պատրիարք ս. հոր շուրջ, այս վերջինը իր ձեռքերը խաչաձև՝ դրավ յուրաքանչյուր ընծայալի գլխուն և աղոթեց. «Ես դնեմ զձեռս ի վերայ սորա և դուք ամենեքեան աղօթս արարէք զի արժանի լինիցի սա զաստիճան քահանայութեան անարատ պահել առաջի սեղանոյ Տեառն Աստուծոյ»: Արդեն քիչ առաջ դպիրները միաձայնությամբ և երիցս «արժանի են» ձայնած էին:

Հետո, «Ողջոյն»-են քիչ առաջ, նորընծաները ծնրադրեցին ն. ամենապատվության առջև, և հաջորդաբար ընդունեցին քահանայական սև փիլոնը, սաղավարտը, փորուարը, շուրջառը և այլն: Ապա, քաշված վարագույրին ետին զգեստավորվեցան, մինչ դպիրներ «Խորհուրդ խորին»-ը կերգեին, հավատքի ու վերացման ամենեն սքանչելի

ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԵՂԻՇԵ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԸ ՕԾՈՒՄ Է ՃԱԿԱՏԸ ՆՈՐԸՆԾԱ Տ. ԽԱՉԱԿ ԱՐԵՂԱ ՊԱՐՍԱՄՅԱՆԻ

պահ մը ստեղծելով խորհրդավոր տանարին և ներկաներու սրտերուն մեջ:

Օծում նորընծաներու.—Կհասնի ձեռնադրության ամբողջ պաշտոնին ամենեն պակուցիչ մասը, երբ պատարագիչ ամեն. սրբազանը սրբալուսս մյուռոնով կօծե յուրաքանչյուր նորընծայի ճակատն ու ձեռքերը, և կվերակոչե զանոնք իրենց նոր անուններով, ըստ եկեղեցվո դարավոր սովորության: Այսպես՝

Վարդան սրկ. Տատուրյան կվերակոչվի տ. Բակուր աբեղա, Պողոս սրկ. Մանուկյան՝ տ. Նուրհան աբեղա, Մանուկ սրկ. Մուրատյան՝ տ. Գիսակ աբեղա, Օննիկ սրկ. Այքազյան՝ տ. Վիգեն աբեղա, Սարգիս սրկ. Պարսամյան՝ տ. Խաժակ աբեղա, Գաբրիել սրկ. Թաշճյան՝ տ. Մուշեղ աբեղա:

Քիչ ետք, պատրիարք սրբազան հորմեն կստանան սուրբ սկիհը, նշանակ ս. պատարագ մատուցանելու իշխանության, և դառնալով հավատացյալ բազմության, կու տան իրենց առաջին օրհնությունը, անդրանիկ խորհրդանիշը իրենց հովվական ապագա կյանքին ու գործունեության:

«Ողջոյն»-ի պահուն, պատարագիչ սրբազան հայրը կողջագուրե իր հոգևոր զավակները, մինչ իրեն կհետևին ս. Հակոբյանց միաբանության բոլոր անդամները, սրտագեղ ու երջանիկ: Ս. պատարագը այնուհետև կշարունակվի անընդմեջ, և վերջավորության, մինչ վեց նորընծաները դասին մեջ դրված գրակալներու վրայեն Ավետարանի հատվածներ կքաղեն, հավատացյալներու բազմությունը կու գա երկյուղածությամբ աջահամբույր կատարելու:

Վեղարի տվչություն.—Նույն օրը, երեկոյան ժամերգության ավարտին, հատուկ աղոթքներե և ս. Գրոց ընթերցումներե ետք, ամենապատիվ սրբազան հայրը հանեց յուրաքանչյուր նորընծայի գլուխեն սարկավագական ջրրունը (գդակ), զայն փոխարինելով կուսակրոն քահանայության խորհրդանիշ վեղարով:

Արարողության ավարտին, նորընծաները, իրենց հոգևոր հոր հետ առաջնորդվեցան պատրիարքարան:

Միաբանական ընթրիք.—Իրիկունը, ժամը 6.30-ին, վանքի սեղանատան մեջ կատարվեցավ միաբանական ընթրիք մը, նախագահությամբ ամենապատիվ պատրիարք ս. հոր և ի ներկայության ս. Հակոբյանց միաբանության, նորընծաներուն ու Ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի ուսանողության: Բացման խոսքը կատարեց դրպրեվանքի վերատեսուչ տ. Շահե եպս. Անեմյան, ապա նորընծաներուն կողմե խոսք առավ տ. Մուշեղ աբեղա Թաշճյան: Իսկ ընթրիքը իր հորդորական և շնորհավորական գեղեցիկ խոսքով փակեց ամենապատիվ ս. հայրը, որ, «Օրհնեցէք զՏէր» ս. Աթոռոյս շարականի երգեցողութենեն ետք օրհնեց ներկաներն ու սեղանը:

Ապա, վեց նորընծա աբեղաները իրենց վարժիչին, տ. Նարեկ աբեղա Մարֆազելյանի առաջնորդությամբ մեկնեցան Բեթղեհեմի սեր վանքը, հոն անցնելու քառասնօրյա իրենց առանձնության շրջանը:

Տ. Բակուր աբղ. Տատուրյան.

Ծնած է Հալեպ 1948-ին, ավազանի անունով Վարդան: Նախնական կրթությունը ստացած է Հալեպի Հայկազյան վարժարանին մեջ: 1962-ին ընդունված է ս. Աթոռոյս Ժառանգավորաց վարժարան: Եվ սարկավագ ձեռնադրված է 27 հուլիս 1968-ին, իսկ ներկա տարեշրջանի հունիս 15-ին շրջանավարտ եղած է ընծայարանի երրորդ կարգեն:

Տ. Նուրհան աբղ. Մանուկյան.

Ծնած է Հալեպ 1948 հուլիս 22-ին: Մանուկ տարիքեն կորսնցուցած է ծնողքը: Ավազանի անունով Պողոս: Նախնական ուսումը ստացած է Հալեպի Հայկազյան վարժարանը, և 1961-ին անցած է Կիլիկիո կաթողիկոսության Անթիլիասի դպրեվանքը: 1966-ին ընդունված է ս. Աթոռոյս Ժառանգավորաց վարժարան: Սարկավագ ձեռնադրված է 27 հուլիս 1968-ին, իսկ ներկա տարեշրջանի հունիս 15-ին շրջանավարտ եղած, ավարտելով ընծայարանի երրորդ կարգը:

Տ. Գիսակ աբղ. Մուրատյան.

Ծնած է Հալեպ 1951 նոյեմբեր 6-ին, ավազանի անունով Մանուկ: Նախնական ուսումը ստացած է Գամիշլիի Ազգային վարժարանին մեջ, և 1963-ին ընդունված է ս. Աթոռոյս Ժառանգավորաց վարժարան: Սարկավագ ձեռնադրված է 27 հուլիս 1968-ին, իսկ ներկա տարեշրջանի հունիս 15-ին շրջանավարտ եղած, ավարտելով ընծայարանի երրորդ կարգը:

Տ. Վիգեն աբղ. Այքազյան.

Ծնած է Սղերդի Շիրնաք գյուղը 1953 հունվար 21-ին, ավազանի անունով Օննիկ: Նախնական կրթությունը տեղվույն վրա ստանալե ետք Պոլիս եկած է և հանախած ս. Խաչ դպրեվանք, որուն միջնակարգի շրջանը ավարտած է հաջողությամբ: 1967

հոկտեմբերին եկած է Երուսաղեմ և եղած ընծայարանի առաջին կարգի ուսանող: Սարկավագ ձեռնադրված է 27 հուլիս 1968-ին, իսկ ներկա տարեշրջանի հունիս 15-ին շրջանավարտ եղած:

Տ. Խաժակ աբդ. Պարսամյան.

Ծնած է Արաբկիր 9 հունիս 1953-ին, ավազանի անունով Սարգիս: Քիչ վերջ ծնողքին հետ բնակություն հաստատած է Պոլիս, ուր իր նախնական ուսումը ստացած է սուրբ Սեսրոպյան վարժարանին մեջ: Ապա հետևված է ս. Խաչ դպրեվանքի դասընթացքները: 1967-ին ընդունված է ս. Աթոռույս Ժառանգավորաց վարժարան: Սարկավագ ձեռնադրված է 27 հուլիս 1968-ին, իսկ շրջանավարտ եղած ներկա տարվո հունիս 15-ին:

Տ. Մուշեղ աբդ. Թաշճյան.

Ծնած է Բեյրութ 1947-ին, ավազանի անունով Գաբրիել: Իր ուսումը ստացած է նախ ս. Հառասնից Մանկանց վարժարանը և ապա Կենաց վարժարանը: 1960-ին եկած է Երուսաղեմ, ուր աշակերտած է մինչև 1965: Սարկավագ ձեռնադրված է 1970 սեպտեմբերին, իսկ ներկա տարեշրջանի հունիս 15-ին շրջանավարտ եղած է ընծայարանի բաժնեն:

ԹՂԹԱԿԻՑ



Գ. Վ. ԱԲԳԱՐՅԱՆ

(Բանասիրական գիտությունների դոկտոր)

ՄԱՍԻՍԻ ԱՆՎԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԵՎ ԱՆԱՆՈՒՆԻ

Մասիս լեռան անվան ստուգաբանության հարցում շեշտակի տարբերություն կա Մովսես Խորենացու և Անանունի միջև: Եթե Խորենացին հայոց նվիրական լեռան անվանադիր նահապետ է համարում Հայկի շառավիղներից Ամասիային, ապա Անանունի մեջ ներմուծված ավանդության համաձայն լեռը կոչվում է Ծննդոց գրքի Մասեկի անվամբ (որը գրիչներն աղճատելով դարձրել են «Մարսեակ»):

Թյուրիմացաբար Սեբեոսին վերագրված՝ Անանունի մատյանում գտնվող ավանդության ծնունդն ամենայն որոշակիությամբ կապված է Աստվածաշնչի **հունարեն** թարգմանության հետ: Մինչ այդ թարգմանությունը՝ **հայկական ավանդությունը չէր կարող ծագել,** որովհետև Մասեկ անունը ստեղծվել է հենց Աստվածաշնչի հունարեն թարգմանության ժամանակ և այդ թարգմանության միջոցով էլ թափանցել է հայկական և հունարենից թարգմանված մյուս աստվածաշնչերի (նրանց թվում՝ նաև վրացականի) մեջ:

Եբրայական բնագրում Մասեկին վերաբերող հատվածն անհասկանալի է. „Wajomer Abram Adonai lehwe ma titen-Lu wanoki holek ariri wben-mešek beiti hu damešek Elieser„ (Ծնող. 15, 2).

Հատվածի հմուտ ուսումնասիրող, գերմանացի գիտնական Հերման Գունկելը մեզ հետաքրքրող մասը համարել է անթարգմանելի և նրան վերաբերող բացատրության մեջ գրել. «Նախադասությունն իմաստ չունի: Բնագրի տարընթերցվածքները կամ ժամանակակից սրբագրությունները չեն կարող մեզ օգնել: Անհնարին է գտնել նույնիսկ մոտավոր իմաստը»[1]: Գունկելը առհասարակ եբրայական բնագրի մեջ Մասեկ անունը չի գտնում և նրան փոխարինող mešek բառը, այդ միևնույն հատվածում հանդիպող eliezer-ի հետ միասին, համարում է հապաքս լեգոմենա (ἅπαξ λεγόμενα) այսինքն՝ մեկ անգամ հանդիպող բառ: Հին Կտակարանի եբրայական բնագրի գերմաներեն գիտական թարգմանության (լավագույնը) մեջ նույնպես Մասեկ անունը չկա[2]: Բնականաբար նույնն է նաև ռուսական նոր թարգմանության մեջ[3]: Այդ թարգմանություններում «Մասեկի» փոխարեն սենեուրեք հանդիպում է «Դամասկոս» տեղանունը, որով ավելի հավանական է դառնում ասորա-եբրայական մատենագրության լավագույն գիտակ, բազմավաստակ հայագետ, պրոֆ. Երվանդ Տեր-Մինասյանի մեզ հայտնած հետևյալ բանավոր կարծիքը՝

---

[1] Handkommentar zum Alten Testament, Genesis, Übersetzt und erklärt von Hermann Gunkel, 1902, էջ 158.

[2] Die Heilige Schrift des Alten Testaments..., von E. Kautzsch, 1893, էջ 12-13:

[3] Библия. Москва, 1956, էջ 16.

«Արդյոք Սեշեկ և Դամեշեկ (Դամասկոս) իրար հետ կապված չե՞ն և բառախաղ չէ՞ այս»:

Աստվածաշնչի հայերեն հնագույն ձեռագրերի մեջ (և առհասարակ ոչ մի հայկական գրավոր աղբյուրում) մեզ չի հանդիպել Անանունի հատվածում «Մասեկի» փոխարեն միանգամայն ընդօրինակված «Մարսեկ» ձևը: Ելնելով այս, ինչպես նաև այն փաստից, որ «Մասիս» անունն ավելի մոտ է Աստվածաշնչի [illegible] և անկասկած [illegible]ել է այդ ձևից (և ոչ «Մարսեկ»-ից) կարելի կլիներ Անանունի «Մարսեկ»-ը ընդբագրել «Մասեկ»-ով, ինչպես վարվել են Ղեւոնդը[4], Սառը[5], Մուրադը[6] և ուրիշներ: Բայց միաժամանակ հնարավոր է, որ Աստվածաշնչական անունը Անանունի մեջ ներմուծված ավանդության մեջ ակզբում հիշատակադարձված լիներով հանդերձ՝ հետագայում բերանից բերան անցնելով աղավաղվել է և Անանունի մեջ ներմուծվել է ոնց Մարսեկ ձևով: Ն. Մառը (նույն տեղում) արդեն նշել է, որ հայերենի հնչյունաբանությանը խորթ չէ «Մասեկ» ձևից «Մարսեկ»-ի վերածումը: Այնպես, որ անունը սրբագրելու համար բավարար հիմքեր չունենք.

Ուշագրավ է այն փաստը, որ միջնադարյան հայ գիտնականները փորձել են վերացնել Ծննդոց գրքի եբրայեցերեն և հայերեն բնագրերում նկատվող հակասությունը Մասեկի վերաբերյալ: Մեզ հայտնի չէ, թե այս միտումը երբ է սկսվել, բայց դա առկա է արդեն 13-րդ դարի հայկական ձեռագրերում: Այսպես օրինակ, Մաշտոցի անվան Մատենադարանի № 345 ձեռագիր Աստվածաշնչում (էջ 13բ) Ծննդոց գրքի 15-րդ գլխի 2-րդ տաղ «և որդի Մասեկայ ընդոծնի իմոյ» արտահայտության մեջ Մասեկի անունը չնչված է և, հիշյալ արտահայտությունը սրբագրված է այսպես. «և որդի մի, ասէ, կայ («Մասեկայ»-ը դարձել է «մի, ասէ, կայ») ընդօծնի իմոյ»:

Այս սրբագրության մեջ թաքնված է Աստվածաշնչի հունարեն թարգմանությունից անբավարար մնալու և եբրայեցերեն աղճատված բնագիրը սեփական ուժերով վերծանելու ձգտում, որը խոսում է միջնադարյան հայ գիտնականների հմտության օգտին:

Նշված ձեռագիրը (345) ընդօրինակվել է 1270 թ. Կիլիկիայում, Հովհաննես Արբելեբեր համար: Որևէն Աստվածաշնչի բնագրի սրբագրությունը պատահական երեույթ չէ և ոչ էլ՝ սրբագրողը կարող էր պատահական մարդ լինել:

Ձեռագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Մասեկի անվան սրբագրությունը հետևել են ոչ միայն կիլիկյան (տես նաև կիլիկյան № 177 ձեռագիրը, ընդօրինակված 1920 թ.), այլև բուն Հայաստանի գիտնականները: Այսպես օրինակ, 13-րդ դարի նշանավոր մատենագիր Մխիթար Այրիվանեցու ձեռքով ընդօրինակված (1282 թ.) մի շատ արժեքավոր ժողովածուում (Մաշտոցի Մատենադարան, ձեռ. № 1500, էջ 83բ) նույնպես Ծննդոց գրքի հիշյալ հատվածն ընդօրինակված է առանց «Մասեկ» անվան («Եւ որդի մի, ասէ, կա ընդոծնի իմոյ»):

Ծննդոց գրքի մեկնությունների հայ հեղինակները նույնպես Աստվածաշնչից բաղվածքներ կատարելիս Մասեկ անունը երբեմն չեն նշում: Այսպես օրինակ, Մատենադարանի № 4262 (15-րդ դար) ձեռագրում պահպանված՝ Վարդան վարդապետի մեկնության մեջ Մասեկի փոխարեն Աբրահամի ընդոծին է նշված Եղիազարը. «Եւ մեռանիմ անորդի և Եղիազար ընդոծին իմ նա ժառանգէ զիս» (էջ 88ա):

16-րդ դարի բանաստեղծ Սիմեոն Ապարանցին Մարսեկի ավանդությունը պատմում է այսպես («Վիպասանութիւն», էջ 32).

ըզՄարսակէ սկիզբն արարեալ,
Աբրահամու ընդոծին լեալ,
ԻՍահակէ ապստամբեալ,
Դամասկոսէ ի Հայք չընեալ:
Յերկուց լերանց ոտին բնակեալ,
Որ յԱրայի դաշտ նայեցեալ:
Երից որդւոցն հայր եղեալ:
ՅԱրամանեայն ազգքն խառնեալ,
Զլեառն երիցուն անուանակցեալ,
ԶԵղիազարն Ազատ փոխեալ:

Ինչպես տեսնում ենք, Ապարանցին Մարսեկին կոչում է «երից որդւոցն հայր», այսինքն՝ նա կարծել է, թե Մարսեկը տղամարդ է: Սա բնագիտական տեսակետից հետաքրքիր է այնքանով, որ միջնադարյան բանաստեղծի պատկերացմամբ անսպասելի

[4] Vatter, Die nationalen Gesänge der alten Armenier:—„Theol. Quartalschr.", 1894, էջ 75, § 2.

[5] H. Marr, О „Начальной истории Армении" Анонима:—„Византийский Временник", т. I, № 2, 1894, էջ 276.

[6] Fr. Murad, Ararat und Masis, Heidelberg, 1901, էջ 50.

[7] Գր. Խալաթյանցը կարծում է, թե Անանունն ինքն է Աստվածաշնչի «Մասեկ»-ը դարձրել «Մարսեկ» (Армянский эпос в Истории... Хоренского, Москва, 1896, էջ 75): Նույն կարծիքին է նաև Բ. Սարգիսյանը («Բազմավեպ», 1915, էջ 9): Բայց իրականում հնարավոր է, որ Անանունը Ծննդոց գրքի Մասեկին դիտել է հենց այն պատճառով, որ այդ անունը շատ նման է Մասիք տեղանվանը: Որևէն Մասեկ անվան մեջ դիտավորյալ կերպով փոփոխություն մտցնելը իմաստ չէր ունենա:

է եղել Մասիս լեռան ստուգաբանությունը իգական անվամբ[8]:

Առանց հարցի մեջ խորանալու՝ Մարսեակին տղամարդ են համարել նաև Ֆետտերը (տես նշված աշխատությունը, էջ 75: Այս էջում Ֆետտերը Մարսեակին հարցականով համարում է նաև **կին**), Ֆր. Մուրադը (տես նշվ. աշխ., էջ 52) և այլք: Բայց որ Մարսեակը կին է՝ ցույց են տալիս Ծննդոց գրքի այն տեղերը, որոնք հիմք են հանդիսացել ավանդության համար (տես ստորև): Այդ տեղերը նկատի ունենալով ավանդության մյուս բոլոր վերծանողներն ու թարգմանիչները (Պատկանյան, Լանլուա, Մառ, Խալաթյանց, Սալխանյանց և այլք) «Մասեկ»-ը վերծանել են իբրև կնոջ անուն:

Անվանդության ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունի Անանունի հնագույն ձեռագրում պահպանված հետևյալ տեղեկությունը, որը չի արժանացել մասնագետների ուշադրությանը. «Եւ լինին նորա երեք որդիք. Փառոխ, նա է Եղիազար, [ըստ] որում Ազատն կոչեն լեառն»[9]: Բոլոր տպագիր հրատարակությունների համար հիմք ծառայած ձեռագրերում «որում Ազատն կոչեն լեառն» արտահայտությունն անջատված է Եղիազարի անունից և ընդգրկվելով մեկ տող վերև՝ միացել է Նարսեակին վերաբերող «Եւ անուանէ զերինն յանուն իւր» արտահայտությանը. այսպես՝ «Եւ անուանէ զերինն յանուն իւր, որում Ազատն կոչեն **լեառն**»[10]: Այս վիճակում, ինչպես տեսնում ենք, տրամաբանական կապ չկա նախադասության առաջին և երկրորդ մասերի միջև: Առաջին մասում արդեն հայտնված է, որ Մարսեակն իր անվամբ է կոչում **լեռները** (այսինքն՝ այն երկու լեռները, որոնց մասին նախքան այդ հայտնվում է, որ Մարսեակը բնակություն է հաստատում նրանց ստորոտին), իսկ նախադասության երկրորդ մասում, կարծես թե նախօրոք ոչինչ չի ասված **լեռների** մասին, նորից հայտնվում է, որ Մարսեակն իր անվամբ է կոչում Ազատ **լեռը** (և ոչ թե՝ **լեռները**): Պարզ երևում է, որ նախադասության առաջին և երկրորդ մասերն սկզբում գտնվել են տարբեր տեղերում և հետո գրիչների սխալման հետևանքով խառնվել են իրար[11]: Անանունի հնագույն ձեռագրերում բնագիրը մնացել է անվնաս, և մենք հնարավորություն ունենք նրա միջոցով բացահայտելու ավանդության մինչ այժմ անծանոթ մնացած կողմերից մեկը, այն է՝ Ազատ լեռան անվանադրությունն ըստ Մասեակի որդի Եղիազարի անվան:

Հայտնի է, որ հնում Մասիսը կոչվել է նաև Ազատ («Ազատն ի վեր ի Մասիս», Խորենացի, գիրք Ա, գլ. Լ և այլուր): Բայց Նովսես Խորենացին գրանցել է միայն «Նասիս» անվան ստուգաբանությունը («զլեառնն Ամասիա անուանէ իւրով անուամբ Մասիս». գիրք Ա, գլ. ԺԲ), անպատասխան թողնելով այն հարցը, թե ինչու լեռը կոչվում է նաև Ազատ: Հնա, Ամ անունի մեջ ներմուծված ավանդությունը կլանքի է կոչվել՝ պատասխանելու համար նաև այդ հարցին: Պատասխանի համար օգտագործվել են Ծննդոց գրքի հետևյալ տեղերը. «Եւ ասէ Աբրահամ. տէ՛ր, տէ՛ր, զինչ տացես ինձ, զի եւ կորնչիմ անորդի, և որդի Մասեկայ ընդոծնի[12] իմոյ այն է Եղիազար Դամասկացի (գլ. ԺԵ, տ. 2), «Եւ որդւոց հարճացն իւրոց որ էին Աբրահամու, ետ Աբրահամ պարգևս եւ արձակեաց զնոսա յԻսահակայ որդւոյ իւրոյ յԵրկիրն Արևելից» (գլ. ԻԵ, տ. 6):

Սրանք Աստվածաշնչի այն ամենահարմար տեղերն են, որոնք կարող էին մեկնաբանվել կամեցած ձևով և հարմարեցվել Հայաստանի պատմությանը: Աբրահամը իր հարճերից ծնված որդիներին բաժանում է հարազատ որդուց՝ Իսահակից և ուղարկում

---

[8] Գր. Խալաթյանցը ենթադրաբար հնարավոր է համարում, որ Անանունն ինքն էլ Մարսեակ անունն ընկալած լինի որպես արական անուն: Բայց սա իրականում հնարավոր չէ, որովհետև Անանունն օգտվել է Ծննդոց գրքի այնպիսի գլուխներից, որոնցում խոսվում է Աբրահամի **կին** ընդոծինների և որդիների մասին:

[9] Մաշտոցի անվան Մատենադարան, ձ. № 2639, էջ 490բ:

[10] Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն, ի ձեռն Ստ. Մալխասեանց, 1939, էջ 7:

[11] «Որում Ազատն կոչեն լեառն» արտահայտությունը տպագիր բնագրում իր իրական տեղում չլինելով՝ անհասկանալի է դարձրել նախադասությունը: Մատիկյանը (Անանուն կամ կեղծ Սեբեոս, էջ 83) իրավացիորեն հարց է տալիս. «Որո՞ւն անունը (այսինքն՝ ո՞ր լեռան անունն է եղել Ազատ—Գ. Ա.). Աղազածի՞ն, Գեղի՞ն, թե Մասիսին»: Իսկ Բ. Սարգիսյանը («Բազմավեպ», 1915, էջ 9) համոզված է, որ «Ազատ» անունը վերաբերում է Արագած և Գեղ լեռներին:

[12] Բ. Սարգիսյանի («Բազմավեպ», 1915, էջ 9) կարծիքով՝ Ծննդոց գրքի «ընդոծին» բառը մեզ հետաքրքրող հատվածում նշանակում է «խորթ որդի»: Բայց պետք է նկատել, որ ավանդությունը գոյացել է ոչ միայն Մասեկին վերաբերող հատվածից, այլև՝ Աբրահամի հարճերի զավակների Արևելք գաղթելու աստվածաշնչային պատմությունից, որի մեջ «հարճ» բառը հենց ցույց է տալիս, որ Անանունը Մասեկին դիտել է որպես հարճի և «ընդոծին» բառը գործածելով նկատի է ունեցել նրան և ոչ թե «խորթ որդուն»:

«յԵրկիրն Արևելից»: Այս «Արևելյան երկրի» տեղը Ծննդոց գրքում չի նշված, ուստի հայ մեկնիչը կարող էր այդ երկիրը նույնացնել Արևելքում գտնվող Հայաստանի հետ:

Հարներից մեկն է Սասեկը, որի անունը գրեթե բառացի համընկնում է Սեմ և Փոքր Սասիսների անվան՝ Սասիքի հետ: Մասեկի որդին էլ Եղիազարն է, որի անունն արտաքին տեսքով հայերեն «Եղև» և «Ազատ» բառերը հիշեցնելով՝ կարող էր ինչ որ չափով սերձենալ Սասիսի երկրորդ անվանը: (Սիմեոն Ապարանցին գրում է. **«Եղիազարն Ազատ** փոխեալ», որից միաժամանակ երևում է, որ Ապարանցու ձեռագիրն ունեցել է ճիշտ այն ընթերցվածը, ինչ որ Անանունի մեզ հասած հնագույն ձեռագիրը): Ի դեպ՝ Եղիազար անունը ձեռագրերում ունի «եղև» և «Ազատ» բառերին մոտեցող նաև այլ ձևեր. օրինակ՝ ձ. № 1500, էջ 83բ—Եղէազար (Եղէ+Ազար):

Ահա այս տվյալների հիման վրա ստեղծվել է այն ավանդությունը, որի ամբողջական բովանդակությունը հետևյալն է (բերում ենք ըստ հնագույն ձեռագրի, էջ 490ա—բ). « Ի Դամասկոսէ, ասեն, գնացեալ զՄարսեակն՝ զընդոծինն Աբրահամու: Փախստական լեալ յԻսահակայ և եկեալ բնակեցաւ առ ոտամբ երկուց լերանցն որ հային հանդեպ մեծի դաշտին Արայի յԱրագած կատար և ի գեղ լեառն: Եւ անուանէ զլերինս յանուն իւր: Եւ լինին նորա երեք որդիք. Փառոխ՝ նա է Եղիազար, [ըստ] որում Ազատն կոչեն լեառն և Փառախտ կոչեն զտեղի բնակութեանն, և Փառականն դաշտ որսոց և արշաւանաց նոցին, որ խառնին յազգ Արամենակայ»:

Սույն ավանդության հաջորդ կարևոր միտումն է՝ աստվածաշնչային Արարատի տեղայնացումը Հյուսիսային Հայաստանում: Մասիսի այսօրվա աշխարհագրական վայրում: Արարատն այն նվիրական լեռն է, որի վրա իջել է Նոյի տապանը: Հայերեն Աստվածաշնչում (Ծննդոց, Ը 4) այդ լեռը կոչվում է Արարատ: Հունարեն թարգմանության մեջ նույնպես այդպես է: Ինչպես հայ, այնպես էլ օտար մատենագիրները Արարատը տեղադրել են զանազան վայրերում: Այսպես օրինակ, Փավստոս Բուզանդի համաձայն՝ Արարատը (ձեռագրում՝ «Սարարադ») գտնվում է Կորդվաց աշխարհում. «Ի լերինն Հայոց ի լեառնն Սարարադայ ի սահմանս Այրարատեան տիրութեան ի գաւառն Կորդուաց» (գլ. Ժ): Նման տեղեկություններ գտնում ենք նաև արտաքին մատենագրության մեջ (մանրամասն տես Ֆր. Մուրադի նշված աշխատությունը և՝ V. Inglisian, Armenien in der Bibel, Wien, 1935): Կորդվաց լեռների հարևանության մեջ բարձրացող Մասիուս լեռների անունը նույնպես կարող էր շփոթվել Մասիսի հետ: Ծաղսանուրբում Սասիսը (նկատի ունենալով Սիփանը) ցույց է տրվում Բզնունեաց գավառում[13], և այլն:

Ճիշտ է, Արարատը միշտ չէ, որ նույնացվում է Մասիսի հետ, բայց մեր նշած պայմաններում բնական է, որ պետք է պարբերաբար պահանջ առաջանար՝ որոշելու աստվածաշնչային լեռան տեղը: Հայտնի է, որ Մովսես Խորենացին նույնպես Մասիսը տեղադրում է Հյուսիսային Հայաստանում, բայց, ինչպես երևում է, Անանունի օրոք նոր պահանջ է զգացվել՝ ավելի ամրապնդելու այդ հավատը, մանավանդ որ Խորենացին լեռան անունը Աստվածաշնչի հետ չի կապել: Անանունը հոգացել է այդ մասին և աստվածաշնչային Մարսեակին բնակեցրել է «առ ոտամբ երկուց լերանց որ հային հանդեպ մեծի դաշտին Արայի յԱրագած կատար և Ի Գեղ լեառն»: Այստեղ Արագածի և Գեղամա լեռների անունները նշված են դիտավորյալ, որպեսզի նրանց միջավայրում նշված Սասիսը չշփոթվի այլուր գտնվող որևէ լեռան հետ:

Արագած և Գեղ լեռների անունները պարունակող մեր բերած հատվածը բանասերների ճնշող մեծամասնությունը (Լանգլուա, Պատկանյան, Ֆետտեր, Խալաթյանց, Մուրադ, Մալխասյանց և այլք) հասկացել է այնպես, թե Մարսեակը բնակվել է Արագած և Գեղ լեռների ստորոտին: Իրականում, սակայն հասկանալի է, որ ավանդությունն ստեղծվել է հենց նրա համար, որպեսզի Մարսեակին բնակեցնի անպայման Մասիսի ստորոտին և նրա անվամբ կոչի լեռը:

Ավանդությունը ճիշտ է վերծանել Ն. Մառը իր ռուսերեն հետևյալ թարգմանությամբ. «Говорят, что Масяк, рабыня Авраама, спасаясь от Исаака, пустилась в путь и пришла поселиться у подошвы двух гор, которые смотрят со стороны обширной равнины Арая[14] на вершину Араганца и на гору Гег»[15].

Ինչպես տեսնում ենք, Մարսեակը բնակվում է ոչ թե Արագած լեռան վրա («յԱրագած կատար»), այլ այն երկու լեռների ստորոտին, որոնք նայում են Արագածի կատա-

---

[13] Հմմտ. H. Hübschmann, Die altarmenischen Ortsnamen, էջ 324:

[14] Ի դեպ՝ Ստ. Մալխասյանցի ռուսերեն թարգմանության մեջ (История епископа Себеоса, перевел Ст. Малхасянц, Ереван, 1939, էջ 15) վրիպակաբար բաց է թողնված Արայի անունը, որի հետևանքով ռուսերեն ընթերցողին հայտնի չէ, թե ինչ դաշտավայրի մասին է խոսքը:

[15] Н. Марр, Նշվ. աշխ., էջ 276:

ին և Գեղ լեռանը («Которые смотрят... на вершину Арагаца и на гору Гег»): Այդ երկու լեռներն են, ինչպես ճիշտ կռահել է Ս՛առը, Նեռ ու Փոքր Մասիսները: «Ակընհայտ է,—գրում է մեծանուն հայագետը,— երկու լեռները, որոնց ստորոտին բնակություն է հաստատում Մասեակը և որն իբր նա կոչել է իր անվամբ, երկու Արարատներն են, որոնք հայերին ծանոթ են Մասիք անվամբ» (էջ 276):

Ավանդությունը բոլորովին տարբեր լույսի տակ է տեսել «Սեբեոսի Պատմության» առաջին հրատարակիչ Թ. Միհրդատյանը: Նրա կարծիքով՝ Մասեակն իր անվամբ է կոչել ոչ թե Մասիսը, այլ այն բլուրը, որի վրա կառուցված է եղել հայոց մայրաքաղաք Դվինը: Նա գրում է. «Հավանական թվի, թե լեռում այս հնոց անվաներ Ազատ, որ այժմ կոչի Դվին» (էջ 20): Միհրդատյանը միաժամանակ հետաքրքիր դատողություններ է անում Ազատ անվան շուրջ, սակայն այդ անվան նույնացումը Դվինի բլրի անվան հետ նա որևէ մատենագրական վկայությամբ չի հաստատում:

Ի տարբերություն Միհրդատյանի և այլոց՝ Ֆետտերն այն կարծիքին է, թե հնում Ազատ է կոչվել Մասիսներից միայն մեկը՝ ավագ Մասիսը[16]: Եթե այս ենթադրությունը ճիշտ է՝ ապա Մարսեակի որդի Եղիազարի անվան առկայությունն ավանդության մեջ ամենի է պատճառաբանվում, որովհետև այս դեպքում Մասիսներից մեկը կոչվում է մոր, մյուսը՝ որդու անուններով:

Մովսես Խորենացու և Անանունի միջոցով մեզ հասած ավանդությունների համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Անանունը Մասիսի անունը աստվածաշնչային Մասեկից բխեցնելով հանդերձ՝ աշխատել է մյուս մանրամասնություններում որոշ կապ պահպանել Խորենացու գրանցած ավանդության հետ: Այսպես, օրինակ, նա էլ Պատմահոր նման՝ հայտնում է որ Մասիսի անվանադիրն ունեցել է **երեք** որդի և այդ որդիներից մեկին (մյուսների անունները չեն պահպանվել) կոչում է հենց այն անվամբ, ինչ Խորենացին: Խորենացու հիշած **երեք**[17] որդիներն են՝ Գեղամ, Փառոխ, Ցոլակ. «Ամասիա բնակեալ յԱրմաւիր՝ յետ ամաց ծնանի զԳեղամ, և զյետ Գեղամայ՝ զՓառոխ արի և զՑոլակ... զտեղիսն կոչեցին ի Փառոխայ Փառախտն» (գիրք Ա, գլ. ՀԲ): Այս վերջին որդու վերաբերյալ տեղեկությունը գրեթե նույնությամբ կրկնում է նաև Անանունը. «Եւ լինին նորա **երեք** որդիք. Փառոխ՝ նա է Եղիազար (Անանունն այսպիսով Աստվածաշնչի Մասեկի որդի Եղիազարի և Պատմահոր Ամասիայի որդի Փառոխի անունները նույնացրել է, այսինքն՝ իր ավանդությունը հաշտեցրել է Խորենացու ավանդության հետ—Գ. Ա.), որում Աշատն կոչեն լեռան և Փառոխտ կոչեն զտեղի բնակութեանն...»[18]:

Փառոխի վերաբերյալ տեղեկություններով էլ ավարտվում է Անանունի ավանդությունը: Ն. Սառը[19] կարծում է, թե Անանունի նախնական բնագրում հատվածը շարունակվել է և «խոսվել է մյուս երկու որդիների մասին»: Իսկ Ստ. Մալխասյանցը գտնում է, որ հատվածն հենց սկզբից էլ ունեցել է այսօրվա ծավալը: Նրա կարծիքով՝ ավանդության հորինողը պարզապես չի կարողացել հարմարվել Խորենացու ավանդությանը և «կանգնել է փակուղու առջև. Աստվածաշնչի Եղիազարին նա վերածել է հայ Փառոխի, իսկ նրա երկու եղբայրներին իսպառ բաց է թողել» (նշվ. աշխ., էջ 138): Այս պատճառաբանությունն, իհարկե, այնքան էլ համոզիչ չէ, որովհետև դժվար է պատկերացնել, թե Անանունը Մասեկի՝ երեք որդիներ ունենալու մասին հայտնելուց հետո կթվեր միայն մեկին և չէր կարողանա մի եղանակ գտնել հիշատակելու համար նաև մյուսներին:

Փառոխի վերաբերյալ տեղեկությունը ուշադիր զննելիս տեսնում ենք, որ Անանունը Պատմահորը լրացրել է ոչ միայն Փառոխ-Եղիազար անունների հաշտեցմամբ, այլև՝ օգտվելով հավանաբար Ագաթանգեղոսի միևնույն աղբյուրից (Ագաթանգեղոսը 211-րդ տան մեջ գրում է. «Կամեցեալ որս առնել, երթայ **ի դաշտն Փառական»**) Խորենացու տեղեկությանն ավելացրել է **«Փառական դաշտ որսոց և արշաւանաց նոցին»** արտահայտությունը: Այսպես էլ՝ նա լրացումներ և փոփոխություններ պետք է կատարեր մյուս որդիների վերաբերյալ տեղեկությունների մեջ: Այդ տեղեկությունները, սակայն, այժմ չկան: Դրանք չեն եղել նաև Սիմեոն Ապարանցու օգտագործած ձեռագրում: Այդ իսկ պատճառով էլ Ապարանցին նույնպես հայտնելով, որ Մարսեակը **երեք**

[16] Vetter, Die nationalen Gesänge, էջ 76:

[17] Ստ. Մալխասյանցը սխալմամբ գրում է. «Ըստ Խորենացու՝ Ամասիան ունեցել է երկու որդի՝ Փառոխ և Ցոլակ» (История епископа Себеоса, էջ 138): Անվանի հայագետի ուշադրությունից վրիպել է Ամասիայի ավագ որդու՝ Գեղամի անունը:

[18] Գր. Խալաթյանցը Մարսեակի երեք որդիներ է համարել Փառոխին, Փառոխտին, Փառականին (Арм. эпос в ист. М. Хоренского, 81): Այնինչ՝ սրանք տեղանուններ են և ոչ թե Մարսեակի որդիների անունները: Միևնույն շփոթը գտնում ենք նաև Բ. Սարգիսյանի աշխատությունում («Բազմավեպ», 1915, էջ 9):

[19] Н. Марр, նշվ. աշխ., էջ 276:

որդիներ է ունեցել, պատմում է միայն մեկի մասին՝

Երից որդուցն հայր եղեալ...
ԶԵղիազարն Ազատ փոխեալ:

Առանց համապատասխան մատենագրական վկայությունների, անշուշտ, դժվար է վերջնականապես որոշել, թե Անանունի նախնական բնագրում մեր ենթադրած տեղեկությունները մյուս որդիների մասին իսկապես առկա են եղել, թե ոչ: Բայց որ մեզ հասած բնագիրը կյանքի է կոչված **հայկական տեղանունների ստուգաբանման** միտումով՝ դա անառարկելի փաստ է: Ստուգաբանված են Մասիս, Ազատ, Փառոիտ և Փառական անունները: Ուրեմն՝ եթե հատվածը շարունակվեր էլ՝ պետք է հանդիպեինք դարձյալ տեղանունների ստուգաբանման:

Այս հանգամանքը վրիպել է Ն. Մառի ուշադրությունից, ուստի նա՝ ելնելով այն փաստից, որ Մարսեակի ավանդությունը մեզ հասած ձեռագրում գտնվում է Պարթևաց Արշակունիներին վերաբերող մասում՝ կարծել է, թե ավանդության ենթադրյալ կորած մասում Փառոիխ եղբայրները վկայակոչված են եղել պարթևաց Արշակունիների կապակցությամբ[29]: Նա գրում է. «Բայց Աբրահամի ընդոծնի փախուստն ի՞նչ կապ ունի Արշակունիների պատմության հետ... Ստիպված ենք ենթադրելու, թե բացահայտորեն աղճատված այս հատվածում հետագայում խոսվել է մյուս երկու որդիների մասին և նրանց վերաբերյալ հայտնվել է ինչ-որ բան, որը նրանց կամ նրանցից մեկին մոտեցրել է պարթևներին, Արշակունիներին... Մի խոսքով՝ որպեսզի բացատրենք Աբրահամի ընդոծնի վերաբերյալ հատվածի երևալը Արշակունիների պատմության սկզբում պետք է ընդունենք որ պատմիչի տարօրինակ կարծիքով, Արշակունիները ազգակից էին նրան (Մարսեակին—Գ. Ա.) ...Խորենացու սոտ սանրամասնություններն այլ են. ընդոծին Սասեակի փոխարեն հանդես է գալիս հարն Քետուրան, բայց զրույցի կորիզը, ինչպես երևում է, եղել է միևնույնը— Արշակունիները ծագել են Աբրահամից» (նշվ. աշխ., էջ 276):

Սասանագետները արդեն նկատել են, որ Մարսեակի հատվածը ընդմիջարկություն է և որ՝ դա սխալմամբ է զետեղված Պարթևաց Արշակունիներին վերաբերող մասում, հետևաբար՝ նրա մեջ Արշակունիների մասին տեղեկություններ որոնելու ադիթ չպետք է ներկայանար: Ինչ վերաբերում է Քետուրային՝ հնարավոր է, որ Մարսեակին Հայաստան բերելու գաղափարը Անանունի մեջ ծագել է իսկապես նրա նմանողությամբ: Տեսնելով, որ Խորենացին Քետուրային **արքվելք** է բերել և նրանից է բխեցրել Պարթևաց ազգը՝ մեր ավանդության հեղինակը որոշել է ինքն էլ Մարսեակին Հայաստան բերել և նրա անվամբ ստուգաբանել Մասիս լեռան անունը: Ուրեմն Խորենացու և Անանունի ընդհանրությունն այն է, որ երկուսն էլ Աբրահամի ընդոծիններին տեղափոխել են արևելք, բայց նրանց նպատակը բոլորովին այլ է եղել և ընդոծիններն էլ միանգամայն տարբեր անձնավորություններ են:

Եթե Անանունի ավանդությունը վերծանենք իր բնական վիճակում, առանց ենթադրյալ կորած մասի, կտեսնենք, որ ավանդության հեղինակը բացարձակ կերպով հայտնում է, որ Մարսեակի որդիները խառնվել են **հայերին** (և ոչ՝ պարթևներին): Ահա այդ բացահայտ տեղեկությունը. «Եվ լինին նորա երեք որդիք... որ **խառնին յազգ Արամենակայ»:**

Այսպիսով՝ Մարսեակի ավանդությունը զուտ հայկական ծագումնաբանությանը վերաբերող ավանդություն է, որը կյանքի է կոչվել՝ նվիրական Մասիսի և նրա շրջակա վայրերի տեղանունները բիբլիական անուններով հաստատելու և արբագործելու մտադրությամբ:

[29] Ն. Մառին կրկնել է նաև Բ. Սարգիսյանը («Բազմավեպ», էջ 9), որը նույնպես կարծում է, թե Մարսեակի հատվածն ստեղծված է «Հայկազունեաց և Պարթև-Արշակունիներու պատմութիւնը իրարու կապելու ձգտումով»:



Ա. ՔՅՈՇԿԵՐՅԱՆ

ՓԱՐԻԶԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ № 79 ԳԱՆՁԱՐԱՆ-ՏԱՂԱՐԱՆԸ

Բ. ՏԱՂԱՐԱՆ[1]

Փարիզի № 79 ձեռագրի երկրորդ մասը՝ Տաղարանը, իր էությամբ, ընդգրկած նյութով ու փաստերով նույնքան կարևոր է ու հետաքրքրական, որքան առաջին մասը՝ Գանձարանը: Այն սկսվում է Գանձարանից անմիջապես հետո ու ծավալով նախորդից անհամեմատ փոքր է: Բովանդակում է 110 տաղեր, որոնց թիվը՝ իբրև «փոխ» ներկայացող միավորների հետ միասին հասնում է 180-ի: Սրանց հետևում է մի հիշատակարան (թերթ 396բ), որը ձեռագրից թերթեր ընկած լինելու պատճառով պակասավոր է. «Փա՜ռք ամենասուրբ Երրորդութեանն յաւիտեանս յաւիտենից ամէն: Իսկապէս Բարին Աստուած յիսկութենէ և ի միշտ եութենէ խոնարհարհեալ. Բանն անքննելի և անհետազաւտելի իմացիւք իւրովք իմաստութեամբ Հայր կամա[ւ]...»:

Այս հիշատակարանին հաջորդող թերթից, բոլորովին տարբեր ձեռագրով, սկսվում է այլ բաժին՝ **«Սրբասացութիւնք սրբոյ պատարագի զատկաց»** խորագրով (թերթ 397ա—402ա): Ի վերջո գալիս է գրչի հիշատակարանը, որով և ձեռագիրն ավարտվում է:

Ինչպես տեսնում ենք, գրչի հիմնական հիշատակարանը բուն Տաղարանից անջատված է պատարագի երգերով: Առաջին հայացքից կարող է թվալ, որ դրանք Տաղարանին մաս չեն կազմում, որովհետև տարբեր է գրչությունը, իսկ տողերի քանակը քսաներեքի փոխարեն այստեղ քսաներկու է: Այստեղ, միջանկյալ այդ հատվածը չենք կարող չդիտել որպես տվյալ ձեռագրի օրգանական ու սկզբնական մասն այն պարզ պատճառով, որ նրա վերջին թերթի (402ա) հենց կեսից սկսվում է գլխավոր հիշատակարանը: Միաժամանակ, կարելի չէ ենթադրել, որ վերջինս, հիշյալ հատվածի հետ միասին պատկանած լինի մեկ ուրիշ ձեռագրի և թյուրիմացաբար կցված լինի այստեղ, որովհետև հիշատակարանի ու Տաղարանի գրչական բացարձակ նմանությունը թույլ չի տալիս տարակուսել երկուսի կապի մասին: Համոզվելու համար բավական է նկատի ունենալ «ջ» և «ձ» տառերի ինքնատիպ ձևերը, որոնք բնորոշ են և՛ մեկի, և՛ մյուսի համար:

Այսպիսով, Փարիզի № 79 ձեռագրի երկրորդ մասը պետք է դիտել իբրև մի ամբողջություն, որտեղ տարբեր գրչություն ունեցող պատարագի նյութերն, ըստ երևույթին, արտագրվել են ոչ թե Տաղարանի գրչի, այլ մեկ ուրիշի ձեռքով, բայց Տաղարանի ընդօրինակության ժամանակ, նրա գրչի կամքով ու գիտությամբ: Հավանաբար, դրանք ձեռագրի նախօրինակում չեն եղել և լրացվել են

[1] Սույն ձեռագրի առաջին մասին՝ Գանձարանին անդրադարձել ենք «Էջմիածին» ամսագրի 1971 թ. № Թ-ում (էջ 48—53):

ո րիշ աղբյուրից: Ինչ վերաբերում է զույգ հիշատակարանների առկայությանը, ապա առաջինը, որը գտնվում է Տաղարանին կից ու թերի է, հավանաբար, պատկանել է նախ-օրինակին: Հիշատակարաններից երկրորդը, որ գտնվում է վերջում, պահպանված է ամբողջությամբ: Ինչպես նշվեց, գրիչ Հովհաննեսն այստեղ խոսում է այն մասին, որ ձեռագիրն ընդօրինակվել է Դրազարկում՝ 1241 թ.: Այդ նույն հիշատակարանից պարզվում է, որ նա մի անգամ արդեն եղել է Կիլիկիայում, վերադարձել հայրենի բնակավայրը, որտեղ նրան վշտացրել է շրջապատի մարդկանց տգիտությունը, ուստի կրկին գնացել է Կիլիկիա: Ճանապարհին նրան կողոպտել են, խլել ձեռագրերը: Չունենալով Գանձարանի կամ Տաղարանի որևէ օրինակ, նա այստեղ որոնումներ է կատարում, մինչև որ հաջողվում է Հովսեփ երաժշտապետի մոտ գտնել մի լավ նմուշ, որից և ընդօրինակում է տվյալ Տաղարանը: Հիշատակարանի վերջում նա հիշում է նաև իր ազգականներից մի քանիսի անունները. «...Եւ զ**Վասիլ** փեսայ իմ և զիմ հարաղբայքն՝ զ**Բարսեղն** և զ**Ստեփանոս** և զ**Մխիթոցն** և զ**Նիկաոլ** և զիմ հայրիկ հարազատիկ և զմայր փոխան իմ և զամենեսեան յիշեսջիք ի Քրիստոս»: Այստեղ նա ակնարկում է նաև իր ձեռագրի համար գանձեր (քարոզներ) արտագրող ոմն Գրիգորի մասին («Եւ զ**Գրիգոր** գրագիր, որ աւժնընդակն եղև և գրեաց զՔարոզնին»), որը մինչև այժմ, թյուրիմացաբար, դիտվել է իբրև ձեռագրի առաջին մասի, այսինքն, առկա Գանձարանի գրիչ: Իրականում, սակայն, Գրիգոր դպրի արտագրած մասը մեզ չի հասել: Այժմ փորձենք պարզել այդ հարցը:

Խնդրի լուծումը, բնականաբար, պիտի որոնել հենց Տաղարանում: Ինչպես ասացինք, ձեռագրի այս մասի սկզբից պակասում են յոթ պրակներ, ընդամենը հիսունվեց թերթ (յուրաքանչյուր պրակը կազմված է ութ թերթից): Արդ, ի՞նչ կարող էր տեղավորված լինել այդ կորած պրակներում: Այստեղ անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալը. առկա վիճակով Տաղարանն սկսվում է Ներսես Շնորհալու «Այսաւր աւետեաց Գաբրիէլի լրումն...» տաղով՝ նվիրված Ծննդյան նրագալուցին. մի տոն, որով սովորաբար սկսվել են նաև ժողովածուները: Նույն ձևով է ներկայանում Տյուբինգենի Ma XIII 61 ձեռագիրը[2], իսկ գանձարանային Տաղարանների լավագույն նմուշներից մեկում՝ Մաշտոցի անվան Մատենադարանի № 3503 ձեռագրում, Ներսես Շնորհալու վերոնշյալ տաղն սկզբից երրորդն է: Ուրեմն, մեզ հետաքրքրող ձեռագրում առավելն պակասում է մեկ կամ մի քանի տաղ, իսկ դա չէր կարող ծածկել յոթ պրակ կազմող թերին: Մեր կարծիքով, բացակայող մասը հատկացված է եղել հենց այն գանձերին (քարոզներին), որոնց մասին խոսվում է հիշատակարանում և որոնց փոխարեն այժմ առկա է մեկ այլ, նոր Գանձարան: Թե ինչպե՞ս է կատարվել այդ փոփոխությունը՝ հասկանալի կդառնա, եթե փորձենք ստեղծել որոշ պատկերացում Գանձարանի մասին:

Ուշագրավ է նախ և առաջ այն փաստը, որ հիշատակարանում ժողովածուն կոչվում է սոսկ Տաղարան՝ «կատարեցաւ երգարանս տաղաց»: Բայց, միաժամանակ, կա նշում ձեռագրում տեղ գտած գանձերի ու դրանց գրչի՝ Գրիգորի մասին: Հովհաննեսին, ինչպես երևում է, առհասարակ հայտնի է, որ գոյություն ունեն Գանձարաններ ու Տաղարաններ: Հիշատակարանում նա գրում է. «Վասն զի ոչ ունելով ո՛չ Գանձարան, ո՛չ Տաղարան և ելեալ ի խնդիր աւրինակի հոտորական և ոչ գտանելով. և ապա գտեալ զաղեկ աւրինակ յոյժ գեղեցիկ զառն միոյ երաժշտապետի **Յուսեփ** կոչեալ և կարի հասու ամենայն իմաստից երաժշտից մինչև ի բաւանդակն, որ[ոյ] յաւուրս ոչ գտանի հանգոյն: Եւ արդ արարեալ սկիզբն Տաղարանիս և աւարտելով աւգնականութեամբ Աստուծոյ և սուրբ Աստուածածնին»:

Բերված տողերը վկայում են այն մասին, որ տվյալ դեպքում Հովսեփ երաժշտի ունեցածը միայն Տաղարան է, որն ընդօրինակել է Հովհաննեսը ու ժողովածուն այդպես էլ կոչել Տաղարան: Բայց, ինչպես տեսանք, նա խնդրում է հիշել նաև իր այդ ձեռագրի հա-

[2] **F. N. Finck und L. Gjandschezian**, Verzeichnis der armenischen Handschriften der königlichen Universitätsbibliothek, Tübingen, 1907, էջ 84—95:

մար գանձեր գրող Գրիգորին: Կնշանակի, պակասող յոթ պրակները գրեթե ամբողջապես նվիրված են եղել նշված Գանձարանին: Թե ի՞նչ նախօրինակ է օգտագործվել վերջինիս համար՝ մեզ հայտնի չէ: Պարզ է, սակայն, որ հիսունվեց թերթերում կարող էին տեղավորվել փոքրաթիվ գանձեր: Եթե յուրաքանչյուրի համար պահանջվել է առնվազն երեք թերթ, ու նկատի ունենանք, որ մասամբ թերի է նաև Տաղարանի սկիզբը, ապա այնտեղ կարող էր տեղավորվել առավելն տասնութ-քսան գանձ: Փաստերը ցույց են տալիս, որ, իրոք, հնագույն Գանձարաններն ունեցել են մոտավորապես այդպիսի ծավալ: Օրինակ, Մաշտոցի անվան Մատենադարանի № 2061 Գանձարանը, որն ընդօրինակվել է Տիրաշենում, 1310 թ., բովանդակում է քսան գանձ[3]: Քիչ ավելի գանձեր են գտնվում Տյուբինգենի՝ վերևում նշված Ma XIII 61 Գանձարանում, որն անթվական է, բայց իր կառուցվածքով ու բովանդակությամբ խիստ նման է նախորդին: Նշված ժողովածուները թեև փոքր են ու աղքատ, այնուամենայնիվ ամբողջական են, որովհետև այնտեղ առկա են եկեղեցական հիմնական տոները, մասնավորապես տերունականները: Մոտավորապես այդպիսին պետք է լիներ նաև Փարիզի № 79 ձեռագրից բացակայող Գանձարանը: Մտովին համեմատելով գանձերի այդ ժողովածուն առկա Տաղարանի հետ, կարող ենք ասել, որ նա անհամեմատ աղքատ է եղել: Գրչի վկայությունը, թե նա որոնել է Գանձարան ու Տաղարան, իսկ գտածը եղել է սոսկ Տաղարան, թելադրում է մտածել, որ այդ ճոխ Տաղարանի համար նա չի ունեցել համապատասխան Գանձարան, ուստի բավարարվել է եղած փոքրիկով: Թերևս Գանձարանի ու Տաղարանի այդ անհամապատասխանությունն էլ պատճառ է դարձել, որպեսզի հետագայում ձեռագրի Գանձարան մասը փոխարինվի մեկ ուրիշ, ավելի ճոխ օրինակով: Դա կարող էր տեղի ունենալ նաև ձեռագրի սկզբի մասի մաշվածության հետևանքով:

Ցավոք, Գանձարանների այդ հնագույն օրինակի գանձերից ոչ մի նմուշ չի պահպանվել: Ինչ վերաբերում է Տաղարանին, ապա վերջինս, իր կառուցվածքով ու բովանդակությամբ, հնագույն շրջանի մի շատ ուշագրավ գանձարանային Տաղարան է:

Անհրաժեշտ է նշել, որ վաղ շրջանի Տաղարանների առանձնահատկությունները բընորոշ են նաև Փարիզի հիշյալ Տաղարանին: Եկեղեցական տոների շարքը, սովորականի պես, այստեղ էլ սկսվում է Քրիստոսի Ծնընդով: Առկա են տաղեր Ծննդյան տոնի բոլոր ութ օրերի և՛ առավոտյան, և՛ երեկոյան ժամերի համար: **«Այլ տաղեր և մեղեդիք Ծննդի»** խորագրի տակ կրկին զետեղված են Ծննդյան տաղեր, ապա հաջորդում են տերունական մյուս տոներին նվիրվածները, մինչև Քրիստոսի Հարության տոնը: Երկրորդ բաժնում տեղ է հատկացված առանձին սրբերին ու հոգևոր հայրերին. Տաղարանն ավարտվում է Ղևոնդյանց նվիրված տաղով:

Տոների մոտավորապես նույնպիսի դասավորություն կարող ենք տեսնել նաև նույն ժամանակաշրջանի մյուս ժողովածուներում: Այս տեսակետից Փարիզի հիշյալ Տաղարանը համեմատելի է Մաշտոցի անվան Մատենադարանի № 3503 ձեռագրի առաջին 318 թերթերի հետ: Ձեռագիրը 1394 թ. Սսում ընդօրինակված մի ժողովածու է. նրա ու վերևում նշված Տաղարանի ընդհանրությունը կայանում է նրանում, որ երկու ձեռագրերում էլ ընդգրկված են գրեթե միևնույն տոները: Հաճախ միանման են նաև տաղերն ու նրանց «փոխ»-երը (օրինակ, Ծննդյան և Հարության տաղերի շարքը): Այս բոլորը, սակայն, հիմք չեն տալիս ասելու, որ մեկն ընդօրինակվել է մյուսից, քանի որ տոների հաջորդականությունը երկու ձեռագրերում մինչև վերջ միատեսակ չէ: Նրանք ներդաշն չեն նաև իրենց բովանդակած նյութերի քանակով. ընդ որում, շատ ավելի ճոխ է ու հարուստ № 3503 Տաղարանի համեմատվող հատվածը:

Փարիզի № 79 Տաղարանում նկատվում է որոշ օրինաչափություն նաև նյութերի դասավորության մեջ: Յուրաքանչյուր տաղի, որոշ բացառությամբ, կցված է լոկ մեկ միավոր՝ «փոխ»: «Տաղ» բառի փոխարեն երբեմն

---

[3] Ձեռագրում գանձերի (քարոզների) ընդհանուր թիվը քսաներեք է, սակայն, երեքը հետագայի հավելումներ են ու մաս չեն կազմում բուն ժողովածուին:

գործածված է «մեղեդի», իսկ երկու անգամ՝ «նվագ»:

Քննվող Տաղարանում տեղ գտած հեղինակների անուններն, ինչպես ուրիշ նման ժողովածուներում, արտահայտված են ծայրակապով, կամ պահպանված են խորագրերում: Այստեղ բացարձակ գերակշռություն ունեն Ներսես Շնորհալու ստեղծագործությունները (շուրջ յոթանասուն տաղ՝ մեծ մասամբ հրատարակված): Զգալի տեղ է հատկացված Գրիգոր Նարեկացուն: Կան նաև ուրիշներ՝ Անդրեաս, Պարթև, Կոստանդին, Քրիստոսատուր, Հովհաննես, Բարսեղ, Մովսես Քերթող, որոնց տաղերից բերված է ընդամենը մեկական կամ երկուական նմուշ, իսկ մի շարք տաղեր, չունենալով խորագիր կամ համապատասխան ծայրակապ, առայժմ համարվում են անհեղինակ:

Նշված հեղինակներից առանձին հետաքրքրություն է ներկայացնում Հովհաննեսը, որովհետև խնդրո առարկա ձեռագրում նրա անունով ներկայացող Հոգեգալստյան տոնին նվիրված տաղը, ինչպես նաև մեկ ուրիշ՝ անհեղինակ տաղ, բանասիրությանը հայտնի են Հովհաննես Երզնկացու անունով: Վերջինիս ստեղծագործությունների առկայությունը այդքան վաղ ընդօրինակված մի ձեռագրում առաջ է բերում որոշ տարակուսանք, ստիպելով վերանայել ու ճշտել Հովհաննես Երզնկացու ծննդյան թվականը, ինչպես նաև հիշյալ տաղերի նկատմամբ նրա ունեցած հեղինակային իրավունքի հարցը:

Տաղարանի գրության ժամանակը (1241 թ.), ինչպես տեսանք, որևէ կասկած չի հարուցում: Բայց, արդյո՞ք դա համապատասխանում է Հովհաննես Երզնկացու ստեղծագործությունների ժամանակաշրջանին: Վերջինիս ծննդյան ու մահվան ստույգ թվականները չեն պահպանվել: Այդ կապակցությամբ եղել են զանազան ենթադրություններ. այժմ մահվան համար ընդունված է 1293 թ., իսկ ծնունդը ենթադրվում է ոչ վաղ, քան 1230 թ.[4]: Այսպիսով, նա ծնված է համարվում Փարիզի հիշյալ ձեռագրի ընդօրինակությունից առավելն տասնմեկ տարի առաջ: Պարզ է, որ տասնմեկ տարեկան հասակում Հովհաննես Երզնկացին չէր կարող նման բանաստեղծություններ գրել. մանավանդ, որ նշված տաղերը ձեռագրում, ինչպես ստորև կտեսնենք, ներկայանում են աղճատված ու թերի, վկայելով այն մասին, որ նրանք պետք է ստեղծված լինեին ձեռագրի ընդօրինակությունից առնվազն տասնամյակներ առաջ: Հետևապես, կա՛մ Հովհաննես Երզնկացին ծնվել է ոչ թե 1230, այլ 1200—1210-ական թվականներին, և կա՛մ Փարիզի № 79 ձեռագրում գտնվող հիշյալ տաղերը նրան չեն պատկանում: Ուշագրավ է, որ հնագույն շրջանի ժողովածուներում դրանք ներկայանում են մերթ իբրև ոմն Հովհաննեսի ստեղծագործություններ, մերթ անհեղինակ, իսկ Հովհաննես Երզնկացու անունով հիշվում են ավելի ուշ: Այս պարագաներում անհրաժեշտություն է զգացվում մոտիկից ծանոթանալ հիշյալ տաղերին և նրանց հետ կապված պատմությանը:

Քննության առարկա տաղերից առաջինն ունի **«Տաղ մեծի Երկշաբ[աթի]»** խորագիրը (թերթ 351ա—351բ), բաղկացած է տասնութ տողից և սկսվում է «Աւաղ խրամատեաց...» բառերով: Ստորին լուսանցքում միևնույն գրչի ձեռքով գրված են հետևյալ տողերը.

Անդ ի մէջ դրախտին երեք անձինք եին՝
Ադամ և Եւայ, ամենամեծն Աստուած.

Արդ, ինչո՞վ են այս տողերը առնչվում վերոհիշյալ տաղի հետ: Գանձերի ու տաղերի ժողովածուներում հաճախ լուսանցքներում բերվում է որևէ տաղի համառոտ սկիզբը՝ «ձայնիւն ասա», «եղանակաւն ասա» «գոյն է» և այլ նման նշումների հետ: Դրանք պարզապես հուշում են, որ համապատասխան ստեղծագործությունը պիտի երգել լուսանցքում ցույց տրված տաղի եղանակով: Հարկ է ասել, սակայն, որ տվյալ դեպքում «Անդ ի մէջ դրախտին...» տողերի առկայությունն այդ կերպ բացատրել չենք կարող, որովհետև դա ոչ թե կրճատ ձևով կատարված սովորական նշում է, այլ երկու լրիվ տողերից կազմված մի պարբերություն: Բացի դրանից, ձեռագրի լուսանցքում կա տաղի եղանակային կատարումը մատնանշող հա-

[4] Ա. Սրապյան, Հովհաննես Երզնկացի, Երևան, 1958, էջ 38:

տուկ հղում՝ «Հոսեալ հրե[ղինաց]...»[5]: Պարզ է, որ «Անդ ի մէջ դրախտին...» տողերն այստեղ բերված են այլ նպատակով: Ուշագրավ է, որ նշված տաղը հետագայի ընդօրինակությամբ հայտնի է շատ ձեռագրերից, որպես սկիզբ ունենալով վերոհիշյալ երկու տողերը: Հետևապես պիտի ենթադրել, որ Փարիզի № 79 ձեռագրի գրիչը, ընդօրինակությունն ավարտելուց հետո, ձեռք է բերել տաղի այլ օրինակ, որի մեջ իբրև սկիզբ եղել են այդ երկու տողերը, ուստի և նա իր նախնական օրինակի պակասը լրացրել է ստորին լուսանցքում:

Հետաքրքրական է նկատել, որ լուսանցքում լրացված տողերից երկրորդի «ամենամեծն Աստուած» մասն ունի ուղղման նշան, որի դիմաց համապատասխանաբար ավելացված են «Աւձն», «և պատուիրանն Տեառնն» բառերը: Վերջին դարձվածքը թվում է, թե տարընթերցում է, մանավանդ որ տաղի մեզ ծանոթ մյուս բոլոր օրինակներում երկրորդ տողը ներկայանում է «Ադամ և Եւայ և պատուիրանն Տեառն» ձևով: Ուրեմն, քննվող ձեռագրում «և պատուիրանն Տեառն»-ը իրոք բերված է իբրև «ամենամեծն Աստուած»-ի ուղղում: Ինչ վերաբերում է մյուս՝ «Աւձն» բառին, ապա մեզ հայտնի չէ հիշյալ տաղի որևէ օրինակ, որտեղ երկրորդ տողում Ադամի և Եվայի կողքին, իբրև երրորդ անձնավորություն, հիշված լիներ օձը: Մեր կարծիքով, տվյալ դեպքում «Աւձն» բառը պարզապես մատնանշում է ձեռագրում իբրև սկիզբ ներկայացող «Աւձն խրամատեաց...» տողը և ցույց տալիս, որ վերջինս պետք է հաջորդի «Անդ ի մէջ դրախտին...» բառերով սկսվող երկտողին:

Մոտավորապես նույնպիսի պատկեր է ներկայացնում քննվող տաղի մեկ ուրիշ օրինակը՝ պահպանված Փարիզի № 80 Գանձարանում, որը դարձյալ սկսվում է «Աւձն խրամատեաց...» բառերով և ստորին լուսանցքում . ունի «Անդ ի մէջ դրախտին...» երկտողը[6]: Այստեղ, սակայն, ուղղման նշան է դրված և՛ բնագրի «Աւձն», և՛ ստորին լուսանցքում գտնվող «Անդ» բառերի վրա: Տարակույս չի մնում, ուրեմն, որ այս երկու ձեռագրերում հետագայում լրացված «Անդ ի մէջ դրախտին...» տողերը դիտվել են իբրև սկիզբ, որպեսզի ընթերցվեն «Աւձն խրամատեաց...»-ից առաջ:

Այսպիսով, Փարիզի № 79 ձեռագրում գտնվող մեզ հետաքրքրող տաղը, լուսանցքում լրացված երկու տողի հետ միասին, կազմված է քսան տողից: Որոշ ձեռագրերում այն ներկայանում է հենց այդպիսի ծավալով: Սակայն կան ձեռագրեր, որտեղ հանդիպում է հիշյալ տաղի սոսկ սկզբի հատվածը: Բանասիրուհի Ա. Սրապյանը ժամանակին անդրադարձել է այդ հարցին ու պարզել տաղի երկու հատվածների անհարազատությունը միմյանց: Ըստ այդմ էլ, Հովհաննես Երզնկացու չափածո երկերի տպագիր ժողովածուի մեջ նա խնդրո առարկա տաղի առաջին մասը, որտեղ նկարագրված է Ադամի ու Եվայի հանցագործությունը, «Անդ ի մէջ դրախտին...» սկզբնատողով, հրատարակել է իբրև Հովհաննես Երզնկացուն պատկանող թերի տաղ[7], իսկ երկրորդ կեսը՝ նվիրված բարի Սամարացու ավետարանական դրվագին, «Յիններորդ ժամուն...» տողից սկսած, համարել է ուրիշ տաղի հատված ու զետեղել «Ուսումնասիրություն» բաժնի երրորդ գլխում[8]:

Ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ այս բաժանումն էլ կարոտ է մասնակի ճշգրտման: Խոսքը վերաբերում է երկրորդ հատվածի սկզբի տողին, որն իր հերթին անհարազատ է թվում հաջորդ տողերին.

Յիններորդ ժամուն, որով ի խաչ ելաւ.
Դեպ եղև ընդ այն Սամարացոյն գալոյն,
Վայր անկեալ դներ այն կիսամահ մեռեալն...

Այստեղ, անշուշտ, «ի խաչ ելաւ» արտահայտությունը վերաբերում է Քրիստոսին: Տաղի մեկ այլ օրինակում դա առավել որոշակի է ասվում.

---

[5] Սա անհեղինակ մի տաղ է, որն առկա է նաև Փարիզի № 79 ձեռագրում (թերթ 355ա), և որի վերջին երկու տողերը հար և նման են մեզ հետաքրքրող տաղի ավարտին:

[6] Մաշտոցի անվ. Մատենադարանի մանրաժապավենների բաժին, № 454, թերթ 134բ:

[7] **Ա. Սրապյան**, նշված աշխ., էջ 237:

[8] **Ա. Սրապյան**, նշված աշխ., էջ 84:

Յիններորդ ժամուն, յորում որ և ի խաչ ելաւ Տէրն...[9]

Այդ իսկ պատճառով տվյալ տողը չի համապատասխանում հաջորդ հատվածին, որովհետև այնտեղ նկարագրվող Սամարացու դեպքը, ինչպես հայտնի է, պատմում է ինքը՝ Քրիստոսը, աշակերտների հետ զրուցելիս[10]: Ուստի, պիտի ենթադրել, որ նշված տողը կա՞մ խորթ է տաղի տվյալ հատվածին, կա՞մ տաղը ենթարկված է կրճատումների ու աղավաղումների:

Փարիզի № 79 ձեռագրում իբրև մեկ ամբողջություն ներկայացող հիշյալ բնագիրն, ուրեմն, բաղկացած է երկու (եթե նկատի չունենանք վերոհիշյալ տողը) տարբեր տաղերի հատվածներից: Սրանցից առաջինը թերի է վերջից (չունի փառաբանական սովորական ավարտը), իսկ երկրորդ մասը՝ սկզբից: Այս կապակցությամբ չափազանց կարևոր է տաղի՝ Մաշտոցի անվան Մատենադարանի № 3503 ձեռագրում հանդիպող օրինակը: Այստեղ Ավագ երկուշաբթի օրվան նվիրված տաղերի շարքում, **«Այլ տաղ նմին աւուրն»** խորագրի տակ (թերթ 127ա—128բ) պահպանված է հիշյալ բնագիրը՝ երկու հատվածներով, ինչպես նաև նրանց նախորդող մի նոր հատված, ընդամենը հիսուներկու տող: Առաջին հայացքից թվում է, թե նորահայտ տարբերակի շնորհիվ ստեղծագործությունն ամբողջանում է՝ վերագտնելով իր սկզբնական տեսքը: Քննությունը, սակայն, ցույց է տալիս, որ չնայած ոճի ու բանաստեղծական չափի ընդհանրությանը, իրականում այս օրինակն առավել բարդ կցումների արդյունք է: Հիշյալ նմուշն ունի «Անդ ի մէջ դրախտին...» սովորական սկիզբը, բայց երրորդ տողից սկսվում է նոր ու ընդարձակ մի հատված՝ բաղկացած երեսուներկու տողից, որն առայժմ այլ աղբյուրից մեզ հայտնի չէ: Տաղի այս նոր մասը նվիրված է Ադամի ու Եվայի երդմնազանցությանը և թողնում է ամբողջական տաղի տպավորություն, չնայած թվում է, թե վերջից մասամբ թերի է: Օրինակ, 31—32-րդ տողերում պատմվում է այն մասին, որ Ադամը, հետևելով կնոջը, ճաշակում է արգելված պտուղը

Յայնժամ Ադամայ հաւանելով կընոջն,
Առեալ դողութեամբ եկեր զմանու պատառն...

Սրանց անմիջապես հաջորդում է՝

Փախեան և թաքեան, բանգի և մերկ էին,
Ապաւէն գըտեալ ըզթըզենոյն տերևն...

Այստեղ «փախեան և թաքեան» բայերը վերաբերում են Ադամին ու Եվային: Բայց թե նրանք ումի՞ց էին փախչում՝ այդ մասին տաղում խոսք չկա. մինչդեռ ենթադրվում է Աստծու հայտնվելը, որից և պետք է ամաչեին ու թաքնվեին: Պիտի ենթադրել, որ այստեղ տողեր են պակասում: Հարց է առաջանում. արդյոք պակասող մասը «Աւաղն խրամատեաց...» բառերով սկսվող մեզ ծանոթ հենց այն տողերը չե՞ն, որոնք այստեղ անմիջապես հաջորդում են նորահայտ հատվածին: Ուշադիր ընթերցումը ցույց է տալիս, որ նման հնարավորությունը բացառված է, որովհետև նորահայտ հատվածի վերևում բերված տողերում շոշափված միտքը այլ շարադրմամբ կրկնվում է նաև «Աւաղն խրամատեաց...» տողով սկսվող հետևյալ հատվածում.

Մերձեցան ի ծառն, զոր հրամայեաց չուտել.
Ճաշակմամբ պըտղոյն, որով ըզմահն գործեաց,
Կերան և ծանեան երկուքն, զի մերկ էին...

Պարզ է, որ այս տողերը չեն կարող դիտվել իբրև նախորդի տրամաբանական շարունակությունը: Կնշանակի, քննության առարկա տաղի նորահայտ հատվածն էլ, իր հերթին, մի առանձին տաղ է, վերջից թերի, և զուրկ՝ սովորական ավարտից:

Այսպիսով, № 3503 ձեռագրում գտնվող Ավագ Երկուշաբթի օրվան նվիրված տաղի նշված անհամապատասխանությունները վկայում են, որ միևնույն խորագրի տակ միացել են առնվազն երեք տարբեր ստեղծագործություններ (չհաշված Քրիստոսի խաչելությունն ակնարկող տողը), ունենալով մեկ ընդհանուր ավարտ.

Արդ աւրհնեալ է Հայր և համագոյ Որդին,
Հոգին ճըշմարիտ ի յաւիտեանս, ամէն:

Հետաքրքրական է նկատել, որ «Անդ ի մէջ դրախտին...» երկտողը հավասարապես՝

[9] Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 3503, թերթ 127ա:

[10] Ղուկ. Ժ, 30—35:

ծառայում է որպես սկիզբ տաղի և՛ նորահայտ մասի, և՛ «Աւձն խրամատեաց...» բառերով սկսվող հատվածի համար: Թե ինչպե՞ս է դա պատահել, առայժմ դժվարանում ենք բացատրել: Պիտի ասել, սակայն, որ նշված տողերն ավելի են պատշաճում տաղի նորահայտ հատվածին ու, թերևս, պատահական չէ, որ Տաղարանների հնագույն օրինակում (Փարիզի № 79 ձեռագրում) «Աւձն խրամատեաց...»-ից առաջ այդ տողերն ընկըզբնապես չեն եղել: Այնուամենայնիվ, այն հանգամանքը, որ նշված տողերն օգտագործված են տարբեր տաղերի համար, վկայում է այդ անջատ ստեղծագործությունների փոխադարձ կապի և առնչության մասին: Դրանք, ըստ երևույթին, բոլորն էլ նվիրված են եղել միևնույն տոնին՝ Ավագ Երկուշաբթի օրվան: Սամարացու պատմությունը, թվում է, թե ոչ մի կապ չունի նշված տոնի հետ: Հայտնի է, սակայն, որ Ավագ Հինգշաբթի օրը եկեղեցում կարդացվող Բարսեղ Կեսարացու մի աղոթքի մեջ հիշատակվում են և՛ դրախտից արտաքսումը, և՛ Քրիստոսի Ծընունդն ու Զարչարանքները, և՛ Սամարացու պատմությունն ու Նոր կտակարանային այլ դրվագներ[11]: Ուրեմն, Սամարացուն վերաբերող տաղի հատվածը ևս կարող էր գրված լինել մոտավորապես նման առիթով՝ Ավագ Երկուշաբթի օրվա համար:

Այսպիսով, կարելի է ենթադրել, որ № 3503 ձեռագրում գտնվող բնագրի բաղկացուցիչ մասերը թեև հանդիսանում են առանձին միավորներ, բայց և այնպես, բովանդակությամբ ու տոնական կարգով առնչվում են միմյանց հետ: Մեր կարծիքով առաջին մասը եղել է բուն տաղը, իսկ երկրորդ և երրորդ հատվածները՝ «փոխ»-երը: Ժամանակի ընթացքում վերջիններս հեռացել են համապատասխան տաղից ու գործածվել առանձին, կամ կցվել ուրիշ տաղերի: Բայց, քանի որ նրանք հայտնի են եղել իբրև «Անդ ի մէջ դրախտին...» տաղի կցորդներ, ուստի այդ միևնույն սկիզբը վերագրվել ու, բնականաբար, պատշաճեցվել է նաև դրանց: Հնարավոր է նաև, որ դա առաջացած լինի մեխանիկական վնասվածքների և նախօրինակ որևէ ձեռագրի թերթերի կորստյան պատճառով:

«Անդ ի մէջ դրախտին...» տաղի և նրա կցորդների այս ոչ միատարր կառուցվածքի պատճառով զգալիորեն դժվարանում է նրանց հեղինակային պատկանելիության հարցի լուծումը: Խնդիրն այն է, որ առհասարակ գանձարանային տաղերին կցված «փոխ»-երը երբեմն հանդիսացել են համապատասխան տաղի հարազատ հատվածը, իսկ երբեմն՝ բոլորովին այլ ստեղծագործություններ: Ուստի, մեզ հետաքրքրող տաղը և իր «փոխ»-երը նույնպես կարող էին հորինված լինել մեկ կամ մի քանի հեղինակների կողմից: թե ինչպիսի մասնակցություն է ունեցել Հովհաննես Երզնկացին խնդրո առարկա տաղի այդ միավորների կամ նրանցից մեկի ստեղծման գործում, առայժմ մեզ պարզ չէ, քանի որ նրա անունն, ինչպես տեսանք, հանդիպում է լոկ ուշ շրջանի ձեռագրերում. մինչդեռ, մեզ հայտնի հնագույն շրջանի այնպիսի կարևոր ձեռագրերում, ինչպիսիք են Փարիզի № 79 և Մատենադարանի № 3503 Տաղարանները, նրա մասին չկա ոչ մի նշում:

Ուշագրավ է նաև Փարիզի № 79 ձեռագրում գտնվող մյուս տաղը, որն անհեղինակ է, բայց հետագայի ձեռագրերում երբեմն պատահում է Հովհաննես Երզնկացու անունով: Այն նվիրված է Հոգեգալստյան տոնին, ունի «Նուագ Հոգ[ոյն]» խորագիրը, սկսվում է «Նըլաւգեմք Հոգոյն նուագս վայելուչս...» բառերով (թերթ 368բ) և հոդում է «Նվագ Հոգոյն սրբոյ ի Յոհաննիսե ծառայե» նախադասությունը: Տաղն առկա է նաև Մատենադարանի № 3503 ձեռագրում՝ քիչ ավելի ընդարձակ ծավալով, ծայրակապն է. «Նվագ Հոգոյն սր[բ]ոյ ի Յոհաննիսե **անարժան** ծառայէ» (թերթ 194բ): Նույնպիսի ծավալ ունի տաղի տպագիր օրինակը, որի համար հիմք է հանդիսացել Մատենադարանի № 2672 ձեռագիրը, ընդօրինակված բավական ուշ՝ 17-րդ դարում, որտեղ տաղի խորագրում նշված է **«Յոհանէս Պլուզէ»**[12]: Այս օրինակը

[11] Կարգաւորութիւն հասարակաց աղօթից Հայաստանեայց եկեղեցւոյ, Վենետիկ, 1898, էջ 420—421:

[12] **Ա. Սրապյան**, նշված աշխ., էջ 277:

բաժանված է երկու մասի, որոնցից երկրորդը կոչվում է **«Յորդորակ»**[13]: Պետք է ասել, Պետք է ասել, որ շատ ավելի մաքուր և անաղարտ են տաղի՝ Փարիզի № 79 և Մատենադարանի № 3503 ձեռագրերում գտնվող նմուշները: Այսպես ենք ասում, որովհետև տողերի սկզբնատառերի փոխանցվող կըրկընումով ստեղծված շղթան հիշյալ ձեռագրերում օրինաչափ ընթացք ունի, մինչդեռ տպագրում և, անշուշտ, նրա համար հիմք հանդիսացած ձեռագրում, աղճատված է: Փարիզի № 79 ձեռագրում այդ օրինաչափությունը խախտված է մասամբ միայն՝ բացակայող հատվածի («անարժան») պատճառով: Տաղի այս համեմատաբար անաղարտ օրինակներում հեղինակը կոչվում է լոկ Հովհաննես, առանց որևէ մականունի, իսկ թե նա Հովհաննես Երզնկացին է, կամ մեկ ուրիշը՝ դժվար է ասել:

Այսպիսով, Ավագ Երկուշաբթի օրվան և Հոգեգալստյան տոներին նվիրված խնդրո առարկա տաղերը Հովհաննես Երզնկացու հեղինակությունը համարելու համար անհրաժեշտ են ավելի հիմնավոր փաստեր, իսկ այդպիսիք առայժմ բացակայում են:

Հարցի քննության համար, ինչպես տեսանք, կարևոր աղբյուր է Մատենադարանի № 3503 ձեռագիրը: Վերջինս առնչվում է Փարիզի № 79 ձեռագրի հետ նաև նրանով, որ երկուսն էլ ունեն Կիլիկյան ծագում: Նրանց այդ և այլ ընդհանուր տեղիներն օգնում են հասկանալու իրենց բովանդակած որոշ բնագրերի աղավաղումները: Այս առումով անհարկի չէր լինի անդրադառնալ № 3503 ձեռագրում պահպանված մի ուրիշ տաղի, որը թեև Փարիզի № 79 ձեռագրում բացակայում է, բայց կրկին կապվում է Հովհաննես Երզնկացու անվան հետ: Խոսքը **«Տաղ Աւետեաց Աստուածածնին. Խոսրովային»** խորագրով տաղի մասին է, որն սկսվում է «Յանեղական լուսոյն անընժամանակեա...» տողով (թերթ 35ա—36բ): Հովհաննես Երզնկացու տպագիր Տաղարանում այն ունի **«Մեղեդի Պըլըզոյ ասացեալ ի Ծննդէ»** խորագիրը: № 3503 ձեռագրում գտնվող ընդօրինակության բերած էական նորությունն այն է, որ այդտեղ տաղը բաղկացած է ութ տնից, յուրաքանչյուրը երեք, չորս կամ հինգ տողից (ընդամենը՝ երեսունչորս տող), մինչդեռ տպագրում առկա է միայն մեկ տուն՝ բաղկացած չորս տողից: Այսպիսով, շնորհիվ № 3503 ձեռագրի օրինակի, վերականգնվում է նշված տաղի լրիվ բնագիրը՝ **«Յոհանիսի»** ծայրակապով: Այդ Հովհաննեսի մասին օժանդակ տեղեկություններ դարձյալ բացակայում են: Ուստի, չնայած տպագիր օրինակում պահպանված «Մեղեդի Պըլըզոյ» վկայությանը, ինչպես նախորդների, այնպես էլ այս տաղի հեղինակային պատկանելիության հարցում, առայժմ ձեռնպահ ենք մնում:

Անհրաժեշտ ենք համարում նաև ավելացնել, որ քննվող տաղը թե № 3503 ձեռագրում, և թե տպագիր օրինակում ունի շարունակություն, որը տպագրում կոչված է «Յորդորակ», իսկ ձեռագրում ներկայացված է որպես «փոխ» («փ»): Այստեղ բնագրագիտական էական տարբերություններ չկան: Եթե տպագիր օրինակում տաղի և հորդորակի ծայրակապերը հոդում են «Յ գովեստ ի սուրբ կոյսն Մարիամէ» թերի նախադասությունը[14], ապա № 3503 ձեռագրի օրինակում այն լրիվ է. «Յոհանիսի գովեստ ի սուրբ կոյսն Մարիամէ» (թերթ 35ա—38ա):

Սրանք են անհա մեզ հետաքրքրող տաղերի նորահայտ տարբերակները, որոնք կարող են օգտակար լինել Հովհաննես Երզնկացու չափածո երկերի քննությամբ զբաղվողներին. ուստի, կից ներկայացնում ենք Ավագ Երկուշաբթի օրվան նվիրված տաղի՝ Փարիզի № 79 և Մատենադարանի № 3503 ձեռագրերում գտնվող օրինակները, ինչպես նաև Ավետյաց տոնին նվիրված տաղի՝ Մատենադարանի № 3503 ձեռագրից հայտնի դարձած նմուշը, առանց նրա «փոխ»-ի կամ «Յորդորակ»-ի:

Ամփոփելով մեր խոսքը, կարող ենք ասել, որ Փարիզի № 79 ձեռագիրը հնագույն շրջանի մի շատ ուշագրավ ժողովածու է, և նրա հետ կապված մի քանի հարցերի լուծումն ստանում է առանձին կարևորություն ու նշանակություն: Ամենաէականն այն է, որ պարզվում է ձեռագրի Գանձարան և Տաղա-

[13] Անդ, էջ 222, 223:

[14] Անդ, էջ 238—240:

բան մասերի տարբեր ժողովածուներ լինելը և փաստերի օգնությամբ առաջին անգամ ապացուցվում է, որ Տաղարանի ընդօրինակության թվականը (1241 թ.) մինչև այժմ թյուրիմացաբար է վերագրվել Գանձարանին. վերջինս պետք է գրված լինի Տաղարանից բավական հետո՝ հավանաբար 1300-ական թվականներին: Կարևոր է նաև այդ ձեռագրի Տաղարանին վերաբերող մի շարք առանձնահատկությունների բացահայտումը. օրինակ. պարզվում է, որ Տաղարանն սկզբից թերի է, ուր նախապես զետեղված է եղել Գանձարան, որը կորել է ու փոխարինվել նոր, առկա Գանձարանով: Այսպիսով, Փարիզի № 79 ձեռագրի Տաղարան մասը իր նախնական վիճակով եղել է ոչ թե գանձարանային տաղարանի, այլ Գանձարանի հնագույն թվակիր օրինակ՝ բաղկացած Գանձարանից ու Տաղարանից:

Ձեռագրի քննությունից պարզվում են նաև ուրիշ հարցեր կապված առանձին հեղինակների ու նրանց ստեղծագործությունների հետ: Օրինակ, Գանձարան մասի ընդօրինակության ժամանակի մոտավոր ճշտումը օգնում է պնդելու, որ նրանում տեղ գտած հեղինակներից Գեորգը ոչ թե Գեորգ Անեցին է, ինչպես ենթադրել է Ղ. Ալիշանը ձեռագրի համար ընդունված սխալ թվականի պատճառով, այլ Գեորգ Սկևռացին, իսկ Մովսեսը, հավանաբար Գեորգ Սկևռացու աշակերտ՝ Մովսես Երզնկացին: Նվազ հետաքրքրական չէ նաև Տաղարանում տեղ գտած երկու տաղերի հարցը, որից մեկն անհեղինակ է, իսկ մյուսը՝ պահպանված է Հովհաննեսի անունով: Դրանք մինչև այժմ բանասիրությանը հայտնի են եղել իբրև Հովհաննես Երզնկացու ստեղծագործություններ, սակայն, նրանց առկայությունը 1241 թ. ընդօրինակված այս Տաղարանում ստիպում է վերանայել Հովհաննես Երզնկացու ծննդյան թվականի ու այդ տաղերը նրա հեղինակությունը համարելու հարցերը: Ահա այսպիսի, նաև այլ խնդիրների շնորհիվ Փարիզի № 79 Գանձարան—Տաղարանը դառնում է խիստ կարևոր մի ժողովածու՝ արժանի հատուկ ուշադրության:

ՏԱՂ ՄԵԾԻ ԵՐԿՈՒՇԱԲ[ԱԹԻ]

*
* *

[Անդ ի մեջ դրախտին երեք անձինք եին՝
Ադամ և Եւայ, և պատուիրանն Տեառն][15].
Աւձն խրամատեաց զցանկ հոգոյն կենաց,
Արտաքսեաց զԱդամ ի լուսեղեն դրախտեն:
Ստունգանելով կնոջն հրամանի Բանին,
Մերձեցան ի ծառն, զոր հրամայեաց չուտեալ.
Ճաշակմամբ պտղոյն, որով զմահ գործեաց,
Կերան և ծանեան երկուքն, զի մերկ եին:
Ոտնաձայն եղև Տեառն Աստուծոյ գալոյն...

*
* *

Յիններորդ ժամուն, որով ի խաչ ելաւ...
Դեպ եղև ընդ այն Սամարացոյն գալոյն,
Վայր անկեալ դներ այն կիսամահ մեռեալն.
Ողորմած բնութեամբ իւր գթացեալ ի նա,
Գինով և ձիթով աւծանելով զվերքն,
Եդեալ ի գրաստու, ի պանդոկի աւծեալ,
Դարման խոստանայր յիւր միւ[ս]անգամ գալուստն:
Ո՞վ ճարտար բժիշկ և համառաւտայդեղ,
Ողջացոյ և զիս՝ զայս բազմավեր հիւանդս:
Արդ աւրհնեալ է Հայր և համագոյ Որդին,
Հոգոյն ճշմարտի փա՞ռք յաւիտեանս, ամեն:

Փարիզի Ազգային Մատենադարան,
ձեռ. № 79, թերթ 351ա—351բ

ԱՅԼ ՏԱՂ ՆՄԻՆ ԱՒՈՒՐՆ

*
* *

Անդ ի մէջ դրախտին երեք անձինք կային՝
Ադամ և Եւայ, և պատուիրանքն Տեառն.
Ցընծային զբարձ ուրախալից կենաւքն՝
Պըտղաւք դըրախտին մինչ կերակրեալք էին:
Ոչ երկեղ մահու, ոչ տըրտմութեան գուշակ,
Այլ անմահութեան լուսով լըցեալ էին.
Զարըն, մախացեալ ընդ մեծ բարոյն փառաց,
Նախանձու ծիրէր, խընդրէր հընարս իրացն:
Գըտեալ ի գազանս զաւձն իմաստուն ի չարն.

[15] Այս երկու տողը ձեռագրում ավելացված է հետո և զետեղված լուսանցքում (տե՛ս ուսումնասիրության մեջ):

Առեալ զնայ լեզու և խաւսեցաւ ընդ մայրն.
Ասէր նենգութեամբ այն անիծեալ վիշապն.
«Ընդէ՞ր ոչ ուտէք ի յամենայն ծառոցդ»:
Ուսանէր կամէր, քանզի տրգէտ է չարն,
Զքան սուրբ հրամանին, զոր պատուիրան ետ Տէրն.
Ասէր մայրն Եւայ, զոր և լուեալ ուսաւ.
«Յամէն ծառոց ուտել բայց ի միոյն միայն,
Ասաց Տէր Աստուած, զի մի՛ և հուպ լիցիմք,
Զի մի՛ ուտելով մահու մեռանիցիմք»:
Ետ պատասխանի այն չարահնար վիշապն,
Թէ՝ «Ո՛չ է այդպէս որպէս և դու կարծես.
Այլ գիտէր Աստուած՝ յորժամ դու զայդ գործես,
Աստուածք դուք լինիք և նըմանիք ի նայ»:
Զայն լուեալ կընոջն և յիմարեալ ի միտս,
Անդէն աղաղակէր, առեալ ուտէր զպըտուղն:
Մերկանայր ըզշնորհս զայն լուսեղէն փառացն.
Կայր խայտառակեալ մերկ ամաթով կանգնեալ.
Կոչէր և զԱդամ ի ծանկանընս իւր,
Լալով աղերսէր և անկանէր առ ոտս:
Ասէ՝ «Կերիցես և դու ընդ իս այսաւր,
Թերևս և ընդ քեզ Տէրն ողորմի և ինձ»:
Յայնժամ Ադամայ հաւանելով կընոջն,
Առեալ դողութեամբ եկեր զմահու պատառն:
Փախեան և թաքեան, քանզի և մերկ էին,
Ապաւէն գըտեալ ըզթզենոյն տերևն...

*
* *

Աւձըն խրամատեաց ըզցանգ այգոյն կենաց,
Արտաքսեաց զԱդամ ի լուսեղէն դրախտէն[16]:
Ստունգանել կընոջըն խաբողին Բանին,
Մերձեցան ի ծառն, զոր հրամայեաց չուտել.
Ճաշակմամբ պըտղոյն որով ըզմահ գործեաց,
Կերան և ծանեան երկուքն[17], զի մերկ էին:
Ոտնաձայն եղև Տեառն Աստուծոյ գալոյն...

*
* *

Յիններորդ ժամուն, յորում որ և ի խաչ ելաւ Տէրն...
Դէպ եղև ընդ այն Սամարացոյն գալոյ,
Վայր անգեալ դընէր այն կիսամահ խոցեալ[18].
Ողորմած բնութեամբն իւր գըթացեալ ի նա,
Գինով և ձիթով ածանելով ըզվէրսն,
Եդեալ ի գըրաստու, ի պանդոկի ածեալ,
Դարման խոստանայր զիւր միւսանգամ գալուստն:
Ո՞վ ճարտար բըժիշկ և համառաստաղեղ,
Ողջացոյ և զիս՝ զայս բազմավէր հիւանդս:
Արդ աւրհնեալ է Հայր և համագոյ Որդին,
Հոգին ճըշմարիտ ի յաւիտեանս, ամէն:

Մաշտոցի անվան Մատենադարան,
ձեռ. № 3503, թերթ 127ա—128բ

ՏԱՂ ԱՒԵՏԵԱՑ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ. ԽՈՍՐՈՎԱՅԻՆ

Յանեղական լուսոյն անըժամանակեա՝ լոյս անվայրապակ
Ի քեզ պարագրի, Մարիամ.
Աւետի՛ս, աւետի՛ս, աւետի՛ս քեզ, Տիրամայր:

Ո՞վ նոր խառնումն սքանչելի՝ անեղ ընդ եղումն.
Կուսութիւն և ծնունդ ի քեզ ը՛ ներգործի, Մարիամ.
Ուրա՞խ լեր, ուրա՞խ լեր, ուրա՞խ լեր, կոյս Տիրամայր:

Հաւր բանին մայր յերկրի,
Կոյս [ս]ուրբ՝ տըրողին մեզ հայր յերկինս.
Խաւսուն խորան ի քեզ բնակողին, Մարիամ.
Երանի՛, երանի՛, երանի՛ քեզ, Տիրամայր:

Ա[յ]սաւր՝ մեծ զարմանք հրաշից.
Տէրն որդի ծառայի ծընեալ,
Ծառայն որդի ստեղծողին միջնորդ, Մարիամ.
Մա՛յր լուսոյ, մա՛յր լուսոյ, մա՛յր լուսոյ, կոյս Տիրամայր:

Նոր պըտուղ բնութեանս քաղցրահամ,
Արմատ նորոյ աշխարհի,
Մահու մաւր ը՛ բըժիշկ,
Կենաց մայր, մաքուր Մարիամ.
Աննըմա՛ն, աննըմա՛ն, աննըմա՛ն, կոյս Տիրամայր:

[16] Ձեռագրում՝ նախ «փառացն», ապա ուղղված՝ «դրախտէն»:

[17] Ձեռագրում՝ նախ «նոքայ», ապա ուղղված՝ «Երկուքն»:

[18] Ձեռագրում՝ նախ «մեռեալն», ապա ուղղված՝ «խոցեալ»:

Ի քէն՝ ցընծութիւն մարդկան,
Երկանցն Եւայի լուծիչ,
Ադամայ ազատիչ,
Դրախտին բացաւդ դրան, Մարիամ.
Ցընծացէ՛ք, ցընծացէ՛ք, ցընծացէ՛ք, որդիք
Ադամայ:

Սէրովբէ հողանիւթ, հրածին ամպ,
Երկինք արեգականն արդար,
Մայր արքային մեծ,
Լեր մեզ բարեխաւս, Մարիամ.

Աւրհնեա՛լ մայր, աւրհնեա՛լ մայր, աւրհնեա՛լ
մայր, կոյս Տիրամայր:

Ի քէն ծընեալ ծեր մանկանն՝
Ընդ Հաւր և Հոգւոյն սրբոյ,
Փա՛ռք և պատիւ յաւիտեանս յաւիտէնից.
Աւրհնեցէ՛ք, աւրհնեցէ՛ք, աւրհնեցէ՛ք,
որդիք Ադամայ:

Մաշտոցի անվան Մատենադարան,
ձեռ. № 3503, թերթ 35ա—36բ

Օ. Ս. ԵԳԱՆՅԱՆ

ԵՐՎԱՆԴ ԼԱԼԱՅԱՆԻ «ԳՈՂԹՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԻՇԱՏԱԿՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԸ

Ե. Լալայանը իր «Օրդուբադի կամ Վերին Ագուլիսի ոստիկանական շրջան և կամ Գողթն» («Ազգագրական հանդես», գիրք XII, 1905) աշխատության մեջ, «Ձեռագիրներ» ընդհանուր խորագրի տակ (էջ 155—173), բացի Թովմա առաքյալի վանքապատկան 50 ձեռագրերից, որոնց կանդրադառնանք առանձին հոդվածով, համառոտակի նկարագրել է նաև 6 տարբեր գյուղերում տեսած 21 ձեռագրեր. այսպես.

Ա. Վերին Ագուլիսի ս. Հովհաննես Մը-կրտչի եկեղեցում (էջ 171)

1. «Աւետարան», ժամանակ՝ ՉԾԵ (1306), տեղ՝ Եղեգիս, գրիչ՝ Սարգիս կր., ստացող՝ Դանիէլ:
2. «Յովհաննու Ոսկեբերանի Մեկնութիւն Աւետարանի», ժամանակ՝ ՌՃԿԱ (1712), գրիչ՝ Ներսէս աբղ.:

Նշված ձեռագրերի ուր լինելը մեզ հայտնի չէ:

Բ. Ալահի գյուղի եկեղեցում (էջ 171)

1. «Աւետարան», ժամանակ՝ ՌՂԴ (1645), տեղ՝ Տեղ քաղաք, գրիչ՝ Մելքիսէթ:
2. «Աւետարան»:
3. «Ճաշոց»:

Նշված 3 ձեռագրերից Մաշտոցի անվան Մատենադարանում է գտնվում միայն № 1 Աւետարանը (№ 4336), որը Մատենադարան է մուտք գործել 1910-ին, իսկ մյուսների մատենագիտական սուղ տվյալները թույլ չեն տալիս կանգ առնելու այս կամ այն թվահամարի վրա:

Գ. Մարավանիսի ս. Մեսրոպի վանքում (էջ 171)

1. «Խորհրդատետր», ժամանակ՝ ՌՃԽԶ (1697), տեղ՝ Քիլի, գրիչ՝ Սահակ Ուսկուտարցի:

Ձեռագիրս Մատենադարանը ձեռք է բերել 1959 թվականին Ցոլակ Սուրենի Գևորգյանից (№ 9800):

Դ. Ներքին Ագուլիսի եկեղեցում (էջ 171—172)

1. «Յայսմաւուրք», ժամանակ՝ ՉԼԷ (1488), տեղ՝ Ագուլիս, գրիչ՝ Գրիգոր քհյ.:
2. «Ճաշոց», ժամանակ՝ ՌՃԻԳ (1674), տեղ՝ Կեսարիա, գրիչ՝ Սրապիոն:
3. «Յայսմաւուրք», ժամանակ՝ ՌՃԼԹ (1690), տեղ՝ Ագուլեաց դաշտ, գրիչ՝ Եփրեմ քհյ.:
4. «Աւետարան», ժամանակ ՌՃԼԲ (1683), գրիչ՝ Սարգիս քարտուղար:

Նշված 4 ձեռագրերից Մաշտոցի անվան Մատենադարանում են գտնվում միայն № 2 (6226) և № 4 (6561) ձեռագրերը, իսկ մյուս 2-ի (№№ 1, 3) ուր լինելը մեզ հայտնի չէ: № 6226 ձեռագիրը Մատենադարան է մուտք գործել 1922 թվականին Թավրիզի առաջնորդարանից ստացված 81 ձեռագրերի հետ միասին (№ 13) և մտել Մատենադարանի «Խառն հավաքածու»-ի մեջ (№ 1667), իսկ № 6561 ձեռագիրը Մատենադարանը ձեռք է բերել 1930 թվականին՝ Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի միջոցով:

Ե. Տանակերտի ս. Աստվածածին եկեղեցում (էջ 172—173)

1. «Աւետարան», ժամանակ՝ ՉՉ (1457), տեղ՝ Մամաս, գրիչ՝ Մատթէոս աբղ.:
2. «Յայսմաւուրք»:
3. «Յայսմաւուրք»:
4. «Յայսմաւուրք»:
5. «Աւետարան»:
6. «Աւետարան»:
7. «Աւետարան», ժամանակ՝ ՌՃԻ (1671), տեղ՝ Կարս:
8. «Մաշտոց»:
9. «Խորհրդատետր», ժամանակ՝ ՌՃԼԴ (1685):

Նշված 9 ձեռագրերից այսօր Մաշտոցի

անվան Մատենադարանում են գտնվում միայն 4-ը՝ № 1 (№ 3703), № 5 (№ 3832), № 6 (№ 3058), № 8 (3582), որոնք Մատենադարան են մուտք գործել 1907 թվականին՝ Թովմա առաքյալի վանքի վանահայր Սեսրոպ Մաքսուդյանի միջոցով: Մնացած 5 ձեռագրերի (№№ 2, 3, 4, 7, 9) հետագա ճակատագիրը մեզ հայտնի չէ:

Զ. Դիսարի գյուղի եկեղեցում (էջ 173)

1. «Յայսմաւուրք», վերջին ստացող՝ Ա-գուլեցի Փիրիպէկի որդի Ստեփաննոս, ՌՃՀԹ (1730):

2. «Ժամագիրք»: Ունի՝ ՌՄԽԴ (1795), ՌՄԽԶ (1797) և ՌՄԾԳ (1804) թվականների հիշատակագրություններ, որոնցից առաջինը վերաբերում է Աղա Մամադ-խանի արշավանքներին:

Նշված 2 ձեռագրերի ուր գտնվելն մեզ հայտնի չէ:

Այսպիսով, հիշատակված 6 գյուղերում արձանագրված 21 ձեռագրերից այսօր Մաշտոցի անվան Մատենադարանում են գտնվում միայն 8-ը:

Ստորև բերվող հին և նոր թվահամարների համեմատական տախտակում հերթական թվահամարի համարիչը ցույց է տալիս գյուղը, իսկ հայտարարը՝ ձեռագիրը:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ Ե. ԼԱԼԱՅԱՆԻ «ԳՈՂԹՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԻՇԱՏԱԿՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ

«Գողթն»		Թավրիզ 1922 թ.	Մատենադարան		
№ №	Էջ		«Գևորգյան»	«Խաչն Հվքծու»	Արդի
Ա/1	171	—	—	—	—
Ա/2	171	—	—	—	—
Բ/1	171	—	—	—	4336
Բ/2	171	—	—	—	—
Բ/3	171	—	—	—	—
Գ/1	171	—	—	—	9800
Դ/1	171	—	—	—	—
Դ 2	171	13	—	1667	6226
Դ/3	172	—	—	—	—
Դ/4	172	—	—	—	6561
Ե/1	172	—	1258	—	3703
Ե/2	172	—	—	—	—
Ե/3	172	—	—	—	—
Ե/4	172	—	—	—	—
Ե/5	172	—	1280	—	3832
Ե/6	172	—	1261	—	3058
Ե/7	172	—	—	—	—
Ե/8	173	—	1287	—	3582
Ե/9	173	—	—	—	—
Զ/1	173	—	—	—	—
Զ/2	173	—	—	—	—

ԿԱՐՎԱՆՍԱՐԱՅԻ (ԻՋԵՎԱՆԻ) Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

Նակար եպս. Բարխուդարյանցը իր «Արցախ» աշխատության մեջ (Բագու, 1895, էջ 343—346) անդրադառնալով Կարվանսարայի (Իջևանի) ս .Ամենափրկիչ եկեղեցուն, նշում է նաև եկեղեցում գտնվող հետևյալ 5 ձեռագրերը.

Ա. «Աւետարան», թղթյա, ժամանակ՝ ՉՀԱ (1322), տեղ՝ Աղուանաձոր, գրիչ՝ Յակոբ, ստացող՝ Մոսէս: Ունի նաև ՊԵ (1356) թվականի հիշատակագրություն:

Բ. «Աւետարան», թղթյա, երկաթագիր, անհիշատակարան:

Գ. «Աւետարան», ժամանակ՝ ՉԻԷ (1478), տեղ՝ Բջնի, գրիչ՝ Գրիգոր եպիսկոպոս, ստացող՝ Պատրոն:

Դ. «Աւետարան», թղթյա, ժամանակ՝ ՌՃԻԱ (1672), ստացող՝ Յովհաննէս տանուտէր:

Ե. «Աւետարան», թղթյա, ժամանակ՝ ՊՉ (1431), տեղ՝ Ամիթ, գրիչ՝ Գրիգոր:

Արձանագրված վերոհիշյալ 5 ձեռագրերից 3-ը (№№ Գ, Դ, Ե) այսօր որոշակիորեն գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում (տե՛ս կից տախտակը), իսկ մյուս 2-ի (№№ Ա, Բ) հետագա ճակատագիրն մեզ հայտնի չէ:

Սակայն 3 ձեռագրերից 1-ը (№ Դ) Մատենադարան է մուտք գործել 1910—1915 թվականների ընթացքում, 1-ը (№ Ե)՝ 1920 թվականին՝ Խաչիկ Դադյանի երկրորդ հավաքածուի հարյուրից ավելի ձեռագրերի շարքում (№ 27/30) և մտել Մատենադարանի «Նոր ժողովածու» կոչվող հավաքածուի մեջ (№ 1125), իսկ ինչ վերաբերում է № Գ ձեռագրին, ապա այն Հայաստանի Կուլտուր-պատմական թանգարանի ազգագրական արշավախումբը ձեռք է բերել 30-ական թվականների սկզբներին իջևանցի Գարեգին քահանա Եդիգարյանից և մուծել թանգարանի հարուստ հավաքածուի մեջ (№ 1324), որտեղից և Մատենադարան է մուտք գործել 1938 թվականի վերջերին:

Բացի վերոհիշյալ եկեղեցապատկան 5 ձեռագրերից, մեզ հայտնի է ևս մեկ ձեռագիր («Աւետարան», ժամանակ՝ ՌԺԲ (1563), տեղ՝ Տաք գիւղ Դիզակայ, գրիչ՝ Նասիպ սրկ. ստացող՝ Յովհաննէս երէց), որը Մատենադարան է մուտք գործել նույնպես 1938 թվականին՝ թանգարանի ձեռագրերի շարքում (№ 1325) և պատկանել է իջևանցի Մարտիրոս Բաղդասարյանցին:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ ԿԱՐՎԱՆՍԱՐԱՅԻ (ԻՋԵՎԱՆԻ) Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ

Կարվանսարա		Դարձյալ Հայկա-բաժնում	Գրական թերթեր	Մատենադարան	
Ս. Ամենա-փրկիչ	Մայ-ավոր			«Նոր ժլմնա»	Արդի
Ա	—	—	—	—	—
Բ	—	—	—	—	—
Գ	—	—	1324	—	7537
Դ	—	—	—	—	3975
Ե	—	27/30	—	1125	6430
—	Զ	—	1325	—	7571

Ժ. ՄՈՒՐԻԵԻ «ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԸ»

Ժ. Մուրիեի „Bibliothèque d'Edchmiadzine et les manuscrits arméniens„ («Էջմիածնի Մատենադարանը և հայկական ձեռագրերը») աշխատությունը, որը լույս է տեսել 1885 թվականին Թիֆլիսում, Գրաֆ Ս. Ս. Ուվարովի «Эчмиадзинская библиотека»[1] («Էջմիածնի Մատենադարանը») ուսումնասիրության ֆրանսերեն թարգմանությունն է՝ կատարված որոշ կրճատումներով:

Ինչպես ռուսերեն բնագրում, այնպես և ֆրանսերեն թարգմանության մեջ, համառոտակի նկարագրված է Էջմիածնի նախկին Մատենադարանի մանրանկարչական որոշակի արժեք ներկայացնող 34 ձեռագիր— 18 «Աստուածաշունչ» (№№ 7, 10, 12, 14, 16—19, 21, 22, 25—29, 31—34), 13 «Աւետարան» (№№ 1—3, 5, 6, 8, 9, 11, 13, 15, 18, 20, 24), 1 «Մանրուսմունք» (№ 23), 1 «Ճառք Յովհաննու Ոսկեբերանի» (№ 4) և 1 «Յաղագս երկնային քահանայապետութեան Դիոնեսիոսի Արիսպագացւոյ» (№ 30):

Նկարագրված բոլոր ձեռագրերն էլ այսօր առկա են Աշտոցի անվան Մատենադարանում և պահվում են հետևյալ թվահամարների ներքո.

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ Ժ. ՄՈՒՐԻԵԻ «ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ...» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ

Մուրիե	Մատենա-դարան	Մուրիե	Մատենա-դարան	Մուրիե	Մատենա-դարան	Մուրիե	Մատենա-դարան
1	2574	10	178	19	182	28	2669
2	283	11	234	20	1519	29	188
3	3723	12	345	21	353	30	2503
4	988	13	197	22	206	31	202
5	311	14	179	23	591	32	349
6	288	15	2848	24	225	33	200
7	177	16	180	25	2670	34	350
8	987	17	181	26	2627		
9	275	18	2321	27	351		

[1] «Пятый археологический съезд в Тифлисе», Москва, 1882, стр. 350—377.

ՑԱՆԿ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ 1971 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԻ

Ա. ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ գեր. տ. Սերովբե արքեպ. Մանուկյանին՝ Գերմանիայում հայկական կրոնական համայնք կազմակերպելու մասին, Գ 3:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Եթովպիայի եկեղեցու պատրիարքի ընտրության առթիվ, Դ 3:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը մայր հայրենիքում Նոր Այնթապի անվանակոչության առթիվ, Ե 3:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Կալիֆոռնիայի թեմի նորընտիր առաջնորդի ընտրության առթիվ, Ե 5:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանի 150-ամյակի առթիվ, Զ—Է 4:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Ամերիկայի Միացյալ Նահանգաց Թրոյ քաղաքի հայոց ս. Պետրոս եկեղեցու օծման առիթով, Զ—Է 7:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Ամերիկայի Միացյալ Նահանգաց հայոց եկեղեցու երիտասարդաց կազմակերպության 25-ամյակի առիթով, Զ—Է 9:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Լիոն քաղաքի քաղաքագլուխ տիար Լուի Պրադելին, ԺԲ 3:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը տ. Նարեկ վարդապետ Շաքարյանին՝ Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ նշանակելու առիթով, ԺԲ 5:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ցավակցական հեռագիրը Նորին Սրբազնություն Միտրոպոլիտ Պիմենին՝ Բուլղարիայի Նորին Սրբություն Տ. Կիրիլ Պատրիարքի մահվան առթիվ, Գ 5:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական հեռագիրը Վրացական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Գիվի Զավախիշվիլուն՝ Սովետական Վրաստանի հիսնամյակի առթիվ, Ե 7:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական հեռագիրը համայն Վրաց Պատրիարք-կաթողիկոս Եփրեմ Բ-ին՝ Սովետական Վրաստանի հիսնամյակի առթիվ, և պատասխանը, Ե 8:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ցավակցական հեռագիրը Նորին Սրբություն Պողոս Զ Սրբազան Պապին՝ կարդինալ Գրիգոր Աղաջանյանի մահվան առթիվ, և պատասխանը, Ե 9:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ցավակցական հեռագիրը ՍՍՀՄ Մինիստրների սովետի նախագահ Ա. Ն. Կոսիգինին՝ սովետական երեք տիեզերագնացների զոհվելու տխուր առիթով, Զ—Է 3:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Բուլղարիայի Նորին Սրբություն Տ. Մաքսիմ Պատրիարքին՝ նրա ընտրության և գահակալության առթիվ, Ը 3:

Ամանորի և Փրկչի հրաշափառ և սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները, Ա 6:

Ամանորի և Փրկչի հրաշափառ և սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն

Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և նվիրապետական Աթոռների ու առաջնորդարանների միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները, Ա 10:

Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները, Դ 8:

Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և նվիրապետական Աթոռների ու առաջնորդարանների միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները, Դ 11:

Բ. ԴԻՎԱՆ ՍԱՅՐ ԱԹՈՌԻ

Հաղորդագրություն (Մայր Աթոռում 1972 թվականի սեպտեմբերի 24—29-ին եպիսկոպոսաց ժողով հրավիրելու մասին), Ե 10:

Հաղորդագրություն (Վեհափառ Հայրապետի՝ մայիսի 8—10 օրերին Շիրակի թեմին այցելություն տալու առթիվ), Ե 11:

Հաղորդագրություն (Վեհափառ Հայրապետի գահակալության 16-րդ տարեդարձի առթիվ Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ տիար Այեքս Մանուկյանի՝ ուիտավորաբար Մայր Աթոռում գտնվելու մասին), Ժ 6:

Հաղորդագրություն (Անթիլիասի Տանն Կիլիկիո կաթողիկոսության չորս ներկայացուցիչների՝ Մայր Աթոռ ս. Էջմիածին այցելության մասին), ԺԱ 7:

Ծանուցում (Տ. Կոմիտաս քահանա Շիրինյանին կարգալույծ անելու մասին), ԺԱ 19:

Հայտարարություն (Մայր Աթոռ ս. Էջմիածնի և Անթիլիասի Տանն Կիլիկիո Աթոռի հարաբերությունների մասին), ԺԲ 10:

Գ. ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Վասպուրականի Արծիվը, Բ 3:

Տէր, անսասան պահիր դու միշտ, քո իսկ հիմնած Մայր Աթոռ, Ժ 3:

Վարդապետք եկեղեցւոյ, ԺԱ 3:

Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանի հիմնադրության հարյուրհիսունամյակը, ԺԲ 7:

Դ. ԿՐՈՆԱ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԵՂԻՇԵ ԱՐՔ. ԴՈՒՐՅԱՆ—Խոսք մը Ծննդյան առթիվ, Ա 13:

ՆԱՐԵԿ ՎՐԴ. ՇԱՔԱՐՅԱՆ—Խորհրդածություններ Մեծ պահքի շրջանին, Գ 25:

ՋԳՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ—Զատիկի տոնը ըստ հնագույն ավանդության, Դ 23:

Հովվապետական այցելություն Շիրակի թեմին, Ե 13:

Փարիզի հայոց ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու առաջնորդարանում գումարված խորհրդակցական ժողով, Ե 26:

Կյուրեղ Երուսաղեմի Հայրապետի թուղթը առ Կոստանդ կայսր՝ Խաչի երևման առթիվ, Ե 30:

ՍԵՍՐՈՊ ԱՐՔԵՊ. ՆՇԱՆՅԱՆ—Հոգեգալուստ, Ե 33:

Մոսկվայի և համայն Ռուսաստանի Ն. Ս. Տ. Պիմեն Նորընտիր Պատրիարքի ընտրության և գահակալության հանդիսությունները, Զ—Է 12:

Հոգևորականաց համագումար Միացյալ Նահանգների հայոց արևելյան թեմի, Զ—Է 17:

Աղոթք Ներսես Շնորհալի Հայրապետի խաղողի օրհնության համար, Զ—Է 43:

Աղոթք ս. Եղիշե վարդապետի Քրիստոսի այլակերպության (Վարդավառի) տոնին առթիվ, Զ—Է 45:

Վեհափառ Հայրապետը Ժնևում, Ը 4:

Եթովպիայի քույր եկեղեցու Նորին Սրբություն Աբունա Թեոֆիլոսի ընտրությունն ու գահակալությունը, Ը 6:

Բուլղար օրթոդոքս եկեղեցու Նորին Սրբություն Տ. Նաբսիմ Սրբազան Պատրիարքի ընտրությունն ու գահակալությունը, Ը 9:

Հովվական այցելություն, Ը 12:

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊ. ԳՈՒՇԱԿՅԱՆ—Սուրբ Աստվածածնի տոները, Ը 23:—Տոնք Խաչի, Թ 3:

Համաքրիստոնեական չորրորդ խաղաղության կոնֆերանսը Պրագայում, Ժ 45:

ՊՐՈՖ. ԻՈԱՆ ՔԱՀԱՆԱ ԿՈՄԱՆ—Առաջին չորս դարերի հայրաբանական գրականության արժեքը անտիկ մշակույթի շրջանակում, ԺԱ 8:

ԶԱՎԵՆ Ծ. ՎՐԴ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ—Եկեղեցագիտական միջազգային վեցերորդ համագումար, ԺԱ 22:

Ղպտի ուղղափառ եկեղեցու Ն. Ս. Շնուտա Գ Նորընտիր Պատրիարքի գահակալության հանդիսությունը, ԺԲ 11:

Առաջնորդական տեղապահի նշանակում Շիրակի թեմում, ԺԲ 19:

Ե. ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐ

ՎԱՉԳԵՆ Ա—Խրիմյան Հայրիկ որպես դատիարակ, Բ 5:

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ

Հրավիրակ արարատյան, Բ 11:

Հրավիրակ երկրին ավետյաց, Բ 12:

Մարգարիտ արքայության երկնից, Բ 12:

Հիսուսի վերջին շաբաթ և խաչի ճառ, Բ 14:

Ժամանակ և խորհուրդ յուր, Բ 15:

Վանգույժ, Բ 16:

Հայգույժ, Բ 17:

Դրախտի ընտանիք, Բ 18:

Սիրաք և Սամվել, Բ 18:

Պապիկ և Թոռնիկ, Բ 20:

Թագավորաց ժողով, Բ 21:

Խոսք հրաժարման Խրիմյան ս. պատրիարքի հայոց, Բ 22:

Խրիմյան Հայրիկի խոսքը ուղղված ամերիկահայ ժողովրդին որպես նոր տարվա մաղթանք, Բ 23:
Վկայություններ Խրիմյան Հայրիկի մասին, Բ 24:
ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՇԱԿՅԱՆ—Խրիմյան Հայրիկ, Բ 33:
ՀՈՒՍԻԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԶՈՀՐԱԲՅԱՆ—Խրիմյան Հայրիկի մահը, Բ 40:
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ—Երկու հայր, Բ 46:
Ա.Վ. ԻՍԱՀԱԿՅԱՆ—Խրիմյան Հայրիկը, Բ 47:
ՍԻԱՍԱՆԹՈ—Խրիմյան Հայրիկ, Բ 52:
Երջանկահիշատակ Խրիմյան Հայրիկի ծննդյան 150-ամյակին նվիրված հանդիսություններ Մայր Աթոռում, Բ 54:
ԳՈՀԱՐ ԱԶՆԱՎՈՒՐՅԱՆ—Խրիմյան Հայրիկի նամակագրական ժառանգությունից, Բ 59:

Զ. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հայրապետական քարոզ Փրկչի հրաշափառ Ծնընդյան տոնի առթիվ Մայր տաճարում, Ա 3:
Հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագ և քարոզ Փրկչի հրաշափառ Ծննդյան տոնի առթիվ, Ա 14:
Ամանորը հոգևոր ճեմարանում, Ա 17:
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ, Ա 19, Բ 63, Գ 23, Դ 15, Ե 28, Զ—Է 32, Ը 26, Թ 17, Ժ 41, ԺԱ 16, ԺԲ 14:
Ներքին թեմերի խորհրդակցական ժողով Մայր Աթոռում, Գ 8:
Սուրբ Վարդանանց ու Ղևոնդյանց տոնը և վեհափառ Հայրապետի անվանակոչության տարեդարձը Մայր Աթոռում, Գ 11:
Գեղարվեստական երեկույթ՝ նվիրված ս. Գրիգոր Նարեկացու ստեղծագործությանը, Գ 16:
Վեհափառ Հայրապետի քարոզը Փրկչի հրաշափառ սուրբ Հարության տոնի առթիվ Մայր տաճարում, Դ 4:
Հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագ և քարոզ Մայր տաճարում Փրկչի հրաշափառ Հարության տոնի առթիվ, Դ 14:
Հոգեճանգիստ Մայր տաճարում տաղանդավոր բանաստեղծ Պարույր Սևակի ողբերգական մահվան տխուր առիթով, Զ—Է 19:
Ամավերջի հանդիսություն հոգևոր ճեմարանում, Զ—Է 28:
ԱՐՏԱՇԵՍ ՍՐԿ. ՄՈՒՇԵՂՅԱՆ—Ամերիկայի Միացյալ Նահանգաց հայոց եկեղեցու երիտասարդաց կազմակերպության անդամները Մայր Աթոռում, Ը 15:
Հոգևոր ճեմարանի 1971—1972 ուսումնական տարվա վերաբացումը, Թ 10:
Մայր Աթոռի տպարանի վերաբացման տասնամյակը, Թ 12:
Սիդնեյաբնակ ուխտավորները Մայր Աթոռում, Թ 14:
Հանդիսություններ Մայր Աթոռում՝ վեհափառ Հայրապետի գահակալության 16-րդ տարեդարձի առթիվ, Ժ 9:
Քահանայական ձեռնադրություններ, Ժ 38:
Ավարտաճառերի բանավոր պաշտպանություն հոգևոր ճեմարանում, Ժ 43:
Ծայրագույն վարդապետական իշխանության տվչություն, ԺԱ 20:
Հանդիսություններ Մայր Աթոռում՝ նվիրված Կակաթայի Մարդասիրական ճեմարանի հիմնադրության 150-ամյակին, ԺԲ 17:

Է. ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ—Խորհուրդ մեծ և սքանչելի, Ա 15:
ԳՐԻԳՈՐ Բ ՎԿԱՅԱՍԵՐ—Ո՞վ զարմանալի, Ա 15:
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՑԻ—Այսօր ձայնն հայրական, Ա 16:
Հատընտիր հատվածներ Ավագ շաբաթվա շարականներից, Դ 18:
Խաչի շարականներ, Թ 6:
Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ—Ներբող սուրբ Աստվածածնի, Ը 18:
Տաղ սուրբ Աստվածածնի, Ը 21:

Ը. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Կանոնագլուխք ի պէտս հանդիսաւոր աւուրց, ԺԱ 33:
Մահու դատեա, ԺԱ 40:

Թ. ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԲԳԱՐՅԱՆ Գ. Վ.—Մասիսի անվանադրության ավանդությունները ըստ Մովսես Խորենացու և Անանունի, ԺԲ 25:
ԱԶՆԱՎՈՒՐՅԱՆ ԳՈՀԱՐ—Անտիպ էջեր Տ. Գարեգին Հովսեփյան կաթողիկոսի նամակագրական ժառանգությունից, Թ 19, ԺԱ 25:
ԱՄԻՐԶԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ԶՈՒՄՇՈՒԴԻ—Հին բաբելոնական Բել աստծու կերպարը Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ, Զ—Է 77:
ԱՆԱՍՅԱՆ Հ. Ս.—Հայ համաբարբառային գրականությունը և հայ մատենագրության համաբարբառը, ԺԱ 49:—Հայ համաբարբառային գրականությունը և հայ մատենագրության համաբարբառը, ԺԲ 49:
ԱՎԵՏԻՍՅԱՆ ԿԱՄՍԱՐ—Ուխտագնացություն դեպի Տաթև, Զ—Է 35:
ԵԳԱՆՅԱՆ Օ. Ս.—Գանձասարի հայերեն ձեռագրերի հավաքածուն, Դ 59:—Հառիճի վանքի հայերեն ձեռագրերի հավաքածուն, Դ 63:—Թարգմանչաց վանքի հայերեն ձեռագրերը, Ե 57:—Հովհաննես Ծ. վարդապետ Գրիգորյանի հայերեն ձեռագրերի հավաքածուն, Զ—Է 83:—Սարգիս Հայկունու «Բագրևանդ» գրքում հիշված ձեռագրերը, Զ—Է 84:—Նարիման Մելիք-Զոհրաբյանի հայերեն ձեռագրերի հավաքածուն, Զ—Է 85:—Գետաշենի ավագ սուրբ Նշան մատրան հայերեն ձեռագրերը, Թ 54:—Մուղնու ս. Գևորգ վանքի հայերեն ձեռագրերը, Թ 55:—Կարապետ արքեպս. Բագրատու-

նու հայերեն ձեռագրերի հավաքածուն, Թ 56:—Երվանդ Լալայանի «Գողթն» աշխատության մեջ հիշատակված ձեռագրերը, ԺԲ 42:—Կարվանսարայի (Իջևանի) ս. Ամենափրկիչ եկեղեցու ձեռագրերի հավաքածուն, ԺԲ 45:—Ժ. Մուրիեի «Էջմիածնի մատենադարանը և հայկական ձեռագրերը», ԺԲ 44:

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Հ.—Դսեղի Բարձրաքաշ ս. Գրիգորի և Քառասնից մանկանց վանքերը և գյուղի մյուս՝ առավել կարևոր հուշարձաններն ու դրանց վիմագիր արձանագրությունները, Ա 37, Գ 40:—Ներքին Թալին գյուղի ս. Քրիստափորի անվան վանքը, նրա վիմագիր արձանագրությունները և գյուղի մյուս հուշարձանները, Ը 52:

ԹԱՀՄԻԶՅԱՆ Ն.—Հասարակ օրերի կանոնագրությունները, Դ 37:—Հանդիսավոր օրերի կանոնագրությունները, Թ 41:

ԹԱՄԱՆՅԱՆ ՅՈՒ. Ա.—Մարմաշենի վանքի վերանորոգումը, Ե 50:

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿԻ—Մովսես Խորենացուն վերագրվող շարականները, Ա 27:—Հովհան Մանդակունուն վերագրվող շարականները, Գ 31:—Շարակնոցն իբրև հոգևոր երգերի ժողովածու, Զ—Է 56:—Հայկական շարականների աղբյուրները, Ը 47:

ՀԱԿՈԲՅԱՆ Հ.—Ավետարանական պատկերագրության առանձնահատկությունները Վասպուրականում, Դ 52:

ՀԱՏԻՏՅԱՆ Ա.—Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանի հիմնադրության հարյուրհիսունամյակի առիթով, Ը 31, Թ 25, Ժ 47:

Հ. Ա.—Հայ ճարտարապետության անխոնջ և բազմավաստակ մշակը (Վարազդատ Հարությունյան), Ա 34:

ՀՈՎՍԵՓՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔ.—Նկարիչ Եղիշե Թադևոսյան, Գ 34:

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ—Հաղբատի գրչության կենտրոնը, Ե 43:

ՄԱՎԼԵՐ ՖՐԵԴԵՐԻԿ—Հայաստանը և Իսլանդիան, Զ—Է 73:

ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆ ԲԱԲԳԵՆ ԵՊՍ.—Հուշեր Գարեգին Ա Կիլիկիո կաթողիկոսին, Ը 28:

ՏԱՅԱՆ Ա.—Դանտե Ալիգիերի, Ժ 60:

ՏԵՐՅԱՆ ՎԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ—Հայոց Հայրապետների շիրիմների մասին, Ա 21, Գ 29, Դ 25, Ե 38, Զ—Է 51, Ը 42, Թ 36:

ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԵՎՈՆ ՀԱԿՈԲԻ—Աբրահամ Խոստովանողը և իր գրական ժառանգությունը, Գ 56:

ՏԻԳՐԱՆՅԱՆ Է.—Ճարտարապետ Գաբրիել Տեր-Նիքեյան, Գ 49:

ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆ ԲԱԳՐԱՏ—Դադի կամ Խուրա վանք, Զ—Է 62:

ՔԵՐԵՆԹԵՃՅԱՆ Գ.—Սրբազան երգեցողությունը Հայաստանեայց եկեղեցւոյ, Ե 59:

ՔՅՈՇԿԵՐՅԱՆ Ա.—Փարիզի Ազգային Մատենադարանի № 79 Ձանձարան-Տաղարանը, Թ 48, ԺԲ 31:

ՔՈԼԱՆՋՅԱՆ Ս.—Մատենագիտություն պրոֆ. Հ. Ճ. Սիրունու հայագիտական աշխատությունների, Ա 45:

Ժ. ԳՐԱԿԱՆ

ԳԱԲՐԻԷԼ ՍԵՎԱԿ—Հայաստան, Զ—Է 24:—Մոր ձեռքերը Զ—Է 24.—Անլռելի Ձանգակատուն (հատվածներ), Զ—Է 25:

ԺԱ. ԱՓՅՈՒՌԲՈՒՄ

Ժառանգավորաց վարժարանի նոր շենքի հիմնարկեքը Երուսաղեմի հայոց վանքում, Ե 22:

Երուսաղեմի հայոց սրբոց Թարգմանչաց վարժարանը, Թ 62:

Մարսելի հայոց ս. Թադեոս եկեղեցին, Թ 63:

ԹՂԹԱԿԻՑ—Ամավերջի հանդես Ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի և ձեռնադրություն վեց կուսակրոն արեղաներու, ԺԲ 21:

ԺԲ. ՄԱՀԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Հանգիստ Նորին Սրբություն Բուլղարիայի Տ. Կիրիլ Պատրիարքի, Գ 6:

Նահ Միքայել Դ. Մազմանյանի, ԺԱ 41:

ԺԳ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ցուցակ Մայր Աթոռ ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի, Ե 61, Զ—Է 87, Ը 65, ԺԱ 43:



Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆ

ՀԱՅ ՀԱՄԱԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԲԱՐԲԱՌԸ

4. Ձեռ. № 7735: Ժամանակ՝ 986 թ.: Նյութ՝ մագաղաթ: Գիր՝ բոլորագիծ երկաթագիր: Գրիչ՝ անհայտ: Վայր՝ անհայտ: Ունի թե՛ եվս. կանոնները, թե՛ լուս. կանոններ:

5. Ձեռ. № 8906.—Ժամանակ՝ 988 թ.: Նյութ՝ մագաղաթ: Գիր՝ բոլորագիծ երկաթագիր: Գրիչներ՝ Հովհաննես քհ. և Հովսեփ քհ.: Վայր՝ անհայտ: Չունի եվս. կանոնները (թափված են սկզբի թերթերը): Ունի լուս. կանոններ:

6. Ձեռ. № 2374.— Ժամանակ՝ 989 թ.: Նյութ՝ մագաղաթ: Գիր՝ բոլորագիծ երկաթագիր: Գրիչ՝ Հովհաննես: Վայր՝ Նորավանք: Հայտնի է Էջմիածնի Ավետարան անունով[38]: Ունի թե՛ եվս. կանոնները, թե՛ լուս. կանոններ:

7. Ձեռ. № 4804.— Ժամանակ՝ 1018 թ.: Նյութ՝ մագաղաթ: Գիր՝ բոլորագիծ երկաթագիր: Գրիչ՝ Հովհաննես: Վայր՝ Տալաշու վանք (Կղոտ գավառ): Ունի թե՛ եվս. կանոնները, թե՛ լուս. կանոններ:

8. Ձեռ. № 283.— Ժամանակ՝ 1033 թ.: Նյութ՝ մագաղաթ: Գիր՝ բոլորագիծ երկաթագիր: Գրիչ՝ Քրիստափոր: Վայր՝ անհայտ: Ունի թե՛ եվս. կանոնները, թե՛ լուս. կանոններ:

9. Ձեռ. № 6201.—Ժամանակ՝ 1038 թ.: Նյութ՝ մագաղաթ: Գիր՝ բոլորագիծ երկաթագիր: Գրիչ՝ Եվարգրիս (sic): Վայր՝ Տարոն (?): Ունի թե՛ եվս. կանոնները, թե՛ լուս. կանոններ:

10. Ձեռ. № 3723.—Ժամանակ՝ 1045 թ.: Նյութ՝ մագաղաթ: Գիր՝ ուղղագիծ երկաթագիր: Գրիչ՝ Հուսիկ քհ.: Վայր՝ անհայտ: Չունի եվս. կանոնները (թափված են սկզբի թերթերը): Ունի լուս. կանոններ:

11. Ձեռ. № 3793.—Ժամանակ՝ 1053 թ.: Նյութ՝ մագաղաթ: Գիր՝ ուղղագիծ երկաթագիր: Գրիչ՝ Հովհաննես: Վայր՝ Սանդղկա վանք: Ունի թե՛ եվս. կանոնները, թե՛ լուս. կանոններ:

12. Ձեռ. № 3784.—Ժամանակ՝ 1057 թ.: Նյութ՝ մագաղաթ: Գրիչ՝ Թումման երեց: Վայր՝ Մելիտինե: Ունի թե՛ եվս. կանոնները, թե՛ լուս. կանոններ:

13. Ձեռ. № 311.—Ժամանակ՝ 1066 թ.: Նյութ՝ մագաղաթ: Գիր՝ բոլորագիծ երկաթագիր: Գրիչ՝ Գրիգոր Ակոռեցի: Վայր՝ Սեբաստիա: Հայտնի է Սեբաստիայի Ավետարան անունով: Չունի եվս. կանոնները (թափված են սկզբի թերթերը): Ունի լուս. կանոններ:

14. Ձեռ. № 275.— Ժամանակ՝ 1071—1079 թթ.: Նյութ՝ մագաղաթ: Գիր՝ ուղղագիծ երկաթագիր: Գրիչ՝ Հովհաննես: Վայր՝ անհայտ: Չունի եվս. կանոնները (չկան սկզբից թերթեր թափված լինելու նշաններ): Ունի լուս. կանոններ:

15. Ձեռ. № 288.—Ժամանակ՝ 1099 թ.: Նյութ՝ մագաղաթ: Գիր՝ ուղղագիծ

---

[38] Նախկին Էջմիածնի Մատենադարանի «հին» համարով՝ 229.

„L' Évangile Arménien. Édition phototypique du manuscrit no. 292 de la Bibliothèque d'Etchmiadzine publiée sous les auspices de M. Léon Mantacheff, par Frédéric Macler..", Paris, P. Geuthner, 1920.

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1971 թ. ԺԱ համարից:

երկաթագիր· Գրիչ՝ Անարովն կրոնավոր: Վայր՝ Աղեքսանդրիա: Ունի թե՛ եվս. կանոնները, թե՛ լուս. կանոններ:

16. Ձեռ. № 6763.—Ժամանակ՝ 1113 թ.: Նյութ՝ թուղթ: Գիր՝ ուղղագիծ երկաթագիր: Գրիչ՝ Գեորգ: Վայր՝ Դրազարկ: Ունի թե՛ եվս. կանոնները, թե՛ լուս. կանոններ:

17. Ձեռ. № 10360.—Ժամանակ՝ 1160 թ.: Նյութ՝ մագաղաթ: Գիր՝ ուղղագիծ երկաթագիր: Գրիչ՝ Սիոնն: Վայր՝ Խարբերդ: Ունի թե՛ եվս. կանոնները, թե՛ լուս. կանոններ:

18. Ձեռ. № 7347.—Ժամանակ՝ 1166 թ.: Նյութ՝ մագաղաթ: Գիր բոլորագիծ երկաթագիր: Գրիչ՝ անհայտ: Վայր՝ Հռոմկլա: Ունի թե՛ եվս. կանոնները, թե՛ լուս. կանոններ:

19. Ձեռ. № 313.—Ժամանակ՝ 1171 թ.: Նյութ՝ թուղթ: Գիր՝ ուղղագիծ երկաթագիր: Գրիչ՝ Հովհաննես քհ.: Վայր՝ Եդեսիա: Չունի ո՛չ եվս. կանոնները, ո՛չ լուս. կանոններ:

20. Ձեռ. № 7718.— Ժամանակ՝ 1173 թ.: Նյութ՝ թուղթ: Գիր՝ բոլորգիր: Գրիչ՝ անհայտ: Վայր՝ Կիլիկիա: Չունի եվս. կանոնները (թվում է, թե թերթեր չեն թափված սկզբից): Ունի լուս. կանոններ:

21. Ձեռ. № 6264.— Ժամանակ՝ 1181 թ.: Նյութ՝ մագաղաթ: Գիր՝ ուղղագիծ երկաթագիր: Գրիչ՝ Հայրապետ կրոնավոր: Վայր՝ Խաչկա վանք (Դարիճ): Ունի թե՛ եվս. կանոնները, թե՛ լուս. կանոններ:

22. Ձեռ. № 10359.— Ժամանակ՝ 1201 թ.: Նյութ՝ մագաղաթ: Գիր՝ ուղղագիծ երկաթագիր: Գրիչ՝ Ստեփանոս քհ.: Վայր՝ Ավագ վանք (Երզնկա): Ունի թե՛ եվս. կանոնները, թե՛ լուս. կանոններ:

23. Ձեռ. № 4301.— Ժամանակ՝ 1208 թ.: Նյութ՝ մագաղաթ: Գիր՝ բոլորգիր: Գրիչ՝ Ապլմսեն: Վայր՝ Կիլիկիա: Ունի թե՛ եվս. կանոնները, թե՛ լուս. կանոններ:

24. Ձեռ. № 987.— Ժամանակ՝ 1211 թ.: Նյութ՝ մագաղաթ: Գիր՝ ուղղագիծ երկաթագիր: Գրիչ՝ Հայրապետ քհ.: Վայր՝ Սեբաստիա: Չունի եվս. կանոնները (թափված են սկզբի թերթերը): Ունի լուս. կանոններ:

25. Ձեռ. № 6288.— Ժամանակ՝ 1211 թ.: Նյութ՝ մագաղաթ: Գիր՝ բոլորագիծ երկաթագիր: Գրիչներ՝ Հակոբ և Մարգարե: Վայր՝ Հաղբատ: Հայտնի է Հաղբատի Ավետարան անունով: Ունի թե՛ եվս. կանոնները, թե՛ լուս. կանոններ:

26. Ձեռ. № 6512.— Ժամանակ՝ 1215 թ.: Նյութ՝ թուղթ: Գիր՝ բոլորգիր: Գրիչ՝ Խաչատուր քհ.: Վայր՝ անհայտ: Չունի ո՛չ եվս. կանոնները, ո՛չ էլ լուս. կանոններ:

27. Ձեռ. № 7734.— Ժամանակ՝ 1219 թ.: Նյութ՝ մագաղաթ: Գիր՝ ուղղագիծ երկաթագիր: Գրիչ՝ Կոզմա: Վայր՝ Բարջանճա անապատ: Ունի թե՛ եվս. կանոնները, թե՛ լուս. կանոններ:

28. Ձեռ. № 285.— Ժամանակ՝ 1221 թ.: Գիր՝ բոլորգիր: Գրիչ՝ Կոստանդին: Վայր՝ անհայտ: Ունի թե՛ եվս. կանոնները, թե՛ լուս. կանոններ:

29. Ձեռ. № 8795.— Ժամանակ՝ 1221 թ.: Նյութ՝ թուղթ: Գիր՝ բոլորգիր: Գրիչ՝ Գրիգոր քհ.: Վայր՝ անհայտ: Ունեցել է եվս. կանոնները, բայց հիմա նրանք չկան (թափված են սկզբի թերթերը). նրանց երբեմնի գոյության ապացույցն են բնագրում եղած եվսեբյան հատվածումները: Չկան լուս. կանոններ:

30. Ձեռ. № 4823.— Ժամանակ՝ 1224 թ.: Նյութ՝ մագաղաթ: Գիր՝ բոլորագիծ երկաթագիր: Գրիչ՝ անհայտ: Վայր՝ Խորանաշատի վանք: Հայտնի է

Վանենի Խաղբակյանի Ավետարան անունով: Ունի թե՛ եվս. կանոնները, թե՛ լուս. կանոններ:

31. Ձեռ. № 5537.— Ժամանակ՝ 1225 թ.: Նյութ՝ թուղթ: Գիր՝ բոլորգիր: Գրիչ՝ Գրիգոր: Վայր՝ Տարսոն: Ունի թե՛ եվս. կանոնները, թե՛ լուս. կանոններ:

32. Ձեռ. № 6519.— Ժամանակ՝ 1231 թ.: Նյութ՝ մագաղաթ: Գիր՝ բոլորգիր: Գրիչներ՝ Սարգիս և Ստեփանոս: Վայր՝ Հեավանց վանք (Անտիոք): Ունի թե՛ եվս. կանոնները, թե՛ լուս. կանոններ:

33. Ձեռ. № 1519.— Ժամանակ՝ 1232 թ.: Նյութ՝ մագաղաթ: Գիր՝ բոլորագիծ երկաթագիր: Գրիչ՝ Իգնատիոս: Վայր՝ Հոռոմոսի վանք: Չունի եվս. կանոնները (թափված են սկզբի թերթերը): Ունի լուս. կանոններ:

34. Ձեռ. № 2743.— Ժամանակ՝ 1232 թ.: Նյութ՝ մագաղաթ: Գիր՝ բոլորագիծ երկաթագիր: Գրիչ՝ Տիրացու: Վայր՝ անհայտ: Հայտնի է Թարգմանչաց Ավետարան անունով: Ունի թե՛ եվս. կանոնները, թե՛ լուս. կանոններ:

35. Ձեռ. 4160.— Ժամանակ՝ 1236 թ.: Նյութ՝ թուղթ: Գիր՝ բոլորգիր: Գրիչներ՝ Սիմոն և Պետրոս քհ.: Վայր՝ Հավուց թառ: Չունի եվս. կանոնները (դժվար է ասել՝ ձեռագրի սկզբից թերթեր թափվա՞ծ են, թե ոչ): Ունի լուս. կանոններ:

36. Ձեռ. № 7700.— Ժամանակ՝ 1237 թ.: Նյութ՝ թուղթ: Գիր՝ բոլորգիր: Գրիչ՝ Գրիգոր: Վայր՝ Սիս: Ունի թե՛ եվս. կանոնները, թե՛ լուս. կանոններ:

37. Ձեռ. № 9365.— Ժամանակ՝ 1239 թ.: Նյութ՝ մագաղաթ: Գիր՝ բոլորգիր: Գրիչ՝ Թորոս: Վայր՝ Խորոն վանք: Ունի թե՛ եվս. կանոնները, թե՛ լուս. կանոններ:

38. Ձեռ. № 218.— Ժամանակ՝ 1240 թ.: Նյութ՝ մագաղաթ· Գիր՝ բոլորգիր: Գրիչ՝ Վանական: Վայր՝ Հռոմ: Չունի եվս. կանոնները, բայց պետք է ունեցած լինի, որովհետև բնագրում ունի եվսեբյան հատվածումները (ըստ երևույթին թերթեր են թափվել սկզբից): Չունի լուս. կանոններ:

Այս պատկերը երկու հիմնական երևույթներ է պարզում մեզ համար: Նախ՝ այն, որ 38 ձեռագրերից 34-ը ունեն լուսանցային կանոններ և դա կազմում է ընդհանուրի մեջ 90 տոկոսը: Երկրորդը՝ այն, որ 34 ձեռագրերից ոչ պակաս քան 30-ը միաժամանակ ունեն եվսեբյան և լուսանցային կանոնները, և դա կազմում է ավելի քան 88 տոկոս: Վերին աստիճանի նշանակալից են այս երևույթները:

Հայերեն Ավետարանի հնագույն օրինակներից 90 տոկոսի մեջ լուսանցային կանոնների առկայության երևույթը մեր ուշադրությունը մղում է դեպի ասորական ձեռագրերի աշխարհը, որի հետ է կապված եղել և Աստվածաշունչ մատյանի հայկական առաջին՝ «փոխանակի» թարգմանության պատմությունը: Հայկական տառերի գյուտից (405/406 թ.) մինչև Եփեսոսի տիեզերական ժողովն (431 թ.) ընկած շրջանում, երբ կատարվում էր հայկական առաջին թարգմանությունը, Պեշիտտոն պարսկական գերիշխանության սահմաններում, ուստի նաև Հայաստանում, հեղինակություն էր վայելում՝ ասորական եկեղեցու ունեցած քաղաքականապես արտոնյալ դիրքի շնորհիվ: Այդ հեղինակության ազդեցությամբ, ինչպես ցույց ենք տվել մի ուրիշ առիթով, Հայաստանում Հին և Նոր Կտակարանների կանոնն ըստ Պեշիտտոյի էր կարգավորված, անկախ նույնիսկ այն հանգամանքից, թե այս կամ այն առանձին բնագրի

թարգմանությունը ո՞ր լեզվից էր կատարվել, ասորերենի՞ց, թե հունարենից[39]: Այս առնչությունների շրջանակում է, անկասկած, նաև ծագումը հայերեն Ավետարանի ձեռագրերում տիրական երևույթով հանդես եկող լուսանցային կանոնների, որոնք, ինչպես տեսանք, յուրահատուկ են Պեշիտտոյի Ավետարանին: Դրանք ուղղակի Պեշիտտոյից եկած և հայկական սկզբնական թարգմանությունից մեզ հասած ժառանգություն են:

Եփեսոսի ժողովին հաջորդող շրջանում, երբ այդ թարգմանության բնագրերը սրբագրության էին ենթարկվում Բյուզանդիոնից բերված հունական «հաստատուն» և «ստոյգ» բնագրերի հիման վրա, անշուշտ քննության առարկա էին դարձել նաև Ավետարանի լուսանցային կանոնները և վերանայվել ու վերակառուցվել՝ հունական եվսեբյան հատվածումների հիման վրա, որովհետև բյուզանդական օրինակը հենց այն բնագիրն էր, որ Կոստանդիանոս Մեծի հատուկ պատվերով Եվսեբիոս Կեսարացին ինքն էր պատրաստել 50 օրինակով՝ բյուզանդական եկեղեցու պաշտոնական օգտագործման համար[40], և այդ օրինակն, անտարակույս, ուներ նույնինքն Եվսեբիոսի հաստատած հատվածումներն ու կանոնները: Այսպիսով՝ մեզ մոտ ասորական լուսանցային կանոնները ընդունեցին հունական տարազ և այդ ժամանակվանից համատեղվելով հունական եվսեբյան կանոնների հետ՝ մնացին միասնաբար: Այդ երևույթը հատկանշական մնաց հայկական Ավետարանի համար ավելի, քան 88 տոկոսով, այն ինչ հունական ձեռագրերում սովորականն ու տիրականը եվսեբյանն է՝ առանց լուսանցայինի, իսկ ասորական-պեշիտտոյականներում լուսանցայինն է՝ առանց եվսեբյանի: Պետք է նաև նկատի ունենալ, որ վերոհիշյալ 90 և 88 տոկոսների հաշիվը դեռ համեմատաբար ուշ շրջանի՝ Ժ—ԺԲ դարերի ձեռագրերի հիման վրա է և կարելի է համոզված լինել, որ թարգմանությունների կատարման շրջանում՝ Ե դարում այդ տոկոսը 100 էր:

Անհա այն կարևոր նշանակությունը, որ ի հայտ է բերում հայկական հնագույն ձեռագրերում երևացող լուսանցային կանոնների ուսումնասիրությունը՝ Ավետարանի հայկական թարգմանության պատմության համար:

Այս արդյունքի նշանակությունը, սակայն, սուկ հայագիտական չէ: Սրանով լուծում է գտնում նաև եվրոպացի գիտնականների մոտ գոյություն ունեցող տարակարծությունը լուսանցային կանոնների ծագման հարցում՝ ի նպաստ նրանց, որոնք հակված էին դեպի ասորականը:

Հայկական Ավետարանի լուսանցային կանոնները, Եվսեբիոսի կանոնների հետ միասին, առաջին անգամ տպագրվել են Ավետարանի 1685 թվականի վենետիկյան հրատարակության մեջ և այնուհետև մի շարք անգամներ արտատպվել են Ավետարանի հաջորդ հրատարակություններում (Կ. Պոլիս՝ 1710, 1729, 1740, 1769, 1796, 1805. Էջմիածին՝ 1866):

ԺԳ դարի վերջերից հայերեն ձեռագրերում երևան է գալիս կանոնաձև կամ աղյուսաձև համաբարբառի մի այլ տեսակ, որի առարկան դարձյալ Ավետարանների բնագրերի համեմատությունն է: Այս կանոնները թվով չորս են և ամեն մեկը համապատասխանաբար պատկանում է չորս Ավետարաններից մեկին ու տեղավորված է նրա սկզբին: Դրանք տպագրված են Հ. Հովհ. Զոհրապյանի ձեռքով՝ Աստվածաշնչի 1805 թվականի հրատարակության մեջ՝ Վենետիկի Մխիթարյան Մատենադարանի այժմյան № 1 ձեռագրի հիման

[39] Հ. Ս. Անապան, «Աստվածաշունչ մատյանի հայկական բնագիրը», **Էջմիածին** (ամս.), 1966, № 11—12, էջ 71—73:

[40] Անդ, էջ 73 և 80: P. Batiffol, p. 210.

վրա[41] և այնտեղից արտատպված են Հ. Ա. Բագրատունու կողմից՝ 1860 թվականի հրատարակության մեջ[42]: Տպագրված են նաև ավելի վաղ ժամանակներից սկսած, զանազան աղավաղումներով, Ավետարանի հետևյալ հրատարակություններում. նախ Վենետիկ՝ 1685. ապա, նրանից արտատպվելով, Կ. Պոլիս՝ 1710, 1729, 1740, 1769, 1796, 1805. Թիֆլիս՝ 1842. Էջմիածին՝ 1866:

Այս համաբարբառի հիմքում ևս ընկած է Եվսեբիոս Կեսարացու հղացած թվական դրությունը, բայց տարբեր է նրա կառուցվածքը: Այստեղ ևս կանոնները հենվում են չորս Ավետարանների բնագրերում մտցված համարակալումների սկզբունքի վրա, բայց այդ համարները կամ հատվածները կապ չունեն ոչ հունական եվսեբյան հատվածումների հետ, ոչ էլ,—գուցե ավելորդ է ասել, —ասորական-պեշիտտոյական այն հատվածումների հետ, որոնց մասին խոսեցինք վերևում: Այստեղ Մատթեոսի Ավետարանն ունի 68 հատված, Մարկոսինը՝ 48, Ղուկասինը՝ 84 և Հովհաննեսինը՝ 43: Հատվածահամարները նշանակված են լուսանցքների վրա:

Հիշյալ հատվածումները բովանդակություն արտահայտող խորագրերով ի մի են բերվել ամեն մի Ավետարանի սկզբին և անվանվում են «Գլուխք», «Յանկ գլխոց», «Սկիզբն գլխոց»: Ի դեպ՝ այդպիսի **գլուխներ** կամ **ցանկեր** ունեն նաև հայկական Աստվածաշնչի՝ Հին և Նոր Կտակարանների գրեթե բոլոր գրքերը և դրանք բանասիրական գրականության մեջ անվանվում են **գլխակարգություններ:** Այդ բոլորի մեջ չորս Ավետարանների գլխակարգությունների ներկայացրած առանձնահատուկ երևույթն այն է, որ դրանք միաժամանակ համաբարբառային կանոններ են՝ տողերի դիմաց ունենալով չորս բնագրերի փոխադարձ համաձայնությունները ցույց տվող աղյուսակներ: Որպես նմուշ՝ բերենք Մատթեոսի գլխակարգության առաջին 12 տողերը.

Սկիզբն գլխոց Աւետարանին որ ըստ Մատթէոսի	Մատթէոս	Մարկոս	Ղուկաս	Յովհաննէս
Վասն մոգուցն	ա	—	—	—
Վասն կոտորածի մանկանցն	բ	—	—	—
Վասն յառաջընթաց քարոզութեանն Յովհաննու Մկրտչին	գ	—	ե	—
Վասն վարդապետութեան փրկչին	դ	—	—	—
Վասն երանութեանն	ե	—	ժէ	—
Վասն բորոտին	զ	դ	ժբ	—
Վասն հարիւրապետին	է	—	ժբ	զ
Վասն կոթանչին Պետրոսի	ը	բ	ը	—
Վասն բժշկութեան ամենայն ցաւոց	թ	զ	ժ	—
Վասն՝ որ ոչ ետ հրաման երթալ ակնի	ժ	—	ԺԳ	—
Վասն սաստելոյն ի վերայ ջրոցն	ժա	ժ	ԻԳ	—
Վասն դիւահարացն	ժբ	ժա	ԻԴ	—

Նույն կառուցվածքն ունեն և մյուս երեք կանոնները:

Այս համաբարբառին մենք տալիս ենք **Գեորգյան Համաբարբառ** անունը, որովհետև նրա պատմությունը կապված է կիլիկյան շրջանի մեր հայտնի գիտնական մատենագիրներից Գեորգ Սկևռացու անվան հետ:

---

[41] Տես «Աստվածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանաց» (միհատորյակ), Վենետիկ, 1805, էջ 647, 669, 683—84, 706:

[42] Տես «Գիրք Աստուածաշունչք Հին եւ Նոր Կտակարանաց», Վենետիկ, 1860, էջ 945—46, 973, 993, 1023:

Մեր հետազոտությունները պարզեցին, որ Ավետարանի թե՛ նախադրությունների և թե՛ գլխակարգությունների հեղինակությունը պատկանում է Գեորգ Սկևռացուն: Այդ մասին մենք հանգամանորեն կխոսենք ուրիշ առթիվ: Այստեղ միայն նշենք Հ. Ղ. Ալիշանի «Սիսուան»-ում տեղ գտած մի աղբյուրի այն վկայությունը, թե Սկևռացին կարգավորել էր «զՀին և զՆոր Կտակարանս Հայոց եկեղեցւոյն», հատկապես հիշատակելով նաև Ավետարանի կարգավորումը՝ «ընդ որս և զԱւետարանն՝ նախադրօք, գլխօք և ցանկօք յոլորդեաց»[43]: Սկևռացու կատարած աշխատանքի ներկայացուցիչն այսօր Վենետիկի № 1 ձեռագիր Աստվածաշունչն է, որը գրված է 1319 թվականին՝ ընդօրինակվելով ուղղակի, ինչպես ասվում է հիշատակարանում, Սկևռացու «ազնիւ օրինակ»-ից[44], հետևաբար և Զոհրապյանի հրատարակած ավետարանական նախադրություններն ու գլխակարգությունները նրա հեղինակությունն են: Իսկ թե ո՛ր թվականին էր պատրաստվել Սկևռացու այդ օրինակը՝ մեզ հայտնի չէ. բայց նրա ավետարանական նախադրություններն ու գլխակարգությունները պարունակող հնագույն ձեռագիրը Երևանի Պետ. Մատենադարանի № 345 Աստվածաշունչն է, գրված 1270 թվականին՝ Հովհաննես արքայեղբոր համար, հավանաբար Գոռներում, Բարսեղ գրչի ձեռքով:

Քանի որ մեզ հետաքրքրողը գեորգյան համաբարբառային կանոններն են, այստեղ մի կողմ թողնենք Ավետարանների նախադրությունների հարցը և նշենք, որ սույն № 345 ձեռագիրն առաջինն է, որ գլխակարգությունների հետ միացված տալիս է նաև կանոնները, և սրանով կարելի է ասել, որ այս համաբարբառի երևան գալու ժամանակը ոչ ուշ, քան 1270 թվականն է: Այս թվականից առաջ գրված ձեռագրերում չենք պատահում համաձայնության այս կանոններին: Այս եզրակացությանը հասել ենք՝ քննելով Երևանի Պետ. Մատենադարանում գտնվող և ստույգ թվական կրող 49 ձեռագրեր՝ 887 թվականից մինչև 1269 թվականը ներառյալ, բոլորն էլ Ավետարաններ (ամբողջական Աստվածաշնչեր չկան): Այս ստուգումից պարզվեց այն, որ Գեորգ Սկևռացին Ավետարանների գլխակարգությունները կազմելիս հիմք է ունեցել գոյություն ունեցող մի հին գլխակարգություն, որը պահպանված է № 6202 ձեռագրում, 909 թվականից: Սկևռացին խմբագրել է այդ հինը՝ ըստ լեզվի և ըստ կազմության և, նրա կողքին տող առ տող ավելացնելով համաձայնության կանոնները, կազմել է իր սեփական գլխակարգությունը: Սկևռացու կատարած աշխատանքի զարգացման ընթացքը նշելու համար միայն ասենք, որ, օրինակ, Հովհաննու գլխակարգության նախատիպը բաղկացած էր 18 գլուխներից (ձեռ. № 6202). 1270 թվականին Սկևռացին, պահպանելով այս գլխաբաժանումը, միայն նրա լեզուն էր խմբագրման ենթարկել և նրան կցել իր համաձայնական կանոնները (ձեռ. № 345). իսկ ավելի ուշ, երբ աշխատանքներն իրենց վերջնական հանգրվանին էին հասել նրա **ազնիվ օրինակում**, Հովհաննու գլխակարգությունը երկրորդ անգամ էր խմբագրման ենթարկվել և այս անգամին՝ ոչ միայն նորից ըստ լեզվի, այլ նաև ըստ կազմության, որով հիմնովին վերակառուցվել էր գլխաբաժանումը և, փոխանակ 18-ի, հաստատվել էին 43 գլուխներ ու համապատասխանաբար՝ համաբարբառային կանոններ (Վենետիկի ձեռ. № 1. և Աստվածաշնչի Զոհրապյան հրատարակությունը):

---

[43] Հ. Ղ. Ալիշան, «Սիսուան», Վենետիկ, 1885, էջ 532—533:

[44] Հմմտ. Հ. Բ. Սարգիսյան, «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հտ. Ա, Վենետիկ, 1914, էջ 19:

Սա է Գեորգյան Համաբարբառի իսկությունը՝ իր ընդհանուր գծերի մեջ:

Գեորգ Սկևռացու Համաբարբառը մեզ մոտ վերջինն էր այն փորձերից, որոնց հատկանիշն էր բնագրերի համեմատելի մասերի անմիջական համատեղումը միևնույն գծի վրա, լինի՝ դա ուղղակի բնագրերով, լինի՝ պայմանական թվերով: Բնագրային առնչությունների բացահայտման գործում հետազոտության այս եղանակը կարողանում էր համեմատության դնել միայն նույն կամ նման բովանդակություն ունեցող ամբողջական հատվածներ և կամ պարզել, որ այս կամ այն բնագրի այս կամ այն հատվածը համեմատականներ չունի մյուս բնագրերում: Ըստ ինքյան այդ արդյունքը հեռու էր լիովին բավարար լինելուց, որովհետև հատվածների շրջանակների մեջ գտնվող բազմաթիվ ուրիշ մանրամասնություններ, որոնք ինքնուրույն արժեք ներկայացնող երևույթներ էին, մնում էին աննկատ, հետևաբար և դուրս էին մնում համեմատման հնարավորություններից: Մյուս կողմից հիշյալ եղանակը կիրառելի էր միայն համասեռ՝ բովանդակությամբ իրար հետ ընդհանրություններ ներկայացնող բնագրերի համար, ինչպես էին չորս Ավետարանները, և ի վիճակի չէր մատնացույց անելու այն մասերը, որոնց համար համեմատության եզրեր գոյություն ունեին նաև ոչ միայն Նոր Կտակարանի մյուս գրքերում, այլև Հին Կտակարանում:

Այս մտահոգություններով՝ գիտական միտքը որոնումների մեջ էր՝ ի խնդիր առավել ճկուն ձևերի: Անհրաժեշտ էր գտնել այնպիսի ձևեր, որոնք խուզարկուներին ազատեին հետազոտությունները չորս Ավետարանների սահմանափակ շրջանակներում տանելու հարկադրանքից:

Դեռ Դ դարի վերջերին Եվթաղ Աղեքսանդրացին հետամուտ էր եղել մշակելու համաբարբառի մի նոր եղանակ, որը ցույց տար տվյալ բնագրում օգտագործված վկայությունների կամ բառացի փոխառությունների աղբյուրները: Այդ փորձի համար նա օգտագործել էր Պողոս առաքյալի 14 թղթերը և իր աշխատանքի արդյունքներն ամփոփել «Բովանդակութիւն աստուածեղէն վկայութեանց» խորագրով փոքրիկ երկում, որը բաղկացած էր երկու ցուցակներից և արտացոլում էր Հին Կտակարանից առնված վկայությունները: Եվթաղի «Բովանդակութիւն»-ը գտնվում է ի շարս նրա այն երկերի, որոնք, ինչպես ասվեց արդեն, Ե դարում թարգմանվել էին հայերենի[45]:

Եվթաղի աշխատանքի հիմքը եղել էր պողոսյան թղթերի լուսանցքների վրա, յուրաքանչյուր վկայության կողքին, նշանակել աղբյուրի անվանումը և այդ հիման վրա նա կառուցել էր իր երկու ցուցակները:

Առաջին ցուցակը ցույց է տալիս, թե այս կամ այն թղթում քանի՞ վկայություն կա և ո՞ր աղբյուրներից են նրանք: Օրինակ, սկսելով Հռոմայեցվոց թղթից, նախ ասվում է, որ այդ թղթում եղած վկայությունների ընդհանուր թիվը 48 է, և ապա դրանք նշվում են Հին Կտակարանի գրքերի հերթականությամբ. Արարածոց (Ծննդոց) գրքից՝ 6 վկայություն, Ելից գրքից՝ 3, Ղևտական գրքից՝ 1, և այլն: Այսպես է և մյուս թղթերի կարգը:

Երկրորդ ցուցակում ի մի են հավաքված վկայությունների բնագրերն այն բոլոր աղբյուրներից, որոնք նշված են առաջին ցուցակում: Այստեղ ևս սկսելով Հռոմայեցվոց թղթից՝ նախ նշվում է, որ այդ թղթում եղած վկայությունն-

---

[45] Երկու ցուցակների քննական հրատարակությունը տես Հ. Ա. Վարդանյանի մոտ, էջ 108—115 և 116—128. հրատարակության համար կատարված բնագրական համեմատությունների պատկերը՝ էջ 53—56. բնագրի ուսումնասիրությունը՝ էջ 32—37:

ի ընդհանուր թիվը 48 է, որից հետո դրանց բնագրերը բերվում են այն հերթականությամբ, որով նրանք իրար են հաջորդում թղթերի լուսանցքներում: Ըստ այմ՝ Հռոմայեցվոց թղթում առաջին վկայությունն Ամբակումից է, երկրորդը՝ Եսայուց, երրորդը՝ Ծ. Սաղմոսից, և այլն, ուստի և նույն հերթականությամբ էլ բերվում են վկայությունների բնագրերը՝ «ՅԱմբակումայ՝ Որ արդարն է ի հաւատոց կեցցէ», «ՅԵսայեայ՝ Զի անուն Աստուծոյ վասն ձեր հայհոյի ի մէջ հեթանոսաց», «[Ի] յիսներորդ Սաղմոսէն՝ Որպէս արդար եղիցես ի բանս քո և յաղթեսցես ի դատել քեզ», և այլն: Այսպես է նաև մյուս թղթերի կարգը:

Եվթաղի «Բովանդակութեան» հիմնական նպատակը որքան էլ եղել է ցույց տալ պողոսյան 14 թղթերի առնչությունները Հին Կտակարանի գրքերի հետ, այնու հանդերձ աշխատանքի ընթացքում աղբյուրագիտական ուժեղ հակումը հեղինակին մղել է թեթևորեն շեղվելու այդ շրջանակից. այսպես՝ երկու վկայություն է բերվում Մատթեոսի Ավետարանից և մի քանի վկայություններ էլ բերվում են այլ աղբյուրներից, ինչպես՝ «Մենանդրի երգագրի թելադրութիւն» (կամ՝ «Մենանդրի խրատ»), «Եպիմենիդոսի Կրետացւոյ հարցկի ըղձութիւն» (կամ՝ «ՅԵպիմենիդոսէ Կրետացւոյ հարցկէ և ի Կալիմաքոսէ Կիրենացւոյ պատիկոսէ») և այլն: Եվթաղի հավաքած աղբյուրների թիվը, 14 թղթերի համար, 127 է:

Ինչպես տեսնում ենք՝ Եվթաղ Աղեքսանդրացու «Բովանդակութիւն»-ը ներկայացնում է մի նախնական փորձ՝ համաբարբառի տատիանյան-եվսեբյան համակարգի սահմանափակությունից ազատվելու և հետազոտությունների ասպարեզն ընդլայնելու: Բայց այդ փորձը զուրկ էր հեռանկարից նախ և առաջ նրանով, որ Հին Կտակարանի գրքերը, որոնցից քաղվում էին վկայությունների բնագրերը, այժմյան առումով գլխաբաժանումներ ու տնատումներ չունեին և նշվում էին միայն գրքերի անուններով՝ գրեթե անկարելի դարձնելով իր տեղում գտնել բերված վկայությունը: Երկրորդ՝ այդ փորձը հեռանկար չուներ նրա համար, որ եվթաղյան եղանակը միակողմանի էր և դատապարտված էր մնալու միակողմանի, որովհետև եթե ցույց էր տալիս, որ պողոսյան թղթերում գտնվող այս կամ այն վկայությունը, ասենք, Ղևտական գրքից էր, չէր կարող ցույց տալ, թե Ղևտական գրքի տվյալ հատվածը օգտագործված է պողոսյան թղթերում և Աստվածաշնչի բազմաթիվ այլ մասերում. նույնը պիտի ասել նաև Աստվածաշնչի բոլոր գրքերի բնագրային փոխհարաբերությունների առումով: Եվթաղյան եղանակը ոչ մի դեպքում չէր կարող լուծել բնագրային փոխհարաբերությունների հարցը, որովհետև այդ եղանակի կիրառումը կպահանջեր Հին և Նոր Կտակարանների ամեն մի գրքին առընթեր տալ մի «Բովանդակութիւն», այսինքն՝ մյուս գրքերում գտնվող համեմատելի հատվածների բնագրերի մի ամբողջ ցուցակ, իսկ դրանով կստեղծվեին միայն բնագրերի անհեռի և անօգտագործելի կուտակումներ:

Մի խոսքով՝ եվթաղյան համաբարբառը թեև հետազոտության սահմանների ծավալման առումով սկզբունքորեն հաղթահարել էր տատիանյան-եվսեբյան համակարգի կաշկանդումները, բայց չէր կարողացել ձերբազատվել բնագրերի ուղղակի առադրման սկզբունքից և, ուր որ գտնում էր որևէ համեմատելի հատված, արտագրում էր այն ու բերում համեմատվող հատվածի կողքին:

Այնու ամենայնիվ՝ պողոսյան թղթերի միջոցով Եվթաղ Աղեքսանդրացու կատարած նախնական փորձը համաբարբառների պատմության մեջ մի նախաքայլ էր դեպի Աստվածաշնչի ընդհանուր համաբարբառ տանող ուղիներում:

Այդ ուղիները, բոլորելով որոնումների մի երկար ժամանակաշրջան, ի վերջո հանգեցին ստեղծմանը հետազոտությունների համաբարբառային մեթոդի լավագույն համակարգի, որը լիովին ի վիճակի էր ընդգրկելու Հին և Նոր Կտակարանների բոլոր գրքերը: Դա՝ համաբարբառի բառարանային եղանակն էր, որ հղացավ ԺԳ դարի ֆրանսիացի դոմինիկյան գիտնական կարդ. Հուգոնը (ծնվ. մոտ. 1200 թվականին և մեռ. 1263-ին):

Հուգոնը սուրբգրական բնագրաբանության հայտնի մասնագետներից էր: Ինքն էր ղեկավարել լատիներեն Աստվածաշնչի՝ Վուլգատայի լեզվի սրբագրման ու ճշգրտման աշխատանքները, որ 1236 թվականին սկսել էին Դոմինիկյանները՝ ժամանակի ընթացքում առաջացած բնագրային աղավաղումները վերացնելու նպատակով: Բնագրական հարցերի նկատմամբ Հուգոնն առանձին հետաքրքրություն ուներ նաև այն կապակցությամբ, որ նվիրված էր Հին և Նոր Կտակարանների գրքերի մեկնություններ գրելու աշխատանքին, իսկ դա պահանջում էր բնագրերի ճշգրտում և նրանց բովանդակության մանրախույզ քննություն: Հուգոնի այս նախասիրություններից էր ծնվել բառարանային համաբարբառի գաղափարը, որը հիմնվում էր ոչ թե պարբերությունների կամ նախադասությունների բաղդատության սկզբունքի վրա, այլ բնագրի ավելի մանր մասերի՝ բառային միավորների: Այս բառարանում պիտի ի մի բերվեին ու դասավորվեին Աստվածաշնչի բառերն իրենց կապակցություններով. պիտի ցույց տրվեր, թե տվյալ բառը քանի՞ անգամ է օգտագործվել Աստվածաշունչ մատյանում, նրա ո՞ր գրքերում և գրքերի ո՞ր մասերում: Բառարանը հնարավորություն պիտի տար նախ համեմատությունների միջոցով ճշտելու, թե բառը, առանձին կամ իր կապակցությունների մեջ, ինչպիսի՞ առումներով է օգտագործվել տարբեր տեղերում, և ապա նաև որևէ հատվածի իսկական իմաստը բացահայտելու՝ համեմատության դնելով ուրիշ այնպիսի հատվածների հետ, որոնցում օգտագործված է այդ նույն բառը: Հուգոնը երկար տարիների աշխատանքով և ավելի քան 500 դոմինիկյան վանականների գործակցությամբ կյանքի կոչեց իր ծրագրած այդ բառարանը՝ „Concordantiae Sacrorum Bibliorum" («Համաբարբառ Սուրբ Գրոց»):

Ինչպե՞ս էր դրված հղումների կարգը:

Հուգոնը՝ Աստվածաշնչի մեն մի գիրքը բաժանել էր գլուխների, իսկ գլուխները՝ հատվածների, որոնք նշանակվում էին լուսանցքներում՝ այբուբենի գլխատառերով: Երկար գլուխները նա բաժանել էր 7 հատվածների, իսկ կարճ գլուխները՝ նվազ թվով հատվածների: Բառարանի այս համակարգը հնարավորություն էր տալիս իր սեփական տեղում գտնելու որևէ բառ և կապակցություն:

Որպես համակարգ՝ բառարանային այս եղանակը ժամանակի ընթացքում ենթարկվեց, ի հարկե, բարեփոխումների և տարբերակումների: Հուգոնի իրագործած ծրագրի հետագա զարգացման գործում ներդրումներ կատարողների շարքում հիշատակելի է հատկապես սպանացի գիտնական Հովհաննես Սեգովացին (ԺԵ դ.), որն, ի տարբերություն իր նախորդների, որոնք Վուլգատայի միայն բառերն էին ընդգրկում, իր համաբարբառի մեջ ներմուծեց նաև լատիներեն լեզվի բոլոր մասնիկները: Նա գտնում էր, որ աստվածաբանական հարցերում Ս. Գրքի բնագրերի իմաստային նրբությունները պարզելու համար կարևոր էր ի մի բերել մասնիկներ բովանդակող բոլոր տեղերը, որպեսզի այդ մասնիկներն իրար հետ համեմատելու միջոցով կարելի լինի ճշտել, թե դրանք մտքի ինչպիսի՞ եղանակավորումներ են տալիս նախադասու-

թյանը: Համաբարբառի մեջ մասնիկների ընդգրկման այդ մանրակրկիտ աշխատանքի թելադրողը եղել էր այն հանգամանքը, որ Բազելի 1431 թվականի ժողովի առթիվ բխման հարցի կապակցությամբ լատինների և հույների միջև տեղի ունեցող վիճաբանություններում այդ խնդրի գլխավոր կետը կայանում էր լատիներեն լեզվի ex և per մասնիկների նշանակության մեջ: Ըստ բովանդակության սա կարևոր ներդրում էր հուգոնյան համաբարբառի զարգացման պատմության մեջ:

Ավելի ուշ՝ համաբարբառի հուգոնյան համակարգը մի կարևոր բարեփոխություն կրեց նաև իր կառուցվածքում: Հուգոնի հաստատած գլխակարգությունները նույնությամբ մնում են Վուլգատայում մինչև այսօր, բայց գլուխների հատվածումները, որպես շատ ընդարձակ և անգործնական ենթաբաժանումներ, իրենց դերը ժամանակի ընթացքում զիջեցին այժմյան տնատումներին: Այժմյան տնատումն իր ծագումով եբրայական է և գալիս է հրեա ռաբունի Իսահակ Նաթանի կազմած եբրայական համաբարբառից: Նաթանը, որ 1437—1445 թվականների ընթացքում կազմել էր եբրայական համաբարբառը, օգտագործել էր Հուգոնի հինկտակարանային գլխաբաժանումները, բայց ոչ ենթաբաժանումները, այլ նրանց փոխարեն կատարել էր ավելի մանր բաժանումներ՝ տնատումներ, որպեսզի հղումները կարողանան կատարվել տեղն ու տեղը: Այդ տնատումներն է, որ հետագայում փոխադրվեցին Վուլգատայի վրա, նրանց նմանությամբ տնատումներ կատարվեցին նաև Աստվածաշնչի մյուս բոլոր գրքերում և այդ բոլորին հարմարեցվեց նաև հուամաբարբառի հուգոնյան համակարգը: Ի դեպ՝ նշենք, որ, Վուլգատայի օրինակով, այդ գլխակարգությունների և տնատումների օգտագործումը հետզհետե սովորական դարձավ Աստվածաշնչի բոլոր հրատարակությունների համար, բոլոր լեզուներով:

Հուգոնի հաստատած գլխաբաժանումները,— առանց, սակայն, նրա հատվածումների,—ԺԳ դարի վերջերից սկսում են երևան գալ Աստվածաշնչի հայերեն ձեռագրերում՝ **ֆրանկաց** (լատինական) գլուխներ անվան տակ: Հայերեն այդպիսի ձեռագրերն, ի հարկե, իբրև կանոն, հին գլխաբաժանումներով են միշտ առաջնորդվում, բայց նրանց լուսանցքների վրա կարմիր թանաքով և կանոնավոր հերթականությամբ նշվում են նաև **ֆրանկաց** գլուխները՝ **Ֆր** կամ **Ֆռ** կամ **Ֆ** կրճատ ձևերով. օրինակ՝ **Ֆր Ա, Ֆր Բ, Ֆր Գ** (այսինքն՝ **Ֆրանկաց Ա գլուխ, Բ գլուխ, Գ գլուխ**) և այլն: Մեր ձեռքի տակ եղած այսպիսի ձեռագրերից հնագույնը Երևանի Պետ. Մատենադարանի № 179 Աստվածաշունչն է, որը գրված է 1292 թվականին՝ Ստեփանոս Գույներ(ի)ցանցի ձեռքով: Այս ձեռագրում, բացի լատինական այդ գլուխների կանոնավոր նշանակումից, կան նաև նրանց հետ կապված բազմաթիվ ծանոթագրություններ. այսպես՝ Ծննդոց գրքի գլխացանկից հետո ծանոթագրված է՝ «Ուր **Ֆռ** գտնուս, այն Ֆռանկնոյն ջաբիտրն է: Այս գլուխս Ծ համար է» (էջ 1բ): **Ֆրանկաց** գլուխներն ունի նաև № 180 ձեռագիր Աստվածաշունչը, որը գրված է 1295 թվականին՝ Ստեփանոս (Գույներ(ի)ցա՞նց) գրչի ձեռքով, Հեթում Բ թագավորի պատվերով: Անթվական, բայց այս երկու ձեռագրերին ժամանակակից, № 177 ձեռագիրը, որը Մովսես Երզնկացու արտագրած Աստվածաշունչն է, նույնպես ունի լատինական գլուխները: Կան նաև ուրիշներ: Սակայն այս ձեռագրերից չի երևում, թե ո՛վ էր մուծել հայերեն ձեռագրերի մեջ այդ **ջաբիտրները** (chapitres, գլուխներ): Բայց տարակույս չկա, որ այդ նախաձեռնության հեղինակը նույնինքն Հեթում Բ թագավորն է, ԺԳ դարի վերջերին: Այդ մասին մեզ հայտնի է նրա մի հիշատակագրությունը, որի ինքնա-

գիր օրինակը կարոծ է, բայց պատճենը պահպանվել է № 352 ձեռագիր Աստվածաշնչում, որն ընդօրինակվել է 1367—1371 թվականներին Սուլտանայում։ Այս ձեռագրում, դարձեալ Ծննդոց գրքի գլխացանկից հետո, կարդում ենք.

«Համար Ֆրանկին, որ ջամբիստր (sic) կոչեն, որ ի վերայ ամենայն Աստուածաշնչին նապաղած է, ես Հեթումս, որ և Յովհաննէս կոչիմ, բազում [աշխա]տութեամբ փոխեցի առ ի դիւրաւ գտանելոյ, եթէ բան ինչ իցէ յերկոցունցն միջի։ Արդ՝ գլուխ Ծննդոցն ունի համարս Ծ։ Ուր ֆէ և ռա կա՝ Ֆռանգին է։ Օգնեալ, Աստուած իմ» (էջ 1բ)[46]։

Հեթում թագավորն այստեղ ասում է, որ ինքն այս աշխատանքին ձեռնամուխ է եղել «առ ի դիւրաւ գտանելոյ, եթէ բան ինչ իցէ յերկոցունցն միջի», այսինքն՝ հայկական և լատինական բնագրերի համեմատությունը դյուրացնելու նպատակով։ Նշանակում է՝ Հուգոնից քիչ հետո Կիլիկյան Հայաստանում հետաքրքրությունն արդեն սկսվել էր նրա կատարած գործի նկատմամբ, այդ գործի գիտական նշանակության գնահատմամբ։ Մի այլ առիթով մենք լատինական գլխաբաժանումների հյուրընկալումը դիտել էինք որպես դրական երևույթ և գրել. «Այդ նորության դրական կողմն այն էր, որ դրանով անսահման հնարավորություն ստեղծվեց Աստվածաշնչի հայկական և օտար բնագրերի համեմատական ուսումնասիրության համար»[47]։

Անշուշտ, հուգոնյան գլխաբաժանումների այս կիրառումը հայկական ձեռագրերում՝ համաբարբառային բնույթ և նպատակ չուներ, այլ պարզապես նկատի ուներ հայերեն և լատիներեն բնագրերի համեմատական ուսումնասիրությունը՝ երկու թարգմանությունների բաղդատության առումով. բայց դա, բոլոր դեպքերում, մի քայլ էր դեպի այդ։

Մեզ մոտ ԺԷ դարում Ղազար Բաբերդացու և Ոսկան Երևանցու աշխատանքներում երևան են գալիս մի քանի համաբարբառներ, որոնք հիմնված էին հուգոնյան համակարգի հետագայում կրած ձևափոխությունների վրա։

Ղազար Բաբերդացին հայտնի է որպես հայկական Աստվածաշնչի նոր կարգավորող։ Երևանի Պետ. Մատենադարանի № 351 ձեռագիրը նրա կարգավորած Աստվածաշունչն է, ընդօրինակված 1619 թվականին Լվովում և նկարազարդված նույնինքն Ղազարի ձեռքով[48]։

Ղազար Բաբերդացին իր Աստվածաշնչի գլխաբաժանումները տվել է թե՛ հայկականով՝ ըստ Գեորգ Սկևռացու կարգավորման, թե՛ առրնթեր լատինականով. բայց լատինականի վրա, ի տարբերություն Հեթում Բ-ի, լուսանցքներում ավելացրել է նաև գլուխների հուգոնյան հատվածումները և միաժամանակ եբրայականից ծագած տնատումները։ Այս տնատումներն առաջին անգամ այստեղ ենք գտնում մուծված հայկական Աստվածաշնչի մեջ։

Ղազար Բաբերդացին իր Աստվածաշնչի վերջում տեղավորել է երկու բառացանկեր՝ «Ցանկ ի վերայ այբուբենից Աստուածաշունչ սուրբ մատենիս, ըստ հայկական թուոց» (էջ 565բ—578բ) և «Ցանկ ի վերայ այբուբենից Աստուածաշունչ սուրբ մատենիս, ըստ Լատինացւոց թուոց» (էջ 579ա—598բ), որոնք հղումները տալիս են դեպի լուսանցքները։ Հայկական բա-

[46] Հեթում թագավորի այս նույն հիշատակագրությունը կա նաև № 4113 և № 190 ձեռագիր Աստվածաշնչերում, որոնցից առաջինը գրված է 1384 թվականին՝ Հակոբ քհ.-ի ձեռքով, իսկ երկրորդը գրված է 1658 թվականին՝ Վարդան արեղայի ձեռքով։

[47] Հ. Ս. Անապատ, «Աստվածաշունչ մատյանի հայկական բնագրերը», Էջմիածին (ամս.), 1966, № 11—12, էջ 83։

[48] Այս ձեռագրի մասին՝ անդ, էջ 88։

ռացանկը Ղազարի ինքնուրույն աշխատանքն է[49], կառուցված՝ հետևողությամբ Վուլգատայի հրատարակություններում գտնվող նմանօրինակ բառացանկի, իսկ լատինականը՝ Վուլգատայի այդ բառացանկի ուղղակի թարգմանությունն է:

Այբբենական այս բառացանկերն իսկական առումով բնագրային բառարաններ չեն, այլ նյութերի առարկայական ցուցակներ, ուր, առանց բնագրերի առաջբերման, նշանակված են տվյալ առարկային կամ մտքին վերաբերող տեղերը՝ գրքերի անվանումով և գլուխների ու տների համարներով. բայց համաբարբառային առումով ունեն մի լրացուցիչ մաս՝ միջլուսանցային անմիջական հղումների կարգ (հղումը կատարվում է մի լուսանցքից դեպի ուրիշ լուսանցքներ): Այս կարգը ընթերցողին ազատում է բնագրերի իրար հետ համեմատելի տեղերն ի հայտ բերելու համար ամեն մի դեպքում բառացանկերին դիմելու անհրաժեշտությունից: Այդ մասին Ղազարը գրում է, թե «[արարի] նաև զվկայութիւնսն համաձայնութեամբ որ միմեանց կու համեմատին, իբրև զշարս մարգարտաց ըստ ականց պատուականաց, և գծագրեցի իմ հողանիւթ մատամբս, ի լուսանց Աստուածաշունչ մատենիս» (էջ 3բ):

Լուսանցային այս սարքի համար որպես օրինակ առնենք Ելից գրքի ԻԵ. 2 տունը՝ **«Առէք ինձ պտուղ ի նոցանէ՝ որոց հաճոյ թուեսցի ի սիրտս իւրեանց»:** Այստեղ, լուսանցքում, հղում է տրվում այսպես՝ «Ի ներ[քոյ] գե ե», այսինքն՝ ներքևում, նույն Ելից գրքի ԼԵ. 5 տունը, ուր իրոք գտնում ենք՝ **«Առէք ի ձէնջ հաս Տեառն. ամենայն որ զիարդ յօժարեսցէ ի սրտի իւրում՝ բերցեն պտուղ Տեառն»:** Իսկ այստեղ էլ լուսանցքում փոխադարձաբար նշվում է՝ «Ի վեր[ոյ] բե բ», ցույց տալով վերևում նույն գրքի ԻԵ. 2 տունը:

Այսպիսի փոխադարձ կապերով է, որ կապված են նաև, օրինակ, հետևյալ հինգ վկայությունները.

Ելից ԺԶ. 14. **«Եւ ահա ի վերոյ երեսաց անապատին, մանր իբրև զգինձ, սպիտակ իբրև զեղեամն ի վերայ երկրին»:**

Թուոց ԺԱ. 7. **«Եւ մանանայն էր իբրև զսերմն գնձոյ սպիտակ, և տեսիլ նորա իբրև զտեսիլ սառին»:**

Սաղմոս ՀԷ. 24. **«Եւ տեղեաց ի նոսա մանանայ ի կերակուր: Հաց երկնից ետ նոցա. զհաց հրեշտակաց կերան մարդիկ»:**

Գիրք Իմաստութեան ԺԶ. 20. **«Ընդ որոյ՝ կերակուր հրեշտակաց ջամբեցեր ժողովրդեան քում, և զպատրաստական զհացն յերկնից ետուր նոցա առանց ջանալոյ»:**

Աւետ. Յովհաննու Զ. 31. **«Հարքն մեր կերան զմանանայն յանապատի անդ՝ որպէս և գրեալ է. Հաց երկնից ետ նոցա ուտել»:**

Այս վկայություններից յուրաքանչյուրի լուսանցքում հղման նշումներ կան դեպի մյուսները:

---

[49] Ղազար Բաբերդացու աշխատանքին հիմք էին ծառայել իրենից առաջ կատարված նմանները, որոնց մասին գրում է. «Թէպէտ գոյր մեզ յառաջագոյն կարճառօտ ցանկեր ի նախնեացն մեր և ի տէր Դաւիթ իմաստուն քահանայէն, բայց ցիր և ցան գոլով յայլ և յայլ տեղիս. բայց մեք աշխատութեամբ ժողովեցաք ի մի տուի, իբրև զփունջ մի վարդից և ըստ այբուբենից ի վերայ շարադրեցաք, վասն այլ առաւել դիւրագիտ լինելոյ ուսումնասիրացդ», տես. № 351, էջ 3բ: Հիշատակվող Դավիթ քահանան՝ հայտնի մանկավարժ-հեղինակ Դավիթ Զեյթունցին է, որ «այր գիտնական և քաջ փիլիսոփայ էր, յոյժ հմուտ Հին և Նոր Կտակարանաց» և ԺԷ դարի սկզբներին Լվովում էր ապրում, բայց 1620 թվականին հիշվում է որպես արդեն մահացած, տես Հ. Ղ. Ալիշան, «Կամենից», Վենետիկ, 1896, էջ 175:

Ղազար Բաբերդացուց հետո լատինական Վուլգատայի համաբարբառների հետքերով հանդես եկավ Ոսկան Երևանցին, որը հայկական Աստվածաշնչի առաջին տպագրությունն է կատարել Ամստերդամում 1666 թվականին[50]: Նրա հրատարակության մեջ գլխաբաժանումներն ուղղակի լատինականով էին տրված: Այնտեղ կար նախ «Ցանգ վկայութեանց ... ներ Նորում Կտակարանում համառօտեցելոց ի Հնոյն» (Բ մաս, էջ 760—765): Այս ցուցակն ասում էր, թե Հին Կտակարանի յուրաքանչյուր գրքից քանի՛ հիշատակություն կամ մեջբերում կա Նոր Կտակարանում. օրինակ՝ Ծննդոց գրքի Բ. 25 տան **(«Եղիցին երկոքեանն ի մարմին մի»)** համեմատության համար ցույց էր տրվում երեք տեղ՝ Մատթ. ԺԹ. 5, Մարկ. Ժ. 8 և Առաջին Կորնթ. Զ. 16: Ոսկանի հրատարակությունն ուներ նաև այբբենական այն նույն ցուցակը, որը Ղազար Բաբերդացու մոտ կոչվում էր «ըստ Լատինացւոց», բայց այստեղ նոր թարգմանությամբ էր բերված և կրում էր «Ցանգ մատենական» անունը (Բ մաս, էջ 774—829): Միջլուսանցային հղումների կարգը ևս նույնությամբ կար այստեղ, ինչպես էր Ղազար Բաբերդացու մոտ: Ոսկան Երևանցին այս բոլորը նույնությամբ տպել էր նաև իր հրատարակած Նոր Կտակարանում՝ Ամստերդամ, 1668 թվականին[51]. իսկ այնուհետև նրանք արտատպվեցին Աստվածաշնչի և Նոր Կտակարանի հետագա մի քանի հրատարակություններում ևս՝ ԺԸ դարի առաջին կեսում:

Ինչպես տեսնում ենք՝ Ղազար Բաբերդացու և Ոսկան Երևանցու մոտ եղած համաբարբառները լատինական Վուլգատայից էին փոխադրված: Այս փորձերից հետո մեզ մոտ այլևս չեն երևում վերոնշյալ բառացանկային և միջլուսանցային համաբարբառների հետքերը: Միակ ժառանգությունը, որ Ղազար Բաբերդացու և Ոսկան Երևանցու ձեռնարկումներից մնում է հաջորդ սերունդներին, դա լատինական Վուլգատայի գլխակարգություններն ու տնատումներն էին, որոնք այնուհետև սովորական դարձան հայկական Աստվածաշնչի բոլոր հրատարակությունների համար և հիմք ծառայեցին հայկական հետագա բոլոր համաբարբառներին:

ԺԸ դարից սկսում է զարգանալ հայ համաբարբառային ինքնուրույն գրականությունը մեթոդական այն ուղիներով, որոնցով առաջնորդվում էին Արևմուտքում ժամանակակից գիտնականները: Դա համաբարբառի բառարանային եղանակն էր, որի միայն աղավաղված ներկայացուցիչն էր վուլգատյան **բառացանկը:**

Երևանի Պետ. Մատենադարանի № 2099 ձեռագրից մեզ հայտնի է Արզրումեցի Անանիա Ալլահվերդյանի համաբարբառը, որը կազմված է 1709 թվականին Շամախիում՝ «Ցանկ սրբոց չորից աւետարանչացն Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու [և] Յոհաննու: Հաւաքեցեալ ի վերայ յայբբենի, գեմի և դայի մինչև վերջ քէի և օյի, բազում աշխատասիրութեամբ, վասն զի ոչ ունելով օրինակ իմն ցանկի, հազիւ կարացի այսքանս հաւաքել ի սուրբ Աւետարանէ, սակս դիւրաւ գտանելոյ զբանսն յԱւետարանուջ» (էջ 5ա—59բ)[52]:

Սկզբից իսկ պիտի ասել, որ այս ձեռագիրը հեղինակի ինքնագիրը չէ: Ոմն Խաչիկ Հակոբյան մի անգամ այն արտագրել է հեղինակի օրինակից և

---

[50] «Աստուածաշունչ Հնոց և Նորոց Կտակարանաց ներ պարունակող», Ամստերդամ, 1666:

[51] «Նոր Կտակարան սրբոյ Աւետարանի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի», Ամստերդամ, 1668:

[52] Տե՛ս Հ. Ս. Անապյան, «Հայկական մատենագիտություն», հտ. Ա, Երևան, 1959, էջ 718:

Մի հ Սնցիկ Ամբիոնի Սնցիկների ցամքեցման ինքնագրանցիչ 2069 № վերարտադրությունը Մասնիհարտասարդ Վեր. Պետ. Եղեսիի Դեպքը

(թ. 9021) ցնցումներ գրանցող սարքի № 2069

Բաղդասար դպիր Կ. Պոլսեցու Բամբարբառի առաջին էջը (տպ. Կ. Պոլիս, 1758 թ.)

սրբագրության ենթարկել («երկրորդաբար գաղափարեցեալ եղև և սրբագրեցեալ՝ Խաչիկ Յակոբեան»), իսկ դրանից հետո նորից է արտագրել Զուղայեցի Պետրոս Մինասյանը՝ 1734 թվականին Բասրայում («և հետևապէս օրինակեցի ես ոչ սակաւ աշխատութեամբ նուաստ Պետրոս որդի Մինասայ Զուղայեցի, թիւն փրկչին 1734, իսկ թիւն Հայոց ՌՃՁԳ, ապրիլ Ա և շաբաթ Ա, Պասրայ քաղաքուոջ»): Սա է մեզ հայտնի օրինակը՝ ձեռքից ձեռք անցած և լեզվական աղճատումների ենթարկված:

Այս երկն իսկական առումով համաբարբառային առաջին բառարանն է մեզանում, ավելի ճիշտը՝ նման բառարան կազմելու փորձ, որովհետև բոլոր հանգամանքներից երևում է, որ կազմվելու ընթացքի մեջ գտնվող և անավարտ մի աշխատություն է: Այբբենական ոչ խիստ, այլ մոտավոր դասավորությամբ բառերը և բառերի միջոցով բերված վկայությունները դասավորված են, օրինակ, այսպիսի տառախմբերի մեջ. **Գայ, Գալ, Գա, Գե, Գի, Գու, Գն, Գ.** և կամ՝ **Իբ, Իշ, Ի, Իս, Ի** (կրկին): Այսպես և մյուս տառերի շարքում: Այսպիսի տառախմբերի մեջ են մտնում բառերը՝ ըստ իրենց առաջին տառերի. բնագրերից հետզհետե նոր հավաքվող բառերն ուղղակի տեղավորվում են մեկը յուրաքանչյուր տառախմբի տակ ազատ տեղ է թողնված՝ հավելումների համար: Անշուշտ չորս Ավետարանների բառերի լիակատար հավաքումից հետո է, որ բառերը կենթարկվեին այբբենական ճշգրիտ դասավորման:

Համաբարբառում այբբենական շարքի մեջ մտնող բառը բերվում է նախադասության մեջ իրեն հետևող անհրաժեշտ կապակցություններով և այդ կապակցությունների մեջ իր քերականական թեքումներով՝ ըստ թվի, հոլովման և խոնարհման: Օրինակ՝ Էական բայի հետևյալ ձևերը՝ մեկը մյուսի տակ.

Եղիցի ձեր բան այոյ[ն] այո եւ ոչն ոչ	Մատ. Ե. 37
Եղիջիք որդիք հօր ձերոյ որ յերկինս է	Մատ. Ե. 45
Եղերուք կատարեալք որպէս հայրն ձեր	Մատ. Ե. 48
Եղերուք այսուհետեւ խորագէտ իբրեւ	Մատ. Ժ. 16
Եղիջիք ատեցեալք ամենեցուն վասն անու	Մատ. Ժ. 22

Եվ կամ՝

Էին անդ կանայք բազումք ի հեռաստանէ	Մատ. ԻԷ. 55
Էին որք կերին արք հինգ հազարք	Մարկ. Զ. 44
Էին հանապազ ի տաճարին, օրհնէին զԱստուած	Ղուկ. ԻԴ. 53

Այս ձևով բերվում են նաև գոյականներ, ածականներ և խոսքի այլ մասերը ներկայացնող բառեր:

Այս համաբարբառն իր կառուցվածքում ունի մի յուրահատուկ երևույթ, որին՝ առհասարակ չենք պատահում բառարանային այլ համաբարբառներում: Հեղինակն աշխատել է երբեմն շարադասական փոփոխությունների ենթարկել բնագրից բերված նախադասությունը, որպես զի այս կամ այն բառն ընկնի առաջ, և ըստ այնմ՝ միևնույն նախադասությունն այլափոխված կերպարանքով ընկել է մի քանի տեղ: Օրինակ՝ Մատ. ԻԷ. 7 **«Գնեցին այնու զագարակն բրտի ի գերեզման օտարաց»** վկայությունը բերված է միաժամանակ թե՛ **Ագարակ**, թե՛ **Բրտի** և թե՛ **Գնեցին** բառերի տակ՝ հետևյալ ձևերով.

(Շարունակելի)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Լիոն քաղաքի քաղաքագլուխ տիար Լուի Պրադելին 3

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը տ. Նարեկ վարդապետ Շաքարյանին՝ Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ նշանակելու առիթով 5

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանի հիմնադրության հարյուրհիսունամյակը 7

Հայտարարություն 10

Հպտի ուղղափառ եկեղեցու Ն. Ս. Շնուտա Գ նորընտիր Պատրիարքի գահակալության հանդիսությունը 11

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ 14

Հանդիսություններ Մայր Աթոռում՝ նվիրված Կալկաթայի Մարդասիրական ճեմարանի հիմնադրության 150-ամյակին 17

Առաջնորդական տեղապահի նշանակում Շիրակի թեմում 19

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ԹՂԹԱԿԻՑ—Ամավերջի հանդես Ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի և ձեռնադրություն վեց կուսակրոն աբեղաների 21

Գ. Վ. ԱԲԳԱՐՅԱՆ—Մասիսի անվանադրության ավանդություններն ըստ Մովսես Խորենացու և Անանունի 25

Ա. ՔՅՈՇԿԵՐՅԱՆ—Փարիզի Ազգային Մատենադարանի № 79 Գանձարան-Տաղարանը 31

Օ. Ս. ԵԳԱՆՅԱՆ—Երվանդ Լալայանի «Գողթն» աշխատության մեջ հիշատակված ձեռագրերը 42

Կարվանսարայի (Իջևանի) ս. Ամենափրկիչ եկեղեցու ձեռագրերի հավաքածուն 43

Ժ. Մուրիեի «Էջմիածնի մատենադարանը և հայկական ձեռագրերը» . . 44

Ցանկ «Էջմիածին» ամսագրի 1971 թվականի ընթացքում տպագրված նյութերի . . 45

Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆ—Հայ համաբարբառային գրականությունը և հայ մատենագրության համաբարբառը 49

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտադրության 1/XII 1971 թ. Ստորագրված է տպագրության 17/I 1972 թ.

Տպագրական 4 մամուլ, թուղթ 60×84 1/8, պատվեր 375

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1972 թ.

ՍՏԱՑՎԱԾ է 1971 թ.

ՀԱՅԿ ԳՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Գրադարան
Отделение Общественных наук
ԳՐԱԴԱՐԱՆ
Библиотека
Հայկ ԳՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Գրադարան
Наук Арм ССР